

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական
խորհուրդ՝

Ն. Թովմայան
Ա. Գյուլումյան
Ֆ. Թոխյան
Ա. Թունյան
Ա. Խաչատրյան
Ն. Նազարյան
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2(98)
2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1522-1546)

- * ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 353.1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ՓՈՒԽԿԱՊԱԿՑՎԱԾ՝ «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1522, 14 ապրիլի 2020 թվականի).....7
- * 2019 թվականի ՄԱՅԻՄԻ 31-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1523, 28 ապրիլի 2020 թվականի)23
- * 2008 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԿԱՍԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1524, 28 ապրիլի 2020 թվականի)27
- * 2019 թվականի ՄԱՅԻՄԻ 29-ԻՆ ՆՈՒՐ-ՍՈՒԼԹԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍՄԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻՋՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1525, 28 ապրիլի 2020 թվականի)31
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 284-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍՈՎ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ՓՈՒԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՆՈՒՑՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 287-289-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐՈՎ, 385-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՎ, «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՈՐՄԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1526, 28 ապրիլի 2020 թվականի)40

* 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՂԴՂԶՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԴՂԶՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1527, 12 մայիսի 2020 թվականի)59

* 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1528, 12 մայիսի 2020 թվականի).....63

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 66-ՐԴ ԿԵՏԻ՝ ՄԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1529, 12 մայիսի 2020 թվականի)66

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ) 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՐՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՄԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1530, 12 մայիսի 2020 թվականի)83

* 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՍՈՐԲԷԼԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ

- Բեռնափոխադրողների Մասին» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1531, 19 մայիսի 2020 թվականի)105
- * 2019 թվականի Հոկտեմբերի 21-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽՒԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՄԻՅՑԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1532, 19 մայիսի 2020 թվականի).....110
- * 2019 թվականի Հոկտեմբերի 28-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՄԻՅՑԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1533, 19 մայիսի 2020 թվականի).....116
- * 2019 թվականի Նոյեմբերի 18-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻԼԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1534, 19 մայիսի 2020 թվականի).....123
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 թվականի Փետրվարի 7-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԵՂՐԻԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1535, 19 մայիսի 2020 թվականի).....127
- * 2019 թվականի Դեկտեմբերի 20-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1536, 19 մայիսի 2020 թվականի).....134

- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 18-ԻՆ ՄՈՄԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ
 ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
 ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՍՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
 ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳԱՂՏՆԻ, ՓՈՒՍԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1537, 19 մայիսի 2020 թվականի)140

- * 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 27-Ի՝ «ԿՈՒՅՐԵՐԻ, ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ
 ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԿԱՄ ԸՆԹԵՐՑՈՂՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻՍԱՅԻ
 ԱՅԼ ԴժՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ
 ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴՅՈՒՐԱՅՆԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ» ՄԱՐԱՔԵՇԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1538, 26 մայիսի 2020 թվականի).....145

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԲԵՆԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
 ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2013
 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ
 ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՄԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ
 ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1539, 26 մայիսի 2020 թվականի)150

- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՆԼԻՆՈՒՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ
 ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ,
 ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ՄԻՋԵՎ «ԵՎՐՈՊԱԿԱՆ
 ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ
 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՄԻԱՅԻ)
 ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1540, 26 մայիսի 2020 թվականի)156

- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 «ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
 ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ՎԵՐԱՆԱՅՎԱԾ)
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1541, 26 մայիսի 2020 թվականի)163

- * «ՌԱՄՁԵՍ» ՍՊԸ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 47-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1542, 26 մայիսի 2020 թվականի)169
- * 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1543, 9 հունիսի 2020 թվականի).....182
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-ԻՆ ԵՎ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1544, 16 հունիսի 2020 թվականի)186
- * ՈՒՌԴԻԿ ԽՈՋՈՑԱՆԻ ԵՎ ԱՐՏՅՈՄ ԽՈՋՈՑԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1545, 16 հունիսի 2020 թվականի)191
- * ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1546, 18 հունիսի 2020 թվականի)204



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 353.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ՝ «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 ապրիլի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

2(98)/2020
◆ ՍԵՂԵԿՎԱԿԻ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-ին հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին:

Օրենսգրքի վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 353.1. Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջները ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով»:

Հոդվածը լրացվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-321-Ն օրենքով:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի դեկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 31-ին:

Օրենքի վիճարկվող նորմերի բովանդակությունը հետևյալն է.
«Հոդված 7. Անհետաձգելի միջամտության մասին

(...)

3. Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.

(...)

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը. (...):»:

Գործի քննության առիթը ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դիմող) 2019 թվականի հոկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է 2019 թվականի հոկտեմբերի 7-ի ԿԴ/0014/01/19 քրեական գործով «Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին» և «Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումները:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, դիմելով Սահմանադրական դատարան, խնդրում է. «ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածի և դրա հետ փոխկապակցված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ

հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթների գործադրումը որոշ դեպքերում ուղղակիորեն կարող է առնչություն ունենալ անձի սեփականության իրավունքի հետ: Դիմողի պնդմամբ դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ «... բոլոր այն դեպքերում, երբ անհետաձգելի միջամտության որոշմամբ ընտանիքում ենթադրաբար բռնություն գործադրած անձին հարկադրվում է հեռանալ բռնության ենթարկվածի բնակության տարածքից (որը միաժամանակ հանդիսանում է բռնություն գործադրած անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարան) կամ ենթադրաբար բռնություն գործադրած անձին արգելվում է որոշակի հեռավորությունից ավելի մոտենալ բռնության ենթարկվածին (ով շարունակում է բնակվել բռնություն գործադրած անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանում), տեղի է ունենում միջամտություն անձի սեփականության իրավունքին»:

Ըստ Դիմողի՝ քննարկվող իրավիճակներն անխուսափելիորեն հանգեցնում են սեփականության իրավունքի արգելափակման, և անձը տևական ժամանակ (մինչև 20 օր տևողությամբ, իսկ դատարանում պաշտպանական որոշման դիմում քննվելու դեպքում հնարավոր է ավելի երկար ժամկետով) փաստացի զրկվում է իր սեփականության իրավունքի անքակտելի մասը կազմող գույքի օգտագործման իրավունքից:

Դիմողի գնահատմամբ՝ վերոգրյալը ոչ այլ ինչ է, քան տևական ժամանակով անձին սեփականության իրավունքից զրկում, որն Օրենքի գործող իրավակարգավորումների պայմաններում կիրառվում է ոստիկանության ծառայողի կողմից այն դեպքում, երբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասն անվերապահորեն նախատեսել է, որ անձը կարող է զրկվել սեփականությունից բացառապես դատական կարգով:

Միաժամանակ, Դիմողը գտնում է, որ նույնիսկ այն պայմաններում, եթե արձանագրվի, որ անհետաձգելի միջամտության քննարկվող որոշումներով տեղի է ունենում ոչ թե անձի սեփականության իրավունքի զրկում, այլ սահմանափակում, և որ Օրենքի գործող իրավակարգավորումների պայմաններում նման միջամտությունը չի կարող համարվել իրավաչափ այնքանով, որքանով սահմանված չեն գործուն երաշխիքներ սեփականության իրավունքի արդարացված սահմանափակման համար, այդ թվում՝ ապահովված չէ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման

հնարավորությունը, նախատեսված չեն կառուցակարգեր, որոնցով կապահովվի որոշակի տարածքում անձի բնակվելու հնարավորությունը, ինչի հետևանքով քննարկվող միջամտությունը դառնում է անհամաչափ:

Դիմողի պնդմամբ՝ գործող կարգավորումներն անհետաձգելի միջամտության մասին որոշման կայացման դեպքում չեն ապահովում անձի՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Եվ Դիմողի եզրահանգմամբ՝ վիճարկվող դրույթի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ անհետաձգելի միջամտության մասին որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, անձն անհապաղ հեռացվում է իր բնակության վայրից, և նախատեսված չէ տվյալ որոշման գործողությունը կասեցնելու (դադարեցնելու) իրավական հնարավորություն, որպիսի պայմաններում վերջինը գրկվում է իր իրավունքներին միջամտող տվյալ վարչական ակտի իրավաչափությունը դատական կարգով արդյունավետորեն վիճարկելու հնարավորությունից:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Վիճարկվող դրույթները դիտարկելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պատասխանողն արձանագրում է. «ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, այն է՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի, երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար»: Ըստ պատասխանողի՝ «սեփականության իրավունքը սահմանափակելը որպես կանոն ունենում է ժամանակավոր բնույթ, իսկ սեփականությունից զրկելը՝ այնպիսի իրավիճակ է, երբ սեփականատերը փաստացի կամ իրավաբանորեն լրիվ զրկվում է իր տիրույթից, կորցնում է իրի հետ իր կապը»:

Միաժամանակ, վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-630 և ՄԴՈ-903 որոշումներում «սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման» և «սեփականությունից զրկելու» վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված իրավական այն մոտեցումը, ըստ որի «ինչ հիմքով էլ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված համարվել բացառապես այն դեպքում, երբ այն տեղի է ունեցել ի շահ հանրության, և միջամտությունն արդարացված համարվելու համար պետք է հետապնդի օրինաչափ նպատակ և լինի համաչափ», պատասխանողն արձանագրում է, որ Օրենքի վիճարկվող դրույթով տեղի է ունենում ոչ թե սեփականությունից զրկում, այլ անձի սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում:

Տվյալ սահմանափակման սահմանված կարգը, ըստ պատասխանողի, համապատասխանում է Սահմանադրական դատարանի կողմից սահմանված չափանիշներին, քանի որ՝ ա) սեփականության իրավունքի սահմանափակումը նախատեսված է օրենքով, այն է՝ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, բ) սեփականության իրավունքը սահմանափակվել է այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության՝ տվյալ դեպքում՝ ընտանիքի անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով, գ) սեփականության իրավունքի սահմանափակումը համապատասխանում է որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի գերազանցում ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Ամփոփելով վերոգրյալը պատասխանողն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական մեկնաբանություններին և որևէ կերպ չեն հակասում Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Նկատի ունենալով, որ դիմողն ըստ էության բարձրացնում է անձի կողմից Օրենքով նախատեսված որոշակի պահանջները դիտավորությամբ չկատարելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու իրավաչափության հարցը, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- վիճարկվող դրույթներով անձի սեփականության իրավունքը սահմանափակող իրավակարգավորումները համահունչ են արդյոք Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներով ամրագրված համաչափության և որոշակիության սկզբունքներին,

- այդ դրույթներով նախատեսված սահմանափակումները գերազանցում են արդյոք Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, այդ թվում՝ բացահայտելով այդ իրավունքի սահմանափակման հիմնական չափորոշիչները: Մասնավորապես 18.04.2006թ. ՄԴՈ-630 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Բոլոր դեպքերում իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն հասարակության գերակա շահերի և մարդու հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտության միջև»: Նույն որոշման մեջ անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակմանը՝ Սահմանադրական դատարանն ընդգծել է. «Դա ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն: Նման համադրման արդյունքում որևէ կոնկրետ սեփականության օբյեկտի նկատմամբ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել, եթե այն ծառայում է բացառիկ գերակա հանրային շահի բավարարմանը»:

Միաժամանակ, 13.07.2010թ. ՄԴՈ-903 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի «... սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, այլ անձանց, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման

մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ»:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, որը մասնակիորեն առնչվում է նաև սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին: Այսպես, նույն արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասում շեշտվում է, որ անձին իր սեփականությունից անարգել օգտվելու և նրան իր ունեցվածքից միայն ի շահ հասարակության, օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով զրկելու վերաբերյալ դրույթները «(...) չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու (...) համար»: Հիշյալ արձանագրության 1-ին հոդվածի կարգավորումները նախատեսում են երեք հստակ կանոն, որոնցից առաջինն ընդհանուր բնույթի է և սահմանում է սեփականությունից անարգել օգտվելու սկզբունքը, երկրորդ կանոնը կարգավորում է սեփականությունից զրկելու հետ կապված հարաբերությունները, իսկ երրորդ կանոնը ճանաչում է սեփականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պետության իրավունքը՝ ընդհանուր շահին համապատասխան: Ընդ որում, երկրորդ և երրորդ կանոնները, որոնք առնչվում են սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ թույլատրելի միջամտություններին, պետք է դիտարկվեն առաջին կանոնում նախատեսված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (տես՝ AGOSI v. The United Kingdom, 24.10.1986, app. no. 9118/80, § 48, Immobiliare Saffi v. Italy, 28.07.1999, app. no. 22774/93, § 44):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս հիմնվել է հետևյալ հիմնական սկզբունքների ու չափորոշիչների վրա.

ա) սեփականության իրավունքի սահմանափակումը համատեղելի է Կոնվենցիային կից առաջին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր նորմի հետ, եթե ապահովված է «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև,

բ) սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները պետք է բավարարեն «օրինականության պահանջը» և չլինեն «կամայական»,

գ) սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված վիճարկվող միջոցները պետք է նախատեսված լինեն օրենքով կամ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով,

դ) սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցներ նախատեսող օրենքը պետք է բավարարի մի շարք պահանջներ, որոնք ներկայացվում են ինչպես օրենքի որակին ու բովանդակությանը, այնպես էլ այն ընդունած մարմիններին ու նրանց լիազորությունների իրականացման օրինականությանը,

ե) սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները պետք է հետապնդեն հասարակական շահից բխող իրավաչափ նպատակ,

զ) սեփականության իրավունքի սահմանափակման դեպքում պետությունը պարտավոր է պահպանել համամասնության ողջամիտ հարաբերակցությունը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության և ընդհանուր շահի պաշտպանության պահանջների միջև, այսինքն՝ սահմանափակման միջոցը պետք է լինի «ողջամիտ և պատշաճ՝ իր նպատակին հասնելու համար, և համարժեք այդ նպատակին»¹:

Համադրելով Օրենսգրքի վիճարկվող նորմը ու դրա հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենքի մյուս նորմերը Եվրոպական դատարանի նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև հաշվի առնելով սույն գործով դիմումում բարձրացված հարցի առանձնահատկությունը և վերահաստատելով նախկինում ձևավորած իր մտտեցումները Մահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքի

¹ Stu` Latridis v. Greece [GC], 25.03.1999, app. no. 31107/96, § 55, Immobiliare Saffi v. Italy [GC], 28.07.1999, app. no. 22774/93, § 44, Zehentner v. Austria, 16.07.2009, app. no. 20082/02, § 55, Luordo v. Italy, 17.07.2003, app. no. 32190/96, § 86), Sporrang and Lonroth v. Sweden, no. 7151/75; 7152/75 և այլն:

ցանկացած սահմանափակում, ինչ հիմքով էլ այն իրականացվի, կարող է իրավաչափ համարվել միայն հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանության դեպքում.

1) սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորությունը պետք է նախատեսված լինի օրենքով,

2) սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է միտված լինի հանրության շահերի կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը,

3) սեփականության իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար,

4) սեփականության իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է համարժեք լինի սեփականության իրավունքի նշանակությանը,

5) սեփականության իրավունքի սահմանափակման հիմքը և ծավալը սահմանող օրենքը պետք է այնքան որոշակի լինի, որ անձն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարողանա կատարել այդ սահմանափակումից բխող և իր վրա դրված պարտականությունները:

4.2. Օրենսգրքի 353.1-ին հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից Օրենքով նախատեսված որոշակի պահանջները դիտավորությամբ չկատարելու համար: Մասնավորապես՝ Օրենքը դրանց շարքին է դասում անհետաձգելի միջամտության որոշմամբ կամ պաշտպանական որոշմամբ կիրառված այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից անհապաղ հեռանալը և մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը այդտեղ նրա չվերադառնալը կամ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց) որոշակի հեռավորությունից ավելի չմոտենալը (7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետեր, 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 3-րդ կետեր):

Անհետաձգելի միջամտության որոշումը ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհապաղ կայացվում է ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով (7-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ պաշտպանական որոշումը դատարանը կայացնում է ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելու, ինչպես նաև ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով (8-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ընդ որում, անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Այն ուժի մեջ է մտնում ընտանիքում բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելու պահից, իսկ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության իրավասու ծառայողը չի հետանում մինչև ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից իր իրերը հավաքելը և ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրը լքելը: Որոշմամբ ժամանակավորապես սահմանափակվում է բռնություն գործադրած անձի սեփականության իրավունքն իր բնակելի տարածության նկատմամբ, մասնավորապես, այնտեղ բնակվելու իրավունքը: Որոշման բողոքարկումը վերադասության կամ դատական կարգով չի կասեցնում դրա կատարումը (7-րդ հոդվածի 2, 7, 8 և 15-րդ մասեր):

Ինչ վերաբերում է պաշտպանական որոշմանը, ապա այն կայացվում է մինչև վեց ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկու անգամ երկարաձգվել յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով (8-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերոշարադրյալ իրավադրույթների համադրման և համալիր վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ **ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ վիճարկվող նորմերով նախատեսված միջոցների կիրառմամբ կարող են սահմանափակվել նրա կողմից իր սեփականությունը հանդիսացող բնակարանն իր հայեցողությամբ տիրապետելու և օգտագործելու հնարավորությունները:**

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի նման սահմանափակումը նախատեսված է օրենքով, հետապնդում է Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակ, այն է՝ **ընտանիքի մյուս անդամի (անդամների) կյանքի և առողջության ապահովումը, ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելը, ինչպես նաև ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելը, և պիտանի ու անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար:**

4.3. Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ օրենսդիրն ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ սահմանա-

փակման այս կամ այն տեսակն ընտրելիս դրա համաչափության առումով նախատեսել է տարբերակված կարգավորումներ:

Մասնավորապես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասն ընդհանուր ձևով սահմանում է, որ անհետաձգելի միջամտության որոշմամբ կիրառվող սահմանափակման միջոցներն ընտրելիս որոշում կայացնողն առաջնորդվում է սույն օրենքով սահմանված սկզբունքներով՝ ապահովելով սահմանափակման համաչափությունը: Ընդ որում, Օրենքով սահմանված սկզբունքները (2-րդ հոդված) սեփականատիրոջ իրավաչափ շահերի պաշտպանության կամ գոնե դրանք հաշվի առնելու վերաբերյալ որևէ դրույթ չեն պարունակում, իսկ իրավակիրառողի համար սահմանափակման համաչափությունը բացահայտող կամ այդ առումով նրան առնվազն ուղղորդող չափանիշներ Օրենքում առկա չեն:

Մինչդեռ, Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը բավականաչափ հստակ և կոնկրետ նշում է, որ պաշտպանական որոշմամբ ընտանիքում բռնություն գործադրած անձին ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից անհապաղ հեռանալ հարկադրելու և այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն արգելելու սահմանափակման ժամկետը սահմանելիս դատարանը հաշվի է առնում ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց ապաստարան տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը, ընտանիքում բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի մատչելիությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման տարբերակված իրավակարգավորման հիմքում դրված է այնպիսի ողջամիտ չափանիշ, ինչպիսին անհետաձգելի միջամտության որոշման և պաշտպանական որոշման գործողության ժամկետների տարբերությունն է (համապատասխանաբար առավելագույնը քսան օր և տասներկու ամիս): Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դա չի կարող ընտանիքում բռնություն գործադրած անձի համար Օրենքով նախատեսված սահմանափակումների տարբերակված կիրառման միակ և վճռորոշ չափանիշ հանդիսանալ, քանի որ օբյեկտիվորեն կարող են առկա լինել էական այլ հանգամանքներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքում բռնություն գործադրած անձի սեփականության իրավունքը սահմանափակելիս, այդ թվում՝ նման սահմանափակման հետևանքով նրա վրա դրված պարտականությունների կատարման հնարավորության համատեքստում:

Այսպես՝ ի տարբերություն դատարանի կողմից պաշտպանական որոշման կայացման դեպքի՝ Օրենքն անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության իրավասու ծառայողին Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս ուղղակիորեն չի պարտավորեցնում հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, ընտանիքում բռնություն գործադրած անձի բնակության համար անհրաժեշտ այլ վայրի հասանելիությունը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը կամ նպատակահարմարությունը: Ընդ որում, եթե պաշտպանական որոշման կայացման դատական ընթացակարգի շրջանակներում անձը ողջամտորեն կարող է ունենալ բավականաչափ ժամանակ և հնարավորություններ՝ համապատասխան փաստարկներ բերելու և դրանք հիմնավորելու համար, ապա ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու պարագայում անձի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության գործիքներն ըստ էության բացակայում են այդ որոշման կայացման, ուժի մեջ մտնելու, անհապաղ կատարման և չկասեցման առանձնահատուկ իրավակարգավորումների պատճառով:

Նկատի ունենալով, որ վիճարկվող նորմերով նախատեսված միջոցների կիրառմամբ կարող են սահմանափակվել անձի կողմից իր սեփականությունը հանդիսացող բնակարանն իր հայեցողությամբ տիրապետելու և օգտագործելու հնարավորությունները, Մահմանադրական դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն պետք է ապահովվի նաև սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս: Այլ կերպ ասած՝ կարևոր է այն հարցի պարզումը, թե արդյոք առկա է արդարացի հավասարակշռություն ընդհանուր շահի և անհատի շահի միջև: Արդարացի հավասարակշռությունը պարզելու առնչությամբ պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ և՛ կիրառվող միջոցների ընտրության, և՛ ընդհանուր շահի համատեքստում նշված միջամտության արդարացվածությունը որոշելու հարցում (տես՝ J.A. Pye (Oxford) Ltd and J.A.Pye (Oxford) Land Ltd v The United Kingdom, 30.08.2007, app. no. 44302/02, § 75):

Հետևաբար, Մահմանադրական դատարանը գտնում է, որ **նման կանոնակարգման պայմաններում ընտանիքում բռնություն գործա-**

դրած անձի սեփականության իրավունքը սահմանափակող միջոցի կիրառումը սեփականատիրոջ և այլոց իրավունքների միջև ողջամիտ հավասարակշռություն չի ապահովում և համարժեք չէ սեփականության իրավունքի նշանակությանը:

4.4. Այս համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև անհետաձգելի միջամտության որոշման կամ պաշտպանական որոշման պահանջներն ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից չկատարելու իրավական հետևանքներին, մասնավորապես դրա համար նախատեսված քրեական պատասխանատվությանը:

Օրենսգրքի 353.1-ին հոդվածը սահմանում է բլանկետային դիսպոզիցիայով հանցակազմ, այսինքն՝ դրա համար քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ անձը դիտավորությամբ չի կատարի մեկ այլ իրավական ակտով, տվյալ դեպքում՝ Օրենքով նախատեսված պահանջները:

Քրեական պատասխանատվություն նախատեսելու այսպիսի կառուցակարգը նշանակում է, որ անձը, իմանալով իր վրա դրված որոշակի պարտականությունների մասին և ընկալելով վերջիններիս բովանդակությունը, գիտակցաբար չի կատարում դրանք: Սակայն այն նաև ենթադրում է, որ անձի՝ ակնկալվող վարքագծին ներկայացվող պահանջները պետք է լինեն ոչ միայն որոշակի և կանխատեսելի, այլև օբյեկտիվորեն իրականանալի: Այսինքն՝ բարեխիղճ անձի համար օբյեկտիվ իրականության մեջ պետք է ոչ միայն համապատասխան պահանջը կատարելու իրական և ողջամիտ հնարավորություն լինի, այլև անձը հարկադրաբար չպետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ կամ չպետք է կրի այնպիսի զրկանքներ, որոնք չարդարացված կերպով անհամաչափ վնաս կհասցնեն նրա հիմնական իրավունքներին և ազատություններին:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ անհրաժեշտ հավասարակշռության հարցը պարզելու համար էական է այն հանգամանքը, թե արդյոք պետության գործողությունների կամ անգործության պատճառով տվյալ անձը ստիպված է եղել կրել անհամաչափ և ավելորդ բեռ (տես՝ Broniowski v. Poland, 22.06.2004, app. no. 31443/96, § 150, Sporrang and Lönnroth v. Sweden, 23.09.1982, app. no. 7151/75, 7152/75, § 73): Համաչափության թեստի նպատակն է նախևառաջ պարզել, թե միջամտության արդյունքում ինչպես և ինչ չափով է սահմանափակվել դիմումատուի իրավունքը, և դրա արդյունքում ինչպիսի անբարենպաստ հետևանքներ են վրա հասել նրա համար: Հետագայում, այդ ազդեցությունը հավասարակշռվում

է միջամտության հիմքում ընկած հանրային շահի կարևորությամբ: Նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք հնարավոր էր հասնել նույն նպատակին դիմումատուի իրավունքների նկատմամբ նվազ միջամտությամբ, և արդյոք դիտարկվել է այդպիսի լուծման հնարավորությունը (տես՝ *Vaskrsic v. Slovenia*, 25.04.2017, app. no. 31371/12, § 83):

Մինչդեռ, այլ վայրում բնակվելու ողջամիտ հնարավորության բացակայության կամ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ նույն վայրում բնակվելու դեպքում նրան որոշակի հեռավորությունից ավելի չմոտենալու օբյեկտիվ անհնարինության դեպքում ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ քրեական պատժի տեսքով անբարենպաստ իրավական հետևանքներ կիրառելու սպառնալիքը նրան անհամաչափորեն կարող է դնել այնպիսի վիճակի մեջ, երբ վերջինս ստիպված կլինի ընտրություն կատարել վատի և ավելի վատի միջև: Այսինքն՝ չունենալով այլ վայրում ապրելու հնարավորություն՝ անձը ստիպված պետք է վերադառնա իր սեփականությունը հանդիսացող բնակության վայր՝ դրանով իսկ կատարելով քրեորեն պատժելի արարք:

Հատկանշական է, որ նման վիճակում անձը կարող է հայտնվել անկախ այն հանգամանքից, թե հետագայում նա պատասխանատվության կենթարկվի, թե՛ կարդարացվի իրեն վերագրվող իրավախախտման համար կամ կհաշտվի ընտանիքում բռնության ենթարկված անձի հետ, թե ոչ:

Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտանիքում բռնություն գործադրած անձի բնակարանի սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված անհետաձգելի միջամտության որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվի նաև որոշակի փաստական հանգամանքների համակցության պայմաններում նրա վրա դրվող պարտականությունները (նրան ներկայացվող պահանջները) կատարելու օբյեկտիվ հնարավորությունը: Հակառակ դեպքում, Օրենքով նախատեսված պահանջներն անձի համար չեն լինի բավականաչափ որոշակի, և նա ի վիճակի չի լինի դրսևորել համապատասխան վարքագիծ, այն է՝ քրեական պատասխանատվության չենթարկվելու համար օբյեկտիվորեն և ողջամտորեն կատարել համապատասխան սահմանափակումից բխող և իր վրա դրված պարտականությունները:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 353.1-ին հոդվածը և «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով նախատեսված սահմանափակումներն ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվել նրա բնականության համար անհրաժեշտ այլ վայրի մատչելիությունը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

14 ապրիլի 2020 թվականի
ՍԴՈ-1522



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 31-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 ապրիլի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի մայիսի 31-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հիմնարար հետազոտությունների ոլորտում միջպետական հարաբերությունների համա-

2(98)/2020
◆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԾ

կարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հիմնարար հետազոտությունների ոլորտում միջպետական հարաբերությունների համակարգման մասին» համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի մայիսի 31-ին:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն Վտանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

ա) կողմերի հետ ընդունել համատեղ գործունեության արդյունավետ համակարգումն ապահովող միջոցներ՝ ուղղված գիտնականների, հիմնարար հետազոտություններ իրականացնող Համաձայնագրի մասնակից պետությունների կազմակերպությունների և կողմերի ֆոնդերի միջև մշտական շփումների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ինչպես նաև նպաստել գիտական փորձի տարածմանը աշխարհում և գիտության հանրային մակարդակի բարձրացմանը,

բ) համագործակցության զարգացման նպատակով համակողմանի աջակցություն տրամադրել Համաձայնագրի մասնակից պետությունների կազմակերպություններին, այդ թվում՝ նաև հետևյալ գերակա ուղղություններով.

- ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտություններ, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ,
- նոր նյութեր, այդ թվում՝ նանոտեխնոլոգիաներ և նանոնյութեր,
- երկրի, կյանքի մասին գիտություններ, այդ թվում՝ կենսաբանություն, գյուղատնտեսություն և բժշկություն, բիոտեխնոլոգիաներ և գենային ինժեներիա,
- իւելամիտ բնօգտագործում և շրջակա միջավայրի պահպանություն, կլիմայական փոփոխությունների, այդ թվում՝ սառցալեռների ուսումնասիրություն,

- էներգետիկա, այդ թվում՝ միջուկային, այլընտրանքային և վերականգնվող, մեքենաշինություն և սարքաշինություն,
- սոցիալ-տնտեսական և հումանիտար գիտություններ,
- տիեզերքի ուսումնասիրություն,
- կողմերի կողմից համաձայնեցված հիմնարար հետազոտությունների այլ առաջնային ուղղություններ,
- գ) կողմերի հետ փոխշահավետ և իրավահավասար հիմքի վրա պայմանավորվածությամբ հիմնարար հետազոտությունների ոլորտում համագործակցությունը զարգացնել հետևյալ ձևերով՝
 - համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացում,
 - Համաձայնագրի մասնակից պետություններում գիտնականների ու հետազոտողների գիտական այցերի և վերապատրաստումների կազմակերպում, այդ թվում՝ հիմնարար հետազոտություններ իրականացնելու նպատակով երիտասարդ գիտնականների և մասնագետների ներգրավում,
 - հիմնարար հետազոտությունների ոլորտում տեղեկատվության փոխանակում,
 - համատեղ լաբորատորիաների, հիմնարար հետազոտությունների գիտական կենտրոնների և սարքավորումների խմբային օգտագործման կենտրոնների ստեղծում,
 - գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների, սեմինարների, համաժողովների և այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում,
 - կողմերի միջև փոխհամաձայնեցված այլ ձևեր,
- դ) նպաստել Հայաստանի Հանրապետության տարածքում Համաձայնագրի դրույթների իրագործման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմանը, փոխանակմանը և տարածմանը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային պայմանագրերին համապատասխան,
- ե) նպաստել հիմնարար հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության աճին, հիմնարար հետազոտություններ իրականացնող գիտական կադրերի մասնագիտական պատրաստման որակի բարձրացմանը, այդ թվում՝ համատեղ հետազոտություններ իրականացնող երիտասարդ գիտնականների մրցույթներին, հիմնարար հետազոտությունների կազմակերպման ազգային և միջազգային փորձի ուսումնասիրմանը, գիտական կադրերի շարժունակության զարգացմանը, աշխատանքի մեջ ժամանակակից առաջադեմ մոտեցումների և մեթոդների ներդրմանը, գիտական ներուժի պահպանմանը և միջազգային գիտական միջավայրում վերջինիս ներդրմանը,

զ) ապահովել մտավոր սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության միջոցները, ինչպես նաև համապատասխան բնույթի տեղեկատվության գաղտնիության ապահովումն այն կարգով, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պարտավորություններով,

է) որոշել լիազորված մարմին (կազմակերպություն), որի վրա դրվում է Համաձայնագրի իրականացումը, և այդ մասին տեղեկացնել ավանդապահին՝ միաժամանակ զրավոր ծանուցելով ներպետական ընթացակարգերի իրականացման մասին, որոնք անհրաժեշտ են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և ի թիվս այլնի նպատակ ունեն զարգացնել և ամրապնդել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ընդհանուր գիտական տարածքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի մայիսի 31-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հիմնարար հետազոտությունների ոլորտում միջպետական հարաբերությունների համակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

28 ապրիլի 2020 թվականի
ՍԴՈ-1523



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ
ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 ապրիլի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Բ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի փետրվարի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կամրնտիր արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամրնտիր արձանագրությունը (Կամրնտիր արձանագրություն) ստորագրվել է 2008 թվականի դեկտեմբերի 10-ին:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (Դաշնագիր) Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ից:

Կամրնտիր արձանագրությամբ հնարավորություն է ընձեռվում Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին (Կոմիտե) իրականացնելու Կամրնտիր արձանագրությամբ նախատեսված գործառույթներ, մասնավորապես՝ քննարկել Կամրնտիր արձանագրությամբ նախատեսված կարգով ստացված հաղորդագրությունները: Այդ հաղորդագրությունները կարող են ներկայացվել կողմ պետության իրավագործության ներքո գտնվող այն անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ նրանց անունից, որոնք պնդում են իրենց այդ կողմ պետության կողմից թույլ տրված Դաշնագրով սահմանված տնտեսական, սոցիալական ու մշակութային որևէ իրավունքի խախտման գոհ լինելը:

2. Կամրնտիր արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

ա) ճանաչել Կոմիտեի՝ Կամրնտիր արձանագրության դրույթներով նախատեսված կարգով հաղորդագրություններ ստանալու և քննարկելու իրավասությունը,

բ) Կոմիտեի կողմից խորհրդապահական կերպով Հայաստանի Հանրապետության ուշադրությանը ներկայացված հաղորդագրու-

թյան կապակցությամբ վեց ամսվա ընթացքում գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ ներկայացնել Կոմիտեին՝ պարզաբանելով համապատասխան հարցը և առկայության դեպքում՝ այն իրավական պաշտպանության միջոցները, որոնք կարող էին տրամադրվել Հայաստանի Հանրապետության կողմից,

զ) պատշաճ կերպով ուսումնասիրել Կոմիտեին ներկայացված հաղորդագրության վերաբերյալ Կոմիտեի կարծիքներն ու առաջարկությունները և վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնել գրավոր պատասխան, այդ թվում՝ Կոմիտեի կարծիքների ու առաջարկությունների լույսի ներքո ձեռնարկված ցանկացած գործողության վերաբերյալ տեղեկատվություն,

ը) ձեռնարկել բոլոր պատշաճ միջոցները՝ երաշխավորելու համար, որ իր իրավագործության ներքո գտնվող անհատները չենթարկվեն որևէ տեսակի վատ վերաբերմունքի կամ ահաբեկման՝ Կամրնտիր արձանագրության համաձայն Կոմիտեի հետ իրականացվող հաղորդակցման հետևանքով,

ե) լայնորեն իրազեկել ու տարածել Դաշնագիրն ու Կամրնտիր արձանագրությունը, ինչպես նաև դուրացնել Կոմիտեի կարծիքների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող հարցերի մասով, և այն իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով:

3. Կամրնտիր արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և ի թիվս այլնի նպատակ ունեն ապահովել «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի դրույթների կիրարկումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2008 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

28 ապրիլի 2020 թվականի
ՍԴՈ-1524



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-ԻՆ ՆՈՒՐ-ՍՈՒԼԹԱՆ
ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 ապրիլի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի մայիսի 29-ին Նուր-Սուլթան քաղաքում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապ-

2(98)/2020
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԿԻՐ

րանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի փետրվարի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի մայիսի 29-ին Նուր-Սուլթանում՝ մաքսային և հարկային վճարների վճարումից խուսափելու տարբեր սխեմաների օգտագործումը բացառող պայմաններ ստեղծելու, մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք ապրանքներ տեղափոխելիս դրանց շրջանառության օրինականությունը հաստատելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

1) Համաձայնագրին համապատասխան՝ հետազոտելիությունն իրականացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկում (այսուհետ, համապատասխանաբար՝ Հանձնաժողով, ցանկ) ընդգրկված, Միության մաքսային տարածք ներմուծված հետևյալ ապրանքների նկատմամբ.

- «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ,

- «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնք առգրավվել են կամ այլ ձևով դարձել են պետության սեփականություն (եկամուտ),

- «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնք դատարանի որոշմամբ բռնագրավվել են մաքսատուրքերի, հարկերի,

հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին,

- Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված և այդ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց կողմից սահմանված ժամկետներում չպահանջված ապրանքների նկատմամբ (հոդված 2, կետ 2).

2) հետազոծելիություն չիրականացնել

- մանրածախ առևտրում իրացված՝ հետազոծելիության ենթակա ապրանքների նկատմամբ,

- հետազոծելիության ենթակա այն ապրանքների նկատմամբ, որոնց մասին տեղեկությունները պարունակում են ՀՀ օրենսդրության համապատասխան պետական գաղտնիքի (պետական գաղտնիքների) շարքին դասվող տեղեկատվություն.

- հետազոծելիության ենթակա ապրանքների նկատմամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում (հոդված 2, կետ 6).

3) հետազոծելիության մեխանիզմի շրջանակներում ապահովել հետազոծելիության ազգային համակարգերից տեղեկությունների փոխանակումը՝ Համաձայնագրին համապատասխան (հոդված 3, կետ 1),

4) հետազոծելիության ազգային համակարգում պարունակվող՝ հետազոծելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված՝ տարբեր անդամ պետությունների անձանց միջև կատարվող գործառնությունների մասին տեղեկությունների փոխանակումը կատարել կանոնավոր՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան (հոդված 3, կետ 2),

5) հետազոծելիության ազգային համակարգից տեղեկությունների փոխանակումն ապահովել Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ (հոդված 3, կետ 3),

6) հետազոծելիության ազգային համակարգի ստեղծումն ու դրա գործունեության ապահովումը ՀՀ կողմից իրականացնել Համաձայնագրին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ էլեկտրոնային տեսքով, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ (հոդված 4, կետ 1),

7) հետազոծելիության ազգային համակարգում ներառել հետազոծելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկություններ (հոդված 4, կետ 2),

8) հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունները ներառել հետազոտելիության ազգային համակարգում առնվազն այն ծավալով, որն անհրաժեշտ է Համաձայնագրի 8-րդ և 9-րդ հոդվածներին համապատասխան հետազոտելիության ազգային համակարգից տեղեկությունների փոխանակման համար (հոդված 4, կետ 5),

9) երաշխավորել, որ հետազոտելիության ազգային համակարգն ապահովի

- հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունների լրիվությունը,

- հետազոտելիության ենթակա ապրանքների հաշվառումը՝ ցանկով նախատեսված չափման քանակական միավորների օգտագործմամբ,

- ուղեկցող փաստաթղթի և այն փաստաթղթի միջև փոխկապվածությունը, որի հիման վրա ապրանքների մասին տեղեկությունները ներառվել են հետազոտելիության ազգային համակարգում (ապրանքների հայտարարագիր, մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմում, Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթեր),

- հաջորդ ուղեկցող փաստաթղթի փոխկապվածությունը նախորդ ուղեկցող փաստաթղթի հետ,

- հետազոտելիության ազգային համակարգում պարունակվող տեղեկությունների ամբողջականությունը,

- հետազոտելիության ենթակա ապրանքների (ապրանքների խմբաքանակի) փաստաթղթային նույնականացումը անդամ պետությունների օրենսդրության համապատասխան դրանց շրջանառության ժամանակ (հոդված 4, կետ 6)։

10) հետազոտելիության ազգային համակարգում ներառել տեղեկություններ.

- ապրանքների հայտարարագրից, ապրանքների հայտարարագրերի ճշգրտումներից, մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումից (Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների մասով),

- այն փաստաթղթերից, որոնց հիման վրա Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված՝ հետազօծելիության ենթակա ապրանքները, անդամ պետությունների օրենսդրության համապատասխան, ներառվում են հետազօծելիության ազգային համակարգում,

- ուղեկցող փաստաթղթերից, այդ թվում՝ ճշգրտված ուղեկցող փաստաթղթերից,

- հետազօծելիության վերսկսումը հաստատող փաստաթղթերից՝ Համաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան,

- անդամ պետությունների օրենսդրությամբ և (կամ) Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսված այլ փաստաթղթերից,

- այլ անդամ պետությունների հետազօծելիության ազգային համակարգերից (հոդված 5, կետ 1)։

11) Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը սահմանել ՀՀ օրենսդրությամբ (հոդված 5, կետ 2),

12) Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1-5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերից տեղեկությունները հետազօծելիության ազգային համակարգում ներառել այն ժամկետներում, որոնք սահմանվում են՝

- Հանձնաժողովի կողմից՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերում նշված փաստաթղթերից տեղեկությունների առնչությամբ,

- ՀՀ օրենսդրությամբ՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերից տեղեկությունների առնչությամբ,

- ՀՀ օրենսդրությամբ և (կամ) Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված փաստաթղթերից տեղեկությունների առնչությամբ (հոդված 5, կետ 3)։

13) տեղեկությունները հետազօծելիության ազգային համակարգ մուտքագրելու համար պատասխանատու անձանց սահմանել ՀՀ օրենսդրությամբ (հոդված 5, կետ 5),

14) հետազօծելիությունը դադարեցնել հետազօծելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված վերջին գործառնության մասին տեղեկությունները հետազօծելիության ազգային համա-

կարգում ներառելու օրվանից 5 տարին լրանալուց հետո, իսկ եթե այդպիսի գործառնություններ չեն իրականացվել, ապա հետագծելիության ազգային համակարգում այն տեղեկությունների մուտքագրման օրվանից 5 տարին լրանալուց հետո, որոնք մուտքագրվել են ապրանքների այն հայտարարագրից կամ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելուց առաջ ապրանքների բացթողման մասին դիմումից, որոնցով այդ ապրանքները ձևակերպվել էին «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, կամ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթից, կամ հետագծելիության ենթակա ապրանքների առանձին կատեգորիաների առնչությամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ պակաս տևողությամբ ժամկետի լրանալուց հետո (հոդված 6, կետ 1),

15) մինչև Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված կամ նույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետի լրանալը հետագծելիությունը դադարեցնել, եթե հետագծելիության ենթակա ապրանքները հանվել են ցանկից (հոդված 6, կետ 2),

16) Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված կամ նույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետը լրանալուց հետո կամ հետագծելիության ենթակա ապրանքները մանրածախ առևտրի նպատակով փոխանցելու դեպքում հետագծելիության դադարումից հետո և (կամ) նույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում հետագծելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված գործառնություններ կատարելու դեպքում հետագծելիությունը վերսկսել (հոդված 6, կետ 5),

17) հետագծելիության ենթակա ապրանքները ՀՀ տարածքից տեղափոխվելու պարագայում ապահովել հետագծելիության ազգային համակարգում պարունակվող՝ հետագծելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված տարբեր անդամ պետությունների անձանց միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների ուղարկումն այն անդամ պետություն, որի տարածք են տեղափոխվում այդ ապրանքները, և այն անդամ պետություններ, որոնց տարածքներով ենթադրվում է իրականացնել հետագծելիության ենթակա ապրանքների փոխադրում, ինչպես նաև այլ անդամ պետություններ, եթե դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ (հոդված 8),

18) ապահովել հետազոծելիության ՀՀ ազգային համակարգում առկա՝ հետազոծելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք այդպիսի ապրանքների տեղափոխմանը նախորդող գործառնությունների մասին տեղեկությունների տրամադրումը (հոդված 9, կետ 1),

19) ապահովել հետազոծելիության ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն՝ ՀՀ օրենսդրության համապատասխան (հոդված 11, կետ 3),

20) ապահովել, որ ՀՀ պետական իշխանության մարմինները հետազոծելիության ազգային համակարգում ներառված՝ հետազոծելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունները օգտագործեն միայն հետազոծելիության նպատակներով՝ Համաձայնագրին համապատասխան: Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ նշված տեղեկությունները ՀՀ պետական իշխանության մարմինների կողմից ոչ իրավաչափ տարածվելուց պաշտպանելու համար և ապահովել այդ տեղեկություններին հասանելիություն ունեցող անձանց շրջանակի սահմանափակումը, ինչպես նաև դրանց պաշտպանությունը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 12, կետ 1),

21) ապահովել, որ ՀՀ պետական իշխանության մարմինները և (կամ) կազմակերպությունները, որոնք սահմանվել են Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ինչպես նաև անդամ պետությունների՝ Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետում նշված ՀՀ պետական իշխանության մարմինները, որոնք, Համաձայնագրին համապատասխան, հասանելիություն են ստացել հետազոծելիության ազգային համակարգերում ներառված տեղեկություններին, դրանց պաշտոնատար անձինք (աշխատողները) չհրապարակեն, անձնական նպատակներով չօգտագործեն կամ այլ անձանց (այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմիններին) չփոխանցեն առևտրային, հարկային, բանկային և ՀՀ օրենսդրությամբ պաշտպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկատվություն, ինչպես նաև այլ կոնֆիդենցիալ տեղեկատվություն՝ բացառությամբ Համաձայնագրին համապատասխան այդ տեղեկատվության փոխանցման, և (կամ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում (հոդված 12, կետ 2),

22) ապահովել, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ կառավարությունը սահմանի՝

- ՀՀ պետական իշխանության այն մարմինը, որը լիազորված է ապահովելու հետազոտելիության մեխանիզմի իրագործման համակարգումը Համաձայնագրին համապատասխան,

- ՀՀ պետական իշխանության այն մարմինը կամ կազմակերպությունը, որը լիազորված է ապահովելու հետազոտելիության ազգային համակարգում ներառվող տեղեկությունների հավաքումը, հաշվառումը, պահպանումն ու մշակումը և (կամ) հետազոտելիության մեխանիզմի իրագործումը (հոդված 13, կետ 1),

23) Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետական իշխանության մարմինների և (կամ) կազմակերպությունների սահմանման օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում դրանց մասին տեղեկացնել Հանձնաժողովին (հոդված 13, կետ 2),

24) ապահովել, որ ՀՀ պետական իշխանության մարմինը, որը նշված է Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում, իր սահմանման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում Հանձնաժողովին տեղեկացնի ուղեկցող փաստաթղթի անվանման մասին, որից տեղեկությունները ներառվում են հետազոտելիության ազգային համակարգում (հոդված 13, կետ 3),

25) հետազոտելիության մեխանիզմի ներդրումն իրականացնել փուլ առ փուլ (հոդված 14, կետ 1),

26) ապահովել, որ առաջին փուլում հետազոտելիության մեխանիզմը գործի պիլոտային ծրագրի շրջանակներում (հոդված 14, կետ 2),

27) հետազոտելիության մեխանիզմի ներդրման պիլոտային ծրագրի իրագործումն սկսել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիսը լրանալուց հետո, բայց ոչ շուտ, քան նշված օրվան հաջորդող ամսվա 1-ին օրը (հոդված 14, կետ 3),

28) պիլոտային ծրագրի իրագործումն սկսելու օրվանից ապահովել հետազոտելիության ազգային համակարգերի գործունեությունը պիլոտային ծրագրի շրջանակներում՝ հետազոտելիության մեխանիզմի իրագործման համար անհրաժեշտ ծավալով (հոդված 14, կետ 4):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետու-

թյունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**:

1. 2019 թվականի մայիսի 29-ին Նուր-Սուլթան քաղաքում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտչության մեխանիզմի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

28 ապրիլի 2020 թվականի
ՍԴՈ-1525



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 284-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ
ՄԱՍՈՎ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՆՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
287-289-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ, 385-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՎ,
«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐՈՎ
ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՆՈՐՄԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 ապրիլի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մասով և դրա հետ փոխկապակցված նույն օրենսգրքի 287-289-րդ հոդվածներով, 385-րդ հոդվածի 2-րդ մասով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը» վերտառությամբ 284-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Հարցի քննարկման արդյունքներով դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու՝ թույլտվություն տալու կամ միջնորդությունը մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Համապատասխան նյութերը դատարանը վերադարձնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին»:

Օրենսգրքի 287-289-րդ հոդվածները սահմանում են.

«Հոդված 287. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը

1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:

2. Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, դատարանի հասցեագրված բողոքներ ստանալով, պարտավոր է գրանցել դրանք և ուղարկել ըստ ընդդատության՝ այդ մասին տեղյակ պահելով հսկող դատախազին:

3. Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը»:

Հոդվածը փոփոխվել է 25.05.06 թ. ՀՕ-91-Ն օրենքով:

«**Հոդված 288.** Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը

1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

2. Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին:

4. Նիստի սկզբում նախագահող դատավորը հայտարարում է, թե ինչպիսի բողոք է քննվելու, ներկայացնում է դատարան ներկայացած անձանց և նրանց պարզաբանում է իրենց իրավունքները և պարտականությունները: Այնուհետև դիմողը, եթե նա մասնակցում է բողոքի քննությանը, հիմնավորում է բողոքը, որից հետո լսում են նիստին ներկա գտնվող այլ անձանց:

5. Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին,

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին,

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին:

6. Այն դեպքում, երբ նիստին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին:

7. Դատարանի որոշման պատճենն ուղարկվում է դատախազին և դիմողին, իսկ անձին կալանքից ազատելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին՝ անհապաղ կատարման համար:

8. Բողոքն առանց բավարարման թողնվելու դեպքում դատարանի կողմից սույն գործով սույն անձի բողոքի կրկին քննում, սույն հոդվածով սահմանված կարգով, թույլատրվում է կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու յուրաքանչյուր դեպքում»:

Հոդվածը փոփոխվել է 25.05.06 թ. ՀՕ-91-Ն օրենքով:

«Հոդված 289. Քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու, ինչպես նաև դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումների բողոքարկումը և ստուգումը

Քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու, ինչպես նաև դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը, բացառությամբ սույն օրենսգրքի 289.1-ին հոդվածով նախատեսված դեպքերի, կատարվում են սույն օրենսգրքի 287 և 288 հոդվածներով նախատեսված կանոններով»:

Հոդվածը լրացվել է 16.01.18 թ. ՀՕ-69-Ն օրենքով:

Օրենսգրքի՝ «Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները» վերտառությամբ 385-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Բացառությամբ սույն օրենսգրքի 45¹ գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է

2007 թվականի հոկտեմբերի 22-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի նոյեմբերի 19-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 8-ից:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերի և փաստաթղթերի հրապարակայնությունը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը:

2. Նշված նյութերը և փաստաթղթերը տրամադրելը մերժվում է, եթե առկա է պետական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման վտանգ, կամ երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձինք»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է նույն դատարանի 2019 թվականի նոյեմբերի 5-ի ԵԴ-9 գործով «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով Օրենսգրքի և Օրենքի համապատասխան դրույթները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Հղումներ կատարելով Սահմանադրության 33-րդ, 63-րդ, 67-րդ, 79-րդ, 81-րդ և այլ հոդվածներին, վերլուծելով Օրենսգրքի, Օրենքի ինչպես վիճարկվող, այնպես էլ վերջինիս հետ փոխկապակցված այլ իրավակարգավորումներ, վկայակոչելով Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, մեջբերելով, մասնավորապես, Օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ դիմողը գտնում է, որ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը հիմնավորող համապատասխան նյութերը հետազոտելուց հետո դրանք օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին դատարանի կողմից վերադարձվելու և վերաքննիչ բողոքը քննարկելիս միջնորդությունը հիմնավորող այդ նյութերը չներկայացվելու, իսկ ներկայացվելու դեպքում առաջին և վերաքննիչ ատյանների դատարաններ ներկայացված նյութերը նույնականացնելու անհնարինությունը նախատեսող իրավակարգավորմամբ՝ առաջին ատյանի դատարանում վերոնշյալ միջնորդության դռնփակ քննարկմանը պաշտպանական կողմի մասնակցության հնարավորության բացակայության դեպքում՝

- անձը զրկվում է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատական քննության իրավունքներից, «երբ վերաքննիչ ատյանում վիճարկվում է ինչպես փաստի, այնպես էլ իրավունքի հետ կապված հարց»,

- Վերաքննիչ քրեական դատարանը զրկվում է արդարադատություն իրականացնելու, «այն է՝ մրցակցային դատավարության պայմաններում վերաքննիչ բողոքը քննելու և վիճարկվող դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների, գործում եղած ապացույցների սահմաններում դատական ստուգման ենթարկելու, հիմնավորված, պատճառաբանված և օրինական դատական ակտ կայացնելու իրական հնարավորություններից»:

Վկայակոչելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավակարգավորումը՝ դիմողը գտնում է, որ մինչդատական կամ դատական վարույթի շրջանակներում այն չի ընձեռում

վարույթն իրականացնող մարմնի ակտն անձին հասու դառնալու պահից մինչև գործով վերջնական, այդ թվում՝ մեղադրող դատական ակտ կայացնելը, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու համար առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերին ծանոթանալու և մինչ իր նկատմամբ արդարացման կամ մեղադրական դատական ակտ կայացնելն իր իրավունքներն ու ազատությունները դատական կարգով արդյունավետ (այդ թվում՝ ժամանակին և արդարության կանոնների պահպանմամբ) պաշտպանելու հնարավորություն:

Դիմող կողմը նաև գտնում է, որ վերոհիշյալ իրավակարգավորումների համատեքստում Օրենսգրքի 289-րդ հոդվածի կանոններն ըստ էության ձևական են և գործնականում չեն համապատասխանում Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, 61, 63 և 79-րդ հոդվածների պահանջներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանող կողմը գտնում է, որ Օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մասում, 287-289-րդ հոդվածներում, 385-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանը:

Մասնավորապես, գտնելով, որ հանրային ու մասնավոր շահերի արդարացի հավասարակշռության ապահովման տեսանկյունից է, որ նախատեսված է հանրային շահի պաշտպանության նպատակով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը մասնավոր անձանց տրամադրելու կառուցակարգ՝ վերջիններիս արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորությունը երաշխավորելու համար, ինչը ըստ պատասխանողի՝ որևէ կերպ անձին չի զրկում Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներից: Իսկ մինչդատական վարույթի շրջանակներում, անկախ որևէ միջնորդության առկայությունից, անձինք բավարար հնարավորություն ունեն գործի նյութերին ծանոթանալու և իրացնելու իրենց դատավարական իրավունքները:

Ըստ պատասխանողի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման վերաբերյալ միջնորդությունը հիմնավորող նյութերի գաղտնիության ռեժիմը հավասարապես կիրառելի է ինչպես վերադաս դատական ատյանների, այնպես էլ առաջին ատյանի դատարանի համար: Հետևաբար, երբ վերադաս դատական

ատյաններում օպերատիվ-հետախուզական գործունեությանն առնչվող նյութերի մատչելիությունը սահմանափակվում է՝ պայմանավորված գաղտնիության սկզբունքով, ապա այն ողջամտորեն ենթակա է նաև սահմանափակման առաջին ատյանի դատարանում՝ համաձայն Օրենսգրքի 284-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման:

Ըստ պատասխանողի եզրահանգման՝ «երբ առաջին ատյանի դատարանին ներկայացվել են միջնորդությունը հիմնավորող որոշակի ծավալի նյութեր, ապա դրանք հավասարապես պետք է մատչելի լինեն նաև վերադաս դատական ատյաններին»: Իսկ ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությանը, վերաբերելիությանը և արժանահավատությանը, ապա, ըստ պատասխանողի՝ դրանք ենթակա են գնահատման քրեական գործն ըստ էության քննող դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է դիմումում առաջադրված Օրենքի նորմերի սահմանադրականությանը, ապա պատասխանողը գտնում է, որ այդ նորմերի կիրառումը դուրս է գործի և «Վերաքննիչ դատարանի կողմից քննության ենթակա հարցերի շրջանակից»:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում Օրենսգրքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

1) արդյո՞ք անձի հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակում ենթադրող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվության կառուցակարգը պիտանի և անհրաժեշտ է Սահմանադրության 33-րդ հոդվածով սահմանված նպատակներին հասնելու համար,

2) արդյո՞ք վիճարկվող և դրանց հետ փոխկապակցված իրավակարգավորումներով երաշխավորվում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրականացումը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել նաև, թե արդյոք դիմողի կողմից վիճարկվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կիրառման ենթակա են նրա վարույթում գտնվող կոնկրետ գործով:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն են: Այդպիսով՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, ինչը միաժամանակ ենթադրում է անձի և պետության միջև հարաբերությունների և, մասնավորապես, անձանց սուբյեկտիվ իրավունքների, այդ թվում՝ մասնավոր հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի իրացման շրջանակների և հնարավոր սահմանափակումների հստակ օրենսդրական կարգավորում:

Սահմանադրության 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձն ունի այլոց հետ ազատորեն, իր հայեցողությամբ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ և հաղորդակցության այլ ձևեր ունենալու իրավունք: Նույն դրույթը սահմանում է, որ անձն ունի նաև այդ հաղորդակցության փաստն ու բովանդակությունն այլ անձանց, այդ թվում՝ պետության ներկայացուցիչների հասանելիությունից զերծ պահելու, այսինքն՝ գաղտնիության իրավունք:

Միաժամանակ, այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախանշված հիմքերով և կարգով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված հատուկ դեպքի՝ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ (Սահմանադրության 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Հաղորդակցության ազատությունը՝ որպես անձի հիմնարար իրավունք, երաշխավորված է նաև միջազգային-իրավական փաստաթղթերով: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յու-

րաքանչյուր որ ունի նման միջամտությունից կամ ոսնձգությունից օրենքի պաշտպանության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր որ ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր հերթին արձանագրել է, որ, ընդհանուր առմամբ, ճանաչում է քրեական վարույթի շրջանակներում հեռախոսային գաղտնալուծումների դերը, երբ դրանք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են, մասնավորապես, հասարակական կարգի պաշտպանության, հանրային անվտանգության կամ քրեական հանցագործությունների կանխարգելման համար, քանի որ նման միջոցներն իսկապես օգնում են ոստիկանությանը և արդարադատության մարմիններին հանցագործությունների կանխարգելմանն ուղղված իրենց աշխատանքում: Այդուհանդերձ, պետության կողմից դրանց կազմակերպման գործնական պայմանները պետք է կանխեն ցանկացած չարաշահում կամ կամայականություն (տես Dumitru Popescu v. Romania (No. 2), 26.04.2007, app. no. 71525/01, § 69):

Սահմանադրական դատարանն իր արտահայտած իրավական դիրքորոշումներում կարևորել է հաղորդակցության ազատության որպես հիմնարար իրավունքի, երաշխավորման դերն ու նշանակությունը պետության և անհատի փոխհարաբերության ժողովրդավարական և իրավական բովանդակության ամրապնդման և հետագա զարգացման հարցում, մասնավորապես շեշտելով, որ՝

- այդ իրավունքի երաշխավորումը կարևոր է, նախ՝ անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից պաշտպանելու նպատակով,

- այդ իրավունքի սահմանափակումը թույլատրելի է երեք համաժամանակյա նախապայմանի առկայության պայմաններում.

ա/ օրենքով սահմանված դեպքերում,

բ/ օրենքով սահմանված կարգով,

գ/ դատարանի որոշմամբ (տես՝ 2010 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-926 որոշումը):

Հաղորդակցության գաղտնիությունը՝ որպես իրավունք և, միաժամանակ, քրեադատավարական սկզբունք, ամրագրված է Օրենսգրքի 14-րդ հոդվածում, համաձայն որի՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի գրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը: 2. Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»:

Վերոհիշյալ սահմանադրական, կոնվենցիոն և օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ մասնավոր կյանքի, այդ թվում՝ հաղորդակցության անձեռնմխելիության իրավունքը անձի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային օրենսդրությամբ երաշխավորված կարևոր իրավունքներից է և պետք է պաշտպանվի կամայական ու անօրինական ամեն տեսակ միջամտությունից: Ընդ որում՝ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն իրավաչափ նպատակին հասնելու համար, օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

4.2. Վերոշարադրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս նախևառաջ կարևոր է համարում բացահայտել անձի՝ հաղորդակցության գաղտնիության սահմանադրական իրավունքին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների միջամտության օրենսդրական հիմքերը, սահմաններն ու պայմանները (կարգը), որոնք անհրաժեշտ են այդ իրավունքի սահմանափակման սահմանադրական չափանիշներին դրանց համապատասխանությունը որոշելու համար:

Օրենքի և Օրենսգրքի մի շարք հոդվածների իրավական բովանդակության վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է.

1) հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառումները նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը և հետախուսային խոսակցությունների վերահսկումը, ինչպես նաև դրանց բովանդակությունը նախատեսված են օրենքով (Օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածներ),

2) այդ միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է (Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մաս),

3) հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է պատճառաբանված միջնորդության առկայություն, որը, ի թիվս այլնի, պետք է պարունակի համապատասխան միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը և ժամկետը, իսկ միջնորդությանը կցվում են բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը (Օրենքի 37-րդ հոդվածի 1-3-րդ մասեր, 34-րդ հոդվածի 2-րդ մաս, Օրենսգրքի 284-րդ հոդվածի 3-րդ մաս),

4) հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են անցկացվել միայն դատարանի որոշմամբ, իսկ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով դատավորը կարող է համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ և լրացուցիչ նյութեր (Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս, Օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին մաս, 284-րդ հոդվածի 5-րդ մաս),

5) միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու՝ թույլտվություն տալու կամ միջնորդությունը մեր-

Ժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը, իսկ դատարանի որոշումը, ի թիվս այլնի, պետք է պարունակի օպերատիվ-հետախուզական միջոցառում կատարելու մասին նշում՝ ցույց տալով, թե այն ում վրա է տարածվում, որոշման գործողության ժամկետը, որոշումը կատարելու համար իրավասու պաշտոնատար անձը (Օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մաս, 286-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ունեն հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակ, անձանց շրջանակի և հիմնավորվածության առումով դրանց ներկայացվում են հստակ պահանջներ, և դրանք ամբողջությամբ գտնվում են դատական վերահսկողության ներքո: Հետևաբար, վերոնշյալ իրավակարգավորումները համապատասխանում են հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման սահմանադրական հիմնական պահանջներին: Բացի դրանից, համապատասխան նորմերով որոշակիորեն հստակեցված են օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված անձի հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման պայմանները, ընթացակարգը և այդ իրավունքի սահմանափակման իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության բովանդակությունը: Հետևաբար՝ առկա օրենսդրական կառուցակարգը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ:

4.3. Անդրադառնալով արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացման երաշխիքներին՝ Սահմանադրական դատարանը հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ է համարում քննության առնել համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշման բողոքարկմանը վերաբերող իրավակարգավորումները:

Օրենսգրքի 284-րդ հոդվածի 4, 5 և 6-րդ մասերի բովանդակությունից հետևում է, որ հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառման վերաբերյալ միջնորդությունը դատավորը քննարկում է միանձնյա, դրնփակ դատական նիստում՝ միջնորդությունը ներկայացնող պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակ-

ցությամբ, և օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով դատավորը կարող է համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ և լրացուցիչ նյութեր:

Միջնորդությունը քննարկվում, և որոշում է կայացվում այն ստանալուց հետո 12 ժամվա ընթացքում: Հարցի քննարկման արդյունքներով դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու թույլտվություն տալու կամ միջնորդությունը մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Համապատասխան նյութերը դատարանը վերադարձնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

Այսպիսով, հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառման վերաբերյալ միջնորդության քննարկման ընթացակարգն առաջին աստիճանի դատարանում օբյեկտիվորեն չունի մրցակցային բնույթ, քանի որ այդ ընթացակարգի շրջանակներում ծագած իրավահարաբերությունների կողմերն են բացառապես դատարանը և միջնորդություն ներկայացրած հանրային իշխանության լիազոր այն մարմինը, որի ներկայացրած միջնորդության օրինականության և հիմնավորվածության հարցն է լուծվելու:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման նման ընթացակարգն օբյեկտիվորեն և ողջամտորեն արդարացված է, քանի որ կոչված է ապահովելու համապատասխան միջոցառման անցկացման օրինականությունը, գաղտնիությունն ու արագությունը տվյալ դեպքում հանրային շահի պաշտպանության տեսանկյունից, ուստի առաջին աստիճանի դատարանը, նման գործերով ի պաշտոնե իրականացնելով միայն դատական վերահսկողություն, պարտավոր է պարզել միջնորդության արդարացի լուծման համար անհրաժեշտ բոլոր հանգամանքները: Հետևաբար, իրավական ընթացակարգի այդ առանձնահատկություններով է պայմանավորված այն հանգամանքը, որ շահագրգիռ անձը կամ նրա ներկայացուցիչը չի մասնակցում միջնորդության քննարկմանը, հնարավորություն չունի ծանոթանալու միջնորդությանը և այն հիմնավորող նյութերին, չի կարող ներկայացնել առարկություններ, հարուցել միջնորդություններ, այսինքն՝ այդ ընթացակարգի շրջանակներում իրացնել օրեն-

քով երաշխավորված իրավական պաշտպանության միջոցներ: Շահագրգիռ անձանց համար իրավական պաշտպանության այդպիսի միջոցները հասանելի են միայն միջնորդության քննարկման արդյունքներով կայացված որոշման դատական բողոքարկման շրջանակներում, իսկ այդպիսի բողոքարկումն իրացնելի՝ Օրենսգրքի 287-288-րդ հոդվածների նորմերով նախատեսված կարգով (Օրենսգրքի 289-րդ հոդված), հետևաբար՝ նաև առկա են երաշխիքներ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում:

Մասնավորապես.

1) բողոքն ստանալով՝ վերաքննիչ դատարանն անհապաղ պահանջում է միջոցառման իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և առաջին ատյանի դատարանի որոշումը (Օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մաս),

2) միջոցառման իրականացման օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է դրանք հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում (Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը վերաքննիչ դատարանն ստուգում է դռնփակ դատական նիստում՝ կողմերի մասնակցությամբ՝ պարզաբանելով նրանց իրավունքները և պարտականությունները (Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր),

4) դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում բողոքը բավարարելու կամ մերժելու մասին (Օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս),

5) այն դեպքում, երբ նիստին ներկայացված չեն միջոցառման իրականացման օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում տվյալ միջոցառումը վերացնելու մասին (Օրենսգրքի 288-րդ հոդվածի 6-րդ մաս):

Վերոշարադրյալ ընդհանուր կարգավորումներից հետևում է, որ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից Օրենսգրքին ընդհանուր առմամբ ապահովում է հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող դատական որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը վիճարկելու հնարավորությունը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վեճի առարկա իրավակարգավորումների շրջանակում դատական բողոքարկման անհրաժեշտությունը կարևորվել է նաև Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում, համաձայն որի՝ «...երբ պետությունն սկսում է գաղտնի հսկողություն, որի գոյությունը հայտնի չէ հսկվող անձանց, և արդյունքում այդ հսկողությունը հնարավոր չի լինում բողոքարկել, Կոնվենցիայի 8-րդ հոդվածը կարող է էականորեն նսեմացվել: Նման իրավիճակում հնարավոր է, որ անձի նկատմամբ վարվեն 8-րդ հոդվածին հակասող կերպով կամ՝ անգամ զրկեն նրան այդ հոդվածով երաշխավորված իրավունքից՝ առանց նշված անձի գիտության, և, հետևաբար, առանց իրավական պաշտպանության միջոց ստանալու հնարավորության թե՛ ներպետական մակարդակում և թե՛ կոնվենցիոն ինստիտուտներում» (տես՝ Klass and others v. Germany, 06.09.1978, app. no. 5029/71, § 36):

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 287-288-րդ հոդվածներով նախատեսված կանոնները կիրառելի են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշումների բողոքարկման և ստուգման նկատմամբ այնքանով, որքանով դրանք համապատասխանում են դատական վերահսկողության այդ ձևի էությանը և բովանդակությանը:

4.4. Սահմանադրական դատարանը դիմումում բարձրացված հարցերի լույսի ներքո մեկնաբանման և կիրառման տեսանկյունից խնդրահարույց է համարում Օրենսգրքի այն նորմը, ըստ որի օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու թույլտվություն տալու մասին որոշում կայացնելուց հետո առաջին ատյանի դատարանը համապատասխան միջոցառման իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը վերադարձնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին (Օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մաս): Այդպիսի իրավակարգավորումը չի կարող կողմերին և վերաքննիչ դատարանին այդ նյութերը չտրամադրելու հիմք հանդիսանալ, հակառակ դեպքում դա կհանգեցնի Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների սահմանափակմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ վերլուծված իրավանորմերի համակցության մեջ Օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մասի վերոնշյալ դրույթը պետք է ընկալվի և մեկնաբանվի բացառապես այն իմաստով, որ չխաթարվի Սահմանադրու-

թյան 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բուն էությունը:

Ինչ վերաբերում է դատական վերահսկողության շրջանակներում պետական, ծառայողական և այլ գաղտնիքի պահպանման վերաբերյալ դիմումում բարձրացված խնդրին, ապա Օրենսգրքի 284-րդ հոդվածի 5-րդ մասի նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատավորի պահանջով նրան, որպես կանոն, ներկայացվում են նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կա պետական կամ ծառայողական գաղտնիքի խախտման վտանգ, կամ երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները:

Մյուս կողմից՝ Օրենսգրքի 171-րդ և 172-րդ հոդվածների իրավակարգավորումների համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում պետք է ձեռնարկվեն պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ, ինչը Օրենսգրքի վերոհիշյալ իրավապահանջների հետ համադրության շրջանակներում քրեադատավարական ընթացակարգի պահպանման ընդհանուր սկզբունք է:

4.5. Վերլուծելով Օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասի և 289-րդ հոդվածի բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ հիշյալ նորմերն առավելապես հղումներ են պարունակում Օրենսգրքի այլ հոդվածներին, ինչն օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսանկյունից նպատակ է հետապնդում խուսափել նույն նորմատիվ իրավական ակտով սահմանված նորմերի անհիմն կրկնություններից կամ ընդգծել այդ դրույթների փոխադարձ կապը: Ուստի, այս առումով վերոնշյալ նորմերի սահմանադրականությունը խնդրահարույց չէ:

4.6. Անդրադառնալով դիմողի վարույթում գտնվող կոնկրետ գործով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառելիության հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն՝

որպես անհրաժեշտ պայման, կարող է բխել Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից: Մինչդեռ դիմումում վկայակոչված գործով վիճարկման առարկա է դարձել ոչ թե Օրենքի վերոհիշյալ նորմերի հիմքով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը պահանջելու անձի իրավունքի իրացման հարցը, այլ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տրամադրելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը, որի օրինականության և հիմնավորվածության ստուգման հարցը կարող է քննության առարկա դառնալ Օրենսգրքով նախատեսված հիմքերով ու կարգով:

Հետևաբար՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի սույն դիմումի հիման վրա Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրականության գնահատման հարցը Սահմանադրական դատարանում քննության առարկա լինել չի կարող, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործի վարույթն այդ մասով կարճելու հիմք է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 63, 64 և 71-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարանի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին վերադարձնելը չպետք է խոչընդոտի այդ նյութերը վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձին և վերաքննիչ դատարանին տրամադրելուն՝ միաժամանակ ապահովելով պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանումը:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 287-288-րդ հոդվածներն այն մասով, որով դրանցով նախատեսված կանոնները կիրառելի են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշումների բողոքարկման և ստուգման նկատմամբ, համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասը և 289-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով, գործի վարույթը կարճել:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

28 ապրիլի 2020 թվականի
ՍԴՈ-1526



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2019 թվապահի Դեկտեմբերի 20-ին ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՂՐԴՋՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 թվապահի ՄԱՅԻՄԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 թվապահի ՄԱՅԻՄԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂՐԴՋՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 թվապահի ՄԱՅԻՄԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» 2015 թվապահի ՄԱՅԻՄԻ 8-ԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 մայիսի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Պետրոսյանի,

59 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)/2020

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Միմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Ղրղզստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության և Ղրղզստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2015 թվականի մայիսի 8-ին միանալու հետ կապված Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի ապրիլի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության և Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի

մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2015 թվականի մայիսի 8-ին միանալու հետ կապված Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ **Արձանագրություն**) ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում: Այն բաղկացած է երկու հոդվածից և Արձանագրության անբաժանելի մաս կազմող ցանկից:

2. Արձանագրությունը կնքվել է Ղրղզստանի տնտեսության վրա մաքսատուրքերի բարձրացմամբ պայմանավորված բացասական ազդեցությունը հնարավորինս մեղմելու նպատակով: Արձանագրությամբ սահմանվում է այն ապրանքների և դրույքաչափերի ցանկը, որոնց նկատմամբ Ղրղզստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր:

3. Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման պահից ու տարածվում 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և ուժի մեջ է մտնում սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու ամսաթվից, իսկ այն անդամ պետության համար, որի օրենսդրությունը չի նախատեսում միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու ամսաթվից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է, որ Եվրասիական տնտեսական միության անդամ մեկ այլ պետության Ղրղզստանի Հանրապետության կողմից որոշ ապրանքների նկատմամբ ժամանակավորապես կիրառվեն Միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու անցումային շրջանում նույնպիսի արտոնություն տրամադրվել է նաև Հայաստանի Հանրապետությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման համաձայնությունը բխում է արտաքին քաղաքականության իրականացման՝ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված բարիդրացիության և փոխշահավետության սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության և Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2015 թվականի մայիսի 8-ին միանալու հետ կապված Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1527



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍԱՆԿՏ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-Ի
ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված Եվրասիական տնտեսական համաձայնագրի մասին» համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի և 11-րդ հոդվածի 1-ին կետի ներքո սահմանված պարտավորությունները» և հանրապետության կառավարության ներկայացուցչից ստացված մեկնաբանությունները և հարկադրաբար ընդունեց հետևյալ որոշումը՝

2(98)/2020
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԾ ♦

տանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի ապրիլի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով, համաձայն որի մի շարք ապրանքների մասով ԵԱՏՄ Միասնական մաքսային սակագների կիրառումը կհետաձգվի ևս մեկ տարի ժամկետով:

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրով սահմանվում է ապրանքների և դրույքաչափերի ցանկը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր և արտոնյալ ժամանակահատվածով մինչև 2020 թվականի հունվարի 1-ը:

2. Արձանագրությամբ պայմանավորված փոփոխությունների արդյունքում որոշ ապրանքների մասով այդ ժամանակահատվածը երկարացվում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը՝ բացառու-

թյամբ 87 ապրանքային խմբում ընդգրկված վերգետնյա տրանսպորտային միջոցների:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1528



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 66-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Սովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվա-

ծի 1-ին մասի 66-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետը սահմանում է.

«Հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցում՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկում, որն իրականացվում է հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու, իսկ դրա բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Էլեկտրոնային ծանուցման միջոցով իրազեկված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 14-ի՝ ՎԴ/2000/05/19 վարչական գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումները:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված այլ իրավադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումը

Դիմողի գնահատմամբ՝ Սահմանադրության 50 և 75-րդ հոդվածներով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքն ինքնանպատակ չէ: Սահմանադիրն այն սահմանել է հանրային և մասնավոր ան-

ձանց միջև հարաբերությունների հավասարակշռման ապահովումը երաշխավորելու համար:

Ըստ դիմողի թեև պատշաճ վարչարարության իրավունքի բնորոշումը հստակ սահմանված չէ ոչ օրենսդրությամբ և ոչ էլ իրավական դոկտրինում, այդուհանդերձ, դրա բովանդակությունը կանխորոշվում է սահմանադրաիրավական նորմով:

Դիմողի կարծիքով վարչական վարույթում անձի լաված լինելու իրավունքը պատշաճ վարչարարության կարևորագույն տարրերից է, և դրա բացակայությունը և/կամ անարդյունավետ ապահովումը կհանգեցնի վարչարարության ոչ իրավաչափության: Դիմողի գնահատմամբ լաված լինելու իրավունքի սահմանադրաիրավական նորմը պետք է ուղղորդող դերակատարում ունենա օրենքով դրա կարգավորման ընթացքում: Այսինքն՝ օրենսդիրն ամեն դեպքում լաված լինելու իրավունքի երաշխիքները սահմանելիս պարտավոր է հիմք ընդունել Մահմանադրությամբ երաշխավորված իրավունքն ու սահմանել դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Մահմանադրությունը պարտավորեցնում է օրենսդիրն ստեղծել հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական չափորոշիչների կենսագործման համար անհրաժեշտ և արդյունավետ կառուցակարգ:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքով սահմանված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգի, մասնավորապես՝ հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցման նպատակը, ըստ էության, հարկային վարչարարության առավել արդյունավետ իրականացումն է, ուստի օրենսդիրը հարկային հարաբերությունների դաշտ է ներմուծել վարչական վարույթի արագացման ընթացակարգ: Միևնույն ժամանակ նման ընթացակարգի սահմանման նպատակի արդյունավետությունը չի կարող բացառել իրավունքի իրացման արդյունավետությունը, դրանք պետք է փոխկապակցված լինեն, չբացառեն մեկը մյուսին: Հարկ վճարողների համար էլեկտրոնային ծանուցման եղանակի նախատեսման արդյունավետությունը չպետք է հակասի անձի լաված լինելու իրավունքին, և էլեկտրոնային ծանուցումն ամեն դեպքում պետք է արդյունավետ իրավակարգավորում լինի ու հանդիսանա լաված լինելու իրավունքի ապահովման երաշխիք, արդյունավետ ընթացակարգ և հարկային վարչարարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նախադրյալ:

Դիմողն արձանագրում է, որ վիճարկվող դրույթի հիմքով հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցմամբ պարտադիր ծանուցման

ենթակա փաստաթղթերի ցանկում է նաև վարչական վարույթում անձի լսված լինելու իրավունքի ապահովման նպատակով իրազեկում պարունակող փաստաթուղթը: Փաստացի հարկային մարմինը գործնականում լսված լինելու իրավունքը ապահովելու նպատակով հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է փաստաթուղթ վարույթում լսված լինելու իրավունքն ապահովելու համար, մինչդեռ օրենսդիրը նման փաստաթղթի ուժի մեջ մտնելու պահ է սահմանում էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրը: Այսինքն՝ վիճարկվող նորմը փաստաթղթի ուժի մեջ մտնելու պահը պայմանավորել է ոչ թե հարկ վճարողի կողմից դրա վերաբերյալ իրազեկվելու պահից, այլ հարկային մարմնի կողմից այն ուղարկելու պահից:

Դիմողի գնահատմամբ՝ օրենսդիրը, փաստաթղթի ուժի մեջ մտնելու պահը ուղարկման հաջորդ օրը համարելով, չի հաշվարկել այդպիսի միջոցի արդյունավետությունը, գործնականում հարկ վճարողի կողմից այն չստանալու հնարավորությունը, օրինակ կապի խափանումը, որի վերաբերյալ չիրազեկված վարչական մարմինը կարող է վարույթում անձի լսված լինելու իրավունքի ապահովման համար ծանուցման կարգի իրացումը համարել պատշաճ կատարված, մինչդեռ իրականում անձը փաստացի զրկվում է օբյեկտիվորեն վարույթի վերաբերյալ իրազեկվելու հնարավորությունից:

Վերջում դիմողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթն իրավունքի իրացման արդյունավետ կառուցակարգ չէ և չի բխում անձի լսված լինելու իրավունքի բովանդակությունից:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը գտնում է, որ պատշաճ վարչարարության էությունը վարչարարության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության և վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեության արդյունավետության ապահովման գործառույթների միաժամանակյա ապահովումն ու դրանց միջև փոխադարձ հավասարակշռվածության հաստատումն է: Պատշաճ վարչարարության իրավունքը համընդգրկուն իրավական ինստիտուտ է, որը բովանդակում է մի շարք սուբյեկտիվ իրավունքներ, իրավական երաշխիքներ ու սկզբունքներ և վարչարարությանը ներկայացվող որակական չափանիշներ, որոնք ուղղված են, մի կողմից՝ ֆիզիկական ու իրա-

վարանական անձանց՝ վարչարարության հետ առնչվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված իրացմանն ու պաշտպանությանը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետության ապահովմանը:

Ըստ պատասխանողի՝ վարչական վարույթում լսված լինելու հիմնարար իրավունքն ավելի լայն հասկացություն է. այն չի սահմանափակվում միայն բանավոր լսումներին մասնակցելու իրավունքով և ներառում է վարչական վարույթի մասնակիցների վարույթում քննարկվող հարցի կապակցությամբ դիրքորոշումներ հայտնելու, փաստարկներ ներկայացնելու (այդ թվում նաև՝ գրավոր) իրավունքը, որին համապատասխանում է վարչական մարմնի պարտականությունը՝ ընդունելու և քննարկման առարկա դարձնելու այդ դիրքորոշումներն ու փաստարկները: Դա նշանակում է, որ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու սահմանադրական իրավունքի ապահովմանն ուղղված վարչական մարմնի պարտականությունը, ըստ էության, պետք է պատշաճորեն կատարված համարել նաև այն դեպքերում, երբ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում լսումներ չի հրավիրել, սակայն ընդունել և քննարկել է (վարչական ակտ կայացնելիս հաշվի է առել) վարույթի մասնակիցների կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումներն ու փաստարկները վարչական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ:

Պատասխանողի կարծիքով՝ օրենսդիրը, նախատեսելով հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցման ինստիտուտը և դրա կիրառման մեխանիզմը, նպատակ է ունեցել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացման համար պրակտիկ կառուցակարգեր նախատեսել, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությունների առումով վիճարկվող կետի կարգավորումները միանգամայն ընդունելի են:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի վիճարկվող դրույթի երկրորդ նախադասությանը, համաձայն որի՝ էլեկտրոնային ծանուցման միջոցով իրազեկված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցում-

ների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից, ապա պատասխանողը նշում է, որ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ հարկ վճարողը և դրա պաշտոնատար անձը, հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում լրացնելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որին հարկային մարմնի կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցվելու են պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը, փաստացի իրենց գործողությամբ տալիս են համաձայնություն այն մասին, որ այդպիսի ծանուցման եղանակն ընդունելի է, և հարկային մարմնի վրա պարտականություն է դրվում օրենքով սահմանված կարգով պատշաճ ծանուցել պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը, իսկ հարկ վճարողը, լրացնելով էլեկտրոնային փոստի հասցեն, ստանձնում է իր լաված լինելու իրավունքն ապահովելու պարտականություն:

Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը հստակ սահմանել է վարչական մարմնին վերապահված լիազորությունը՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից մեկը, ինչպես նաև պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի տեսակները:

Պատասխանողի եզրահանգմամբ՝ Օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթն անհրաժեշտ է դիտարկել անձի լաված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրման տեսանկյունից:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սույն գործի շրջանակում Օրենսգրքի վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

1) Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետով սահմանված՝ հարկ վճարողների էլեկտրոնային ծանուցման կառուցակարգը համապատասխանու մ է արդյոք Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված՝ *անձի լաված լինելու իրավունքի* բովանդակությանը,

2) վիճարկվող դրույթը երաշխավորու՞մ է արդյոք ծանուցման, հետևապես՝ լաված լինելու իրավունքի, իսկ արդյունքում՝ Սահմանադրության 50-րդ հոդվածում ամրագրված պատշաճ վարչարարության հիմնական իրավունքի իրականացման *արդյունավետ կառուցակարգ*՝ Սահմանադրության 75-րդ հոդվածին համապատասխան:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

Իսկ Սահմանադրության՝ «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում են մարդու և քաղաքացու պատշաճ վարչարարության իրավունքի մաս կազմող՝ վարչական մարմինների կողմից անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, տվյալ անձի՝ իրեն վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելուց առաջ անձի լաված լինելու իրավունքը:

Սահմանադրության 50-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

1) անձի լաված լինելու իրավունքը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի *բաղկացուցիչ տարր է,*

2) լաված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու *իրավական պաշտպանության միջոց է,* որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ,

3) անձի *լաված լինելը* պատշաճ վարչարարության *հիմնարար բաղադրիչ է,*

4) անձի լաված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառնությանին նշանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի

դեմ արդյունավետ պաշտպանության ապահովման հնարավորություն, իսկ մյուս կողմից վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց *օրյեկտիվությունը* և *լիարժեքությունը*՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով,

5) անձն օժտված է վարչական վարույթում լսված լինելու իրավունքով այն դեպքերում, երբ նրա նկատմամբ պետք է ընդունվի միջամտող անհատական ակտ,

6) վարչական վարույթում լսված լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա,

7) լսված լինելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորվում է միայն այն վարչական ընթացակարգերում, որոնք ուղղված են անձանց նկատմամբ *միջամտող* անհատական ակտ ընդունելուն,

8) «(...) բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել օրենքով սահմանված բացառիկ դեպքերում (տե՛ս, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-4-րդ մասերը):

4.2. Օրենսգրքի վիճարկվող դրույթի և դրա հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող Օրենսգրքի և այլ օրենքների վերաբերելի դրույթների համալիր վերլուծությունից հետևում է, որ

1) հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցագիրը՝ հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության շրջանակներում էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվող Օրենսգրքով և օրենքով նախատեսված փաստաթղթի տեսակ է (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ կետ),

2) հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցումը պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկումն է, որն իրականացվում է հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով և, որպես էլեկտրոնային ծանուցման միջոցով իրազեկված պարտադիր ծանուցման ենթակա

փաստաթուղթ՝ ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետ),

3) հարկային մարմնում հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեի բացակայության դեպքում հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով ծանուցումը հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկումն է, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով և ուժի մեջ է մտնում այն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետ),

4) հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային մարմնի հարկային հաշվարկների ընդունման էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հարկ վճարողին ներկայացվող հարկային հաշվարկի ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցագրում նշված օրը (Օրենսգրքի 53-րդ հոդվածի 7-րդ մաս),

5) օրենքով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է անհատական ծանուցում, անձը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստում («Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս),

6) էլեկտրոնային համակարգի մասնակիցների համաձայնությամբ սահմանված դեպքերում անձը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ նախատեսված տեղեկատվությունն ուղարկվել է ծանուցվող անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը («Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վերլուծելով հարկային մարմինների և հարկ վճարողների միջև էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող փաստաթղթերի շրջանառության վերաբերյալ պատշաճ ծանուցման պայմանների սահմանման հետ կապված հարաբերությունները կարգավորող համապատասխան նորմերը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է երկու տարբերակված մոտեցումներ.

առաջին՝ հարկային մարմինների կողմից հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցման դեպքում ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից այն դեպքում, երբ հարկ վճարողների կողմից հարկային հաշվարկները էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային այդ հաշվարկի ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցագրում նշված օրը,

երկրորդ՝ անձի կողմից պատշաճ ծանուցված լինելու փաստը պետք է հաստատվի հասցեատիրոջ կողմից ցանկացած եղանակով ակտը ստանալու հավաստման միջոցով:

Հիշյալ նորմերի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը փաստում է, որ հարկ վճարողներին հարկային մարմնի կողմից պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն էլեկտրոնային եղանակով ուղարկելը՝ առանց այդ փաստաթղթի մուտքագրումը հավաստող ծանուցագրի ստացման, **չի կարող դիտարկվել բավարար պայման**, որպեսզի հարկ վճարողը համարվի պատշաճ ծանուցված: Նման եզրահանգման համար հիմք կարող է լինել, մասնավորապես, բազմաթիվ տեխնիկական խնդիրների հետևանքով հարկ վճարողի կողմից նման ծանուցում չստանալու հավանականությունը: Մինչդեռ, պատշաճ վարչարարության տրամաբանությունից է բխում այն, որ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթի՝ էլեկտրոնային եղանակով ոչ պատշաճ ծանուցումը կարող է հանդիսանալ հարկային մարմնի կողմից պատշաճ ծանուցման վերաբերյալ բողոքի դեմ ներկայացվելիք փաստարկ նույնիսկ այն դեպքում, երբ հարկային մարմինը որևէ տեղեկություն չունի հարկ վճարողին ուղարկված փաստաթղթի ծանուցման կամ հարկ վճարողի կողմից այդ փաստաթղթի ստացման վերաբերյալ, ինչը **ողջամտորեն չի ապահովում հարկ վճարողի ծանուցված լինելու**, հետևաբար՝ **լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացումը**:

4.3. Սահմանադրական դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վա-

րույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի իրավակարգավորումների տրամաբանությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրականացվելու է որևէ վարչական վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է պարզի, թե արդյոք գոյություն ունեն իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով իրականացվող վարչական վարույթը կարգավորող հատուկ օրենքներ, և, եթե այդպիսիք գոյություն ունեն, ապա պետք է որոշի, թե որքանով են հատուկ օրենքով կարգավորված իր կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները:

Վիճարկվող դրույթի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ հարկային մարմնի հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի նկատմամբ ևս կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե հարկային մարմնին հսկողական լիազորություններ վերապահող հատուկ օրենքներով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ, որոնց շրջանակներում վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին:

Այսպիսով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ծանուցմանը վերաբերող իրավակարգավորումներից հետևում է, որ ծանուցման հանձնումը պետք է կատարվի այնպիսի եղանակով, որը թույլ կտա հաստատել հասցեատիրոջ կողմից ակտն ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը, որը արդյունավետ կառուցակարգ է պատշաճ ծանուցման իրականացման համար, այսինքն՝ էական նշանակություն ունի ծանուցումն ստանալու հանգամանքը, այլ ոչ միայն այն ուղարկելու փաստի առկայությունը: Ընդ որում, հարկ վճարողը պետք է հնարավորություն ունենա «բացելու և ծանոթանալու» ծանուցման բովանդակությանը, և որևէ նշանակություն չունի, թե վերջինս օգտվել է այդ հնարավորությունից, թե ոչ: Այսինքն՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկումը կարող է հաստատված լինել միայն այն ժամանակ, երբ փաստաթուղթը ոչ միայն ուղարկվում է հարկ վճարողի

կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին, այլ նաև հասնում է այդ հասցեին:

Վերոնշյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ նաև հարկային հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի մասին տնտեսավարող սուբյեկտներին միայն էլեկտրոնային եղանակով ծանուցելու հարկային օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությանը վերոնշյալ վերլուծության համատեքստում: Այսպես՝ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքով նշված փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու պարտադիր պահանջ նախատեսված լինելու և հարկային մարմնի հետ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագիր կնքված լինելու դեպքում հարկ վճարողը ողջամտորեն պետք է իմանա, որ հարկային մարմնի կողմից ծանուցումներն ուղարկվելու են իր կողմից հարկային մարմնին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին:

Այդուհանդերձ, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի երկրորդ նախադասությունը՝ էլեկտրոնային ծանուցման միջոցով իրազեկված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթը միայն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից ուժի մեջ մտնելու մասով, չի երաշխավորում այդ փաստաթղթի ստանալու հավանականությունը, ընդ որում, տարաբնույթ պատճառներով չերաշխավորելով հետադաձ կապի առկայությունը և նվազագույն կառուցակարգ: Արդյունքում՝ մասնավոր անձի համար կարող են առաջանալ, օրինակ, հարկային պարտականություններ մի փաստաթղթի հիման վրա, որին նա ողջամտորեն չի ծանոթացել, ընդամին բաց թողնելով նաև այդ փաստաթղթի դեմ իրավական պաշտպանության հնարավորություններից օգտվելու ժամկետները: Պարզ է, որ անձի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումը ողջամիտ ենթադրությամբ պետք է հասած լինի նրան, սակայն ի բացառություն պատշաճ իրազեկման ընդհանուր կանոնների՝ փաստաթղթի, այսինքն՝ նաև միջամտող վարչական ակտի ուժի մեջ մտնելը սոսկ այդ փաստաթղթի հասցեատիրոջն ուղարկված ծանուցման՝ հասցեատիրոջը հասնելու ողջամիտ ենթադրությամբ պայմանավորելը մասնավոր անձից ոչ պատշաճ ակնկալիքի դրսևորում է, որով ծանուցման ամբողջ բեռը, ներառյալ՝ տեխնիկական խոչընդոտների, դրվում է մասնավոր անձի վրա:

Սահմանադրության 50-րդ հոդվածով սահմանված՝ անձի լաված լինելու իրավունքի իրացումն անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ հարկ վճարողը ողջամտորեն կարող էր ծանոթանալ իր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցմանը, թե ոչ, խնդրահարույց է դառնում: Ուստի Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետով սահմանված՝ ծանուցում ուղարկելու կանոնը՝ անկախ հետադարձ կապի մասին գոնե նվազագույն հավաստիացման հնարավորության օրենսդրական ամրագրումից, անձի պատշաճ ծանուցման կառուցակարգ չէ:

4.4. Անձի լաված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական պաշտպանության առանձնահատկությունները կարևորվում են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «...իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև պրակտիկայում»: Ավելին, արդյունավետ միջոցը պետք է օժտված լինի մարդու իրավունքի ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակումը կանխելու կամ իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ապահովելու հատկանիշով (Case of KUDŁA v. POLAND, app. no. 30210/96, Judgment 26 October 2000, §§ 157-158):

Արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ՝ «Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (օրինակ՝ Case of KILIÇ v. TURKEY, app. no. 22492/93, Judgment 28 March 2000, § 91; Case of IATRIDIS v. GREECE, app. no. 31107/96, Judgment 25 March 1999, § 66 և այլն)»:

Բացի դրանից, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն վերը նշված իրավունքի կիրառության նկատմամբ լայն մոտեցում է ցուցաբերել 1977 թվականի սեպտեմբերի 28-ի՝ «Վարչական իշխանության մարմինների գործողությունների առնչությամբ անձանց պաշտպանության վերաբերյալ» թիվ 77 (31) բանաձևում՝ սահմանելով, որ անձն իրավունք ունի ներկայացնելու իր ապացույցները և փաստարկները «... ցանկացած վարչական ակտի առնչությամբ, որը

կարող է անբարենպաստ կերպով ազդել վերջինիս իրավունքների, ազատությունների կամ շահերի վրա»:

4.5. 2015 թվականի հունվարի 27-ի իր թիվ ՍԴՈ-1189 որոշման մեջ Սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել, որ «(...) շահագրգիռ սուբյեկտների կողմից (...) պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non* (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստի ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն (...) սուբյեկտի (...)՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի (...) **արդյունավետ ծանուցման (...) ընթացակարգ**, որը գործնականում կրացառի (...) շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները»:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության տարր հանդիսացող՝ անձի լսված լինելու իրավունքի կոնկրետացումն օրենսդրությունում ենթադրում է այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանում:

Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 18-ի իր ՍԴՈ-1420 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է. «Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սուսկ, այլև **նման կարգի արդյունավետությունը**, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները»:

Հիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթով նախատեսված էլեկտրոնային ծանուցման համակարգի կիրառումը՝ առանց ստացման մասին հավաստման, **չի կարող գնահատվել որպես արդյունավետ հարկային վարչարարություն:**

Օրենսգրքի վիճարկվող դրույթի՝ նույն Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի կարգավորման տիրույթում են գտնվում ոչ միայն հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցման հասկացության սահմանումը, այլև նույն էլեկտրոնային ծանուցման ձևի, ժամկետների և պատշաճ ծանուցված լինելու հարցերը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ առանց էլեկտրոնային ծանուցման այնպիսի կառուցակարգերի սահմանումը, որոնց պայմաններում պատշաճ ծանուցում կհամարվի բացառապես ծանուցվողին ծանուցման ենթակա փաստաթուղթ ուղարկելը, չի բխում պատշաճ վարչարարության հիմնական իրավունքի **արդյունավետ** իրականացման համար անհրաժեշտ՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջներից, քանի որ վիճարկվող դրույթի տրամաբանության շրջանակում հարկային մարմինը մինչև հարկ վճարողի համար միջամտող ակտի ընդունումը՝ վերջինիս լսված լինելու իրավունքի ապահովման փոխարեն հիմք է ընդունելու միայն իր կողմից փաստաթղթի էլեկտրոնային ծանուցումն ուղարկելու փաստը՝ առանց հարկ վճարողի իրազեկման փաստացի հավաստման առկայության:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ վիճարկվող դրույթի շրջանակներում անձի լսված լինելու իրավունքի ապահովման նպատակով հարկային մարմինը ծանուցագիրն ուղարկում է հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին և ծանուցագրով առաջարկում է այն ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ներկայանալ վարույթ իրականացնող մարմնին այն դեպքում, երբ նույն փաստաթղթի ուժի մեջ մտնելու պահ է համարվում դրա ուղարկմանը հաջորդող օրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցագրի ուղարկման և ստացման օրերը չեն համընկնում և կանխատեսելի չէ վարույթի իրականացման օրը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատշաճ վարչարարության իրավունքի տարր հանդիսացող՝ անձի լսված լինելու իրավունքի իրացման այսպիսի օրենսդրական ընթացակարգը **կարող է հանգեցնել հարկ վճարողի լսված լինելու իրավունքի խախտման:**

Սահմանադրական դատարանը փաստում է՝ թեև Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի վերլուծությունից բխում է, որ նշված նորմի ուժով իրավակիրառողը հարկ վճարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը, օրենքով կարգավորված չեն էլեկտրոնային փոստի հասցե չտրամադրելու իրավական հետևանքները, և պարզ չէ, օրինակ՝ դրա տեխնիկական չգործարկման պայմաններում ինչ հետևանքներ են առաջանում հարկ վճարողի համար: Միաժամանակ, օրենսդիրը իրավակիրառողին հնարավորություն է տալիս պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը վճարողի էլեկտրոնային փոստի հասցեի բացակայության դեպքում տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, որի միջոցով հասցեատերը համարվում է պատշաճ իրազեկված:

Այսպիսով ընդհանրացնելով Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 4-րդ հոդվածի վիճարկվող 1-ին մասի 66-րդ կետի *առաջին նախադասությունը*՝ հարկ վճարողների էլեկտրոնային ծանուցման սահմանման մասին դրույթը, չի հանգեցնում Սահմանադրության 50-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված պատշաճ հարկային վարչարարության իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի պահանջների խախտմանը:

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 4-րդ հոդվածի վիճարկվող 1-ին մասի 66-րդ կետի երկրորդ նախադասությունն այն մասով, որով հնարավոր է դարձնում հարկ վճարողների պատշաճ իրազեկումը սահմանափակել սոսկ նրա էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցման ենթակա փաստաթուղթ ուղարկելով՝ դրանով պայմանավորելով նաև հիշյալ փաստաթղթի ուժի մեջ մտնելը՝ առանց այն ստանալու մասին հավաստման, **հակասում է Սահմանադրության 50-րդ հոդվածում ամրագրված՝ պատշաճ վարչարարության, հատկապես՝ անձի լսված լինելու իրավունքին խախտելով նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջները:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**:

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի առաջին նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի երկրորդ նախադասությունն այն մասով, որը նախատեսում է հարկ վճարողների էլեկտրոնային փոստի հասցեին պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթ՝ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից ուժի մեջ մտնելու պահանջ՝ առանց այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստման, ճանաչել Սահմանադրության 50-րդ հոդվածին հակասող:

3. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 19-րդ մասի պահանջներից, հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի երկրորդ նախադասության Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող ճանաչելը հարկային վարչարարության շրջանակում անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն վերոհիշյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հուլիսի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1529



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (ՈՒժԸ
ԿՈՐՑՐԵԼ Է 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ) 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ ԵՐՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՍԻՐ ♦ 2(98)2020
83

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ և 71-րդ հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի և 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ուժը կորցրել է 2018 թվականի հունվարի 1-ին) 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի մայիսի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի հունիսի 12-ին և ուժի մեջ է մտել 2000 թվականի հուլիսի 1-ին: Օրենքի՝ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Օրենքի գործողության ոլորտը և կարգավորման առարկան» վերտառությամբ 1-ին հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանվում էր.

«4. Ստուգումները կարող են լինել թեմատիկ՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն, կամ համալիր՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն: Թեմատիկ են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովության, բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները, պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումները, գործունեության առանձին տեսակի իրականացման լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեության ստուգումները, սահմանված տնտեսական նորմատիվների պահպանման վիճակի, արժեթղթերի գրանցամատյանը վարելու և դրանով իրականացվող գործառնությունների ստուգումը, արժույթային գործառնությունների ստուգումը, սանիտարա-հիգիենիկ, հակահրդեհային կանոնների պահպանման վիճակի,

երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության հետ կապված գործունեությանը ներկայացվող պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած տեղեկատվության արժանահավատության և (կամ) փաստացի գործունեության բացահայտման և (կամ) Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության, ապրանքների և տեխնոլոգիաների՝ ներկայացված ելակետային տվյալներին համապատասխանության և նման այլ ստուգումները աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումները, կենսաթոշակային օրենսդրության կիրառմանը և անհատական հաշվառման տվյալների բազայի վարմանն ուղղված ստուգումները, վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման և իրականացման, պարտադիր սոցիալական ապահովագրության ծրագրերի իրականացմանը վերաբերող ֆինանսական և վիճակագրական տվյալների տեղեկությունների հավաստիության ճշտմանն ուղղված ստուգումները, երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների կիրառման ընթացքի նկատմամբ ստուգումները, սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումները:

Համալիր է ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը, որը կատարվում է հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների, հաշվեկշռի, սկզբնական հաշվառման փաստաթղթերը լրացնելու (կազմելու) ճշտությունը պարզելու միջոցով և նպատակ ունի վեր հանել ստուգվող օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ կապված սեփական և փոխառու դրամական ու ապրանքային միջոցների օգտագործման նպատակայնության և արդյունավետության հետ: Համալիր ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ պահանջելու բացառիկ իրավունքը պատկանում է տնտեսավարող սուբյեկտի բաժնետերերին, փայատերերին, հիմնադիր-

ներին կամ անդամներին՝ օրենքով իրենց վերապահված իրավասությունների շրջանակներում:

5. Սույն օրենքը չի տարածվում պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի շրջանակներում պետական մարմնի կողմից որպես գործարքի կողմ իրականացվող ստուգումների վրա»:

Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը մինչև 2017 թվականի հունվարի 27-ը փոփոխվել է 2007 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-297-Ն, 2010 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-45-Ն, ինչպես նաև 2011 թվականի ապրիլի 12-ի ՀՕ-138-Ն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի դեկտեմբերի 28-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին, իսկ 2018 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրել է:

Օրենքի՝ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ սահմանվում էր.

«Եթե հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում պարզվում է, որ ռոյալթի վճարողների կողմից հաշվետու տարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով արտադրանքի իրացումից հասույթը 10 տոկոս և ավելի չափով ցածր է նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից, ապա հարկային մարմինները վերահաշվարկում են իրացումից հասույթի մեծությունը՝ այդ ամսվա համար կիրառելով խտանյութի միջազգային միջին գների 90 տոկոսը՝ հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա տվյալ ամսվա համար հայտարարված գինը»:

Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի վերոնշյալ պարբերությունը նշված խմբագրությամբ օրենքում լրացվել է 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-284-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/7612/05/17 վարչական գործով «Սահմանադրական դատարանի դիմելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշման հիման վրա նույն դատարանի 2019 թվականի նոյեմբերի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի գրավոր բացատրությունները, վերլուծելով հիշյալ օրենքների վերաբերելի դրույթները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Վկայակոչելով վեճի առարկային վերաբերող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներ՝ դիմողը նշում է, որ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում, նույն պայմանագրի կողմ պետության անունից հանդես եկող հարկային մարմնի կողմից պետության որպես սեփականատիրոջ առջև տվյալ տնտեսվարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարման, մասնավորապես՝ բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ իրականացվող վերահսկողական գործառնությունների իրականացման պարագայում հիշյալ օրենքի դրույթները չեն կարող կիրառվել, սակայն նույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասով ուղղակիորեն լիազորել է հարկային մարմնին, գործելով որպես պետաիշխանական լիազորությամբ ժտված վարչական մարմին, այնուամենայնիվ, իրականացնելու նույն նորմով որպես պարտադիր վճար բնորոշված բնօգտագործման վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգում, այսինքն՝ վարչարարություն, և արդյունքում՝ օրենքով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության դեպքում, ընդունելու բնօգտագործման վճար վճարողների տնտեսվարող սուբյեկտների համար որոշակի պարտականություններ սահմանող վարչական ակտ:

Դիմողը նշում է նաև, որ տվյալ իրավիճակում հարկային մարմինը գործում է արդեն ոչ թե որպես քաղաքացիաիրավական հա-

րաբերություններում քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մասնակցող, պայմանագրի կողմ հանդիսացող, պետության առջև տնտեսվարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումը վերահսկող լիազոր մարմին, այլ որպես պետության անունից հանդես եկող, հանրային-իշխանական լիազորությամբ օժտված վարչական մարմին: Դիմողի կարծիքով՝ 18.07.2009 թ. ՄԴՈ-816 որոշման համաձայն՝ պարտադիր վճար չհանդիսացող, միաժամանակ իրենից գույքի օգտագործման դիմաց տրվող վճար ենթադրող բնօգտագործման վճարների վճարման հետ կապված իրավահարաբերություններին օրենսդրի կողմից քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում տրված լինելու պայմաններում, փաստորեն, 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասում ուղղակիորեն ամրագրված՝ բնօգտագործման վճարների՝ որպես պարտադիր վճարների, հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված իր լիազորությունը հարկային մարմինն իրականացնում է հանրային բնույթ կրող իրավահարաբերությունների դաշտում:

Ամփոփելով իր դատողությունները՝ դիմողը գտնում է, որ հիշյալ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը այդ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավակարգավորման, ինչպես նաև ՄԴՈ-816 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին, հակասում է Հայաստանի Հանրապետությունը որպես իրավական պետություն հռչակող Սահմանադրության 1-ին հոդվածին:

Անդրադառնալով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության սահմանադրականությանը՝ դիմողը գտնում է, որ օրենսդրական կարգավորումների արդյունքում ստացվում է, որ կոնկրետ խտանյութի մասով իրացումից հասույթը որոշելիս ռոյալթի վճարողները, հիշյալ օրենքին և ՀՀ կառավարության 29.12.2011 թ. «Ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1901-Ն որոշման հավելվածին (այսուհետ՝ Կառավարության կողմից սահմանված կարգ) համապատասխան՝ որպես

վարքագծի կանոն, կրում են մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի համար մատակարարի և գնորդի միջև կնքված պայմանագրով որոշված գինը հիմք ընդունելու պարտականություն, սակայն անկախ նման պարտականության կատարման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքից այդ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության ուժով, ռոյալթի վճարողների կողմից հաշվետու տարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով օրենքի և Կառավարության կողմից սահմանված կարգի դրույթների հիման վրա հաշվարկված խտանյութի իրացումից հասույթը նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից 10 տոկոս և ավելի չափով ցածր լինելու պարագայում հարկային մարմինն վերապահվել է իրավասություն իրականացված ստուգման արդյունքում վերահաշվարկել արտադրանքի, այսինքն՝ նաև խտանյութի իրացումից հասույթի մեծությունը, նաև օրենքով նախատեսված տույժեր և տուգանքներ նշանակելու միջոցով խտանյութ իրացրած տնտեսվարող սուբյեկտին առաջադրել դրամական տեսքով պարտավորություն, ինչի պարագայում հարկային մարմնի խնդրո առարկա իրավասությունը հակադրվում է ռոյալթի վճարողների խտանյութի իրացումից հասույթը մատակարարի և գնորդի միջև կնքված պայմանագրի գինը հիմք ընդունելու միջոցով հաշվարկելու պարտականությանը: Վերոնշյալ իրավակարգավորման վերաբերյալ իր դիրքորոշումները ներկայացնելով դիմողը գտնում է, որ դրանք նույնպես հակասում են իրավական որոշակիության սկզբունքին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի հարկային մարմինների կողմից ռոյալթիների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողության իրավասությունը չի ենթադրում միջամտություն քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կարգավորվող պայմանագրի կողմերի կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, ազատ կամահայտնության դրսևորմանը. վերջինս ոչ այլ ինչ է, քան պետության սեփականությունը հանդիսացող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով պետական բյուջե վճարվող վճարի գանձումն ապահովող արդյունավետ մեխանիզմ:

Ըստ պատասխանողի՝ վերը ներկայացված ամբողջ իրավակարգավորումների վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավական կարգավորումը բնավ չի հակադրվում նույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորմանն այն առումով, որ պետությունը հանձինս հարկային մարմինների, բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումներն իրականացնում է ոչ թե որպես քաղաքացիաիրավական գործարքի կողմ, այլ օգտվում է պետության սեփականությունը հանդիսացող բնական պաշարների օգտագործման վերահսկման իր օրինական իրավասությունից:

Պատասխանողի կարծիքով դիմողի պնդումն առ այն, որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող նորմի, այն է՝ 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ հարկային մարմիններին վերապահված արտադրանքի իրացումից հասույթի մեծությունը վերահաշվարկելու իրավասությունը որպես նույն օրենքի պահանջները խախտելու համար սահմանված պատասխանատվության միջոց նախատեսելը, նույն օրենքով ռոյալթի վճարողների համար վարքագծի նման կանոնի բացակայության, այն է՝ խտանյութի իրացումից հասույթի մեծությունը միջազգային միջին գների հիման վրա կամ դրանց հաշվառմամբ որոշելու պարտականություն դրված չլինելու պայմաններում, առաջացնում է իրավական անորոշություն, ևս անհիմն է:

Ըստ պատասխանողի՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ օրենսդիրը նպատակ չի հետապնդել սահմանել առկա կարգավորումից տարբերվող այլ կարգավորում, այլ ընդամենը հստակեցրել է օրենսդրությամբ սահմանված ռոյալթիի ինքնուրույն հաշվարկման կանոնները խախտելու համար վրա հասնող հետևանքները և, արդարացիորեն, որպես բնական պաշարների բացառիկ սեփականատեր, իր կողմից լիազորված մարմնին՝ հարկային մարմնին, վերապահել է արտադրանքի իրացումից հասույթի մեծությունը վերահաշվարկելու իրավասություն այս դեպքում խտանյութի իրացումից հասույթի մեծության հաշվարկման հիմքում դնելով Կառավարության լիազորած

մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված գինը:

Ըստ պատասխանողի՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ ներկայացված իրավակարգավորման մեջ ոչ միայն առկա չէ իրավական անորոշություն, այլև, ընդհակառակը, հիշյալ իրավահարաբերությունների մասնակիցների ռոյալթի վճարողների համար կանխատեսելի և հստակ են դառնում իրենց ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները:

Պատասխանողը փաստում է, որ պետությունը, հանդիսանալով բնական պաշարների բացառիկ սեփականատեր, սեփականության իրավունքով իրեն պատկանող բնական պաշարները օգտագործողների նկատմամբ ունի վերահսկողության իրավասություն, որի ապահովման նկատառումներից էլնելով՝ օրենսդիրը սահմանել է վիճարկվող իրավակարգավորումները:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) բնօգտագործման վճարը՝ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժով, արդյոք պարտադիր վճար էր, թե՞ քաղաքացիաիրավական պայմանագրային պարտավորություն,

2) 2017 թվականին հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի դրույթների միջև առկա էր արդյոք հակասություն, որը, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-816 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, հանգեցնում էր իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի խախտման,

3) սահմանում էր արդյոք 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը միջազգային միջին գներով առաջնորդվելու պարտականություն,

4) ռոյալթի վճարողների նկատմամբ արտադրանքի իրացումից հասույթը նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից 10 տոկոս և ավելի չափով ցածր լինելու համար պատասխանատվություն սահմանող դրույթը 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանափակում էր արդյոք տնտեսական գործունեության հիմնական ազատությունը, և եթե սահմանափակում էր, արդյոք ք հակասում էր իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը գնահատելու է Սահմանադրության 59-րդ հոդվածում ամրագրված՝ տնտեսական գործունեության ազատության պաշտպանության, ուստի՝ դրա ենթադրյալ սահմանափակման որոշակիության, այն է՝ Սահմանադրության 79-րդ հոդվածի, իսկ բնօգտագործման վճարների բնույթը որոշարկելու համար՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի տեսանկյունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվում է յուրաքանչյուր անձի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, ընդ որում, հիշյալ իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Այս ազատությունը Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով տարածվում է նաև իրավաբանական անձանց վրա:

Սահմանադրության 59-րդ հոդվածի հաջորդ մասերում սահմանվում են տնտեսական մրցակցության ազատության սահմանափակման իրավական հիմքերը: Ըստ այդմ՝ մրցակցությունը կարող է սահմանափակվել, իսկ մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Սակայն ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ շուկայում մենաշնորհը կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Այսպիսով, նախ՝ տնտեսական ազատության իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով, ինչը ոչ թե սահմանափակում է, այլ հիմնական ազատության իրականացման կանոնակարգում: Տվյալ դեպքում խոսքն այնպիսի հիմնական ազա-

տության մասին է, որի իրականացումը՝ ըստ անհրաժեշտության, կարող է կանոնակարգվել օրենքով: Օրենսդիրը Սահմանադրության ուժով պարտավոր չէ տնտեսական գործունեության բոլոր տեսակների և բոլոր մանրամասների համար կարգավորումներ նախատեսել, սակայն իրավասու է դա անել, եթե տնտեսական ազատության իրականացումը շոշափում է այլոց կամ հանրության շահերը:

Տնտեսական ազատության սահմանափակումները, ինչպես մնացած դեպքերում, սահմանվում են հենց Սահմանադրությամբ՝ Սահմանադրության 59-րդ հոդվածի 2-րդ մասով, որը թույլատրում է մրցակցության սահմանափակում, մենաշնորհների առկայություն՝ պայմանով, որ և՛ մրցակցության սահմանափակումները, և՛ մենաշնորհների հնարավոր տեսակները և թույլատրելի չափերը սահմանվեն օրենքով՝ հետապնդելով բացառապես հանրային շահերի պաշտպանության նպատակ: Մյուս կողմից՝ Սահմանադրությունը հատուկ սահման է դնում նաև տնտեսական ազատության հիշյալ սահմանափակումների համար՝ արգելելով շուկայում մենաշնորհը կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները:

Բացի հատուկ սահմանափակումներից վերաբերող հիշյալ պահանջից, տնտեսական գործունեության ազատության որևէ սահմանափակում պետք է բավարարի նաև Սահմանադրության՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին վերաբերող ընդհանուր պահանջները, որոնք ամրագրված են Սահմանադրության 73-75-րդ, ինչպես նաև 77-81-րդ հոդվածներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթները վերաբերում են օրենքով ինչպես տնտեսական գործունեության ազատության իրականացման պայմաններ և կարգ սահմանելուն, այնպես էլ ստուգումներ անցկացնելու և պատասխանատվություն սահմանելու միջոցով՝ այդ ազատության սահմանափակումներին:

Սույն գործի շրջանակներում իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող իրավական որոշակիության սկզբունքն է դիտարկվելու որպես սահմանադրականության գնահատման չափանիշ, որն իր ավելի կոնկրետացված ամրագրումն է ստացել Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում, ինչպես նաև Սահմանադրության 79-րդ հոդվածում:

Որոշակիության սկզբունքի վերաբերյալ հիմնավորումներն են դրվել նաև դիմողի կողմից Սահմանադրական դատարանին ուղղված խնդրանքի հիմքում:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ տնտեսական ազատության սահմանափակումների սահմաններին վերաբերող վերը հիշատակված ընդհանուր սահմանադրական այլ պահանջները, Սահմանադրության 59-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հատուկ սահմանափակումները, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասում դրանց սահմաններին վերաբերող հատուկ պահանջները էական մասով վերաբերելի չեն սույն սահմանադրափրավական վեճի լուծմանը:

Ընդամին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ տնտեսական գործունեության ազատության հատուկ սահմանափակումները ամրագրված են Սահմանադրության 59-րդ հոդվածում, և այդ ազատության այլ սահմանափակումներ Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրված չեն, մինչդեռ տնտեսական գործունեության ազատությունը խարսխվում է սեփականության հիմնական իրավունքի վրա՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրա երեք իրավագործություններով հանդերձ, որը Սահմանադրության ուժով ենթակա է սահմանափակումների: Տնտեսական գործունեության ազատությունը սեփականության իրավունքի իրավագործություններից առնվազն որևէ մեկի իրականացման եղանակ է, ուստի այդ ազատությունը և սեփականության իրավունքը բովանդակային առումով փոխկապակցված են: Հետևապես՝ սեփականության իրավունքի՝ օրենքով նախատեսվող սահմանափակումները ներգործում են տնտեսական գործունեության ազատության վրա՝ *mutatis mutandis* հնարավոր դարձնելով այդ ազատության սահմանափակումները նաև Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված հիմքերով: Այսպես, օրինակ, սույն սահմանադրափրավական վեճի առարկա հանդիսացող՝ բնօգտագործման վճարի իրավական բնույթի հարցն ուղղակիորեն ածանցվում է սեփականության իրավունքի սահմանափակման այնպիսի հնարավորությունից, որն ամրագրված է Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: Օրենքին համապատասխան պարտադիր այլ վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը զուգորդվում է

օրենքով պարտադիր վճարներից չազատված բոլոր տեսակի տնտեսական գործունեությանը:

4.2. Տնտեսական գործունեության ազատությունը՝ փոխկապակցված սեփականության իրավունքի հետ, ի թիվս այլնի, ցանկացած տնտեսվարի հնարավորություն է ընձեռում ստանձնելու նաև քաղաքացիաիրավական պարտավորություններ:

Սույն սահմանադրաիրավական վեճի առարկային վերաբերում է այն հարցը, թե բնօգտագործման վճարը, 2017 թվականին հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, արդյոք պարտադիր վճար էր, թե՞ քաղաքացիաիրավական պայմանագրային պարտավորություն: Ընդ որում՝ այս հարցին պատասխանելու համար Սահմանադրական դատարանը պետք է վերլուծի 2017 թվականի հունվարի 27-ի դրությամբ գործած և ներկայումս ուժը կորցրած համապատասխան օրենքի, ինչպես նաև այլ վերաբերելի իրավադրույթներ, այլ ոչ թե գործող Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը, որը վեճի առարկայի շրջանակներից դուրս է, ուստի Սահմանադրական դատարանը չի կարող անդրադառնալ այն հարցին, թե արդյոք գործող Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով բնօգտագործման վճարը Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի իմաստով պարտադիր վճարում է, թե ոչ:

Ինչ վերաբերում է 2017 թվականին հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքին, որն այլևս կորցրել է իր իրավաբանական ուժը, սակայն կիրառվել է դիմող՝ Վերաքննիչ վարչական դատարանում իրականացվող վարչական դատավարության մասնակիցներից մեկի նկատմամբ, ապա Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-816 որոշման մեջ արդեն իսկ անդրադարձել է բնօգտագործման վճարի իրավական բնույթին:

Այսպես՝ համաձայն հիշյալ որոշման՝ Սահմանադրական դատարանը գտել է. «... ի տարբերություն բնօգտագործման վճարի, պետության կողմից բնապահպանական վճարի հավաքագրումը նպատակաուղղված է բնապահպանական միջոցառումների իրականացմանը, որում էլ դրսևորվում է վճարի այդ ձևի հանրային, այսինքն՝ պարտադիր բնույթը»: Իսկ բնօգտագործման վճարը Սահմանադրական դատարանը բնորոշել է որպես «գույքի օգտագործ-

ման դիմաց գանձվող վճար» և «քաղաքացիական իրավահարաբերությունների տարր», որի գանձման համար «... իրավական հիմք է հանդիսանում ընդերքի սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է լիազորված մարմնի միջոցով, և ընդերքն օգտագործողի միջև կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը»: Ըստ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման՝ «Օրենսդիրը բնօգտագործման վճար սահմանելիս այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ընդերքի օգտագործման դիմաց տրվող վարձավճար, և վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերություններին տվել է քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում ...»: Ըստ այդմ՝ «... բնօգտագործման վճարները չեն հանդիսանում պարտադիր վճարներ ...»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի իմաստով պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր վճարումների սահմանումը, հետևաբար՝ նաև դրանց տարանջատումը քաղաքացիաիրավական պարտավորություններից վերապահված են օրենսդիրն: Օրենսդիրը պետք է սահմանի նաև այդ վճարումների հասկացությունը, տեսակները, ամրագրի Սահմանադրությամբ սահմանված պարտականության իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ այն հաշվով, որպեսզի Սահմանադրության 39-րդ հոդվածի երկրորդ նախադասության հաշվառմամբ ըստ որի՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, հիշյալ սահմանադրական պարտականությունը կոնկրետացվի պարտադիր վճարումներին վերաբերող օրենքներում և, իր հերթին, անհրաժեշտության դեպքում մանրամասնեցվի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում: Ընդամին, հարկ է նշել, որ սահմանադրական պարտականությունները ոչ այլ ինչ են, քան որևէ հիմնական իրավունքի սահմանափակումներ, որոնք, իրենց հերթին, կանոնակարգվելով օրենքներում և դրանց հիման վրա արձակված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, հենվում են այն ելակետի վրա, որ հիշյալ օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է բավարարեն իրավական որոշակիության պահանջը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ իր վերոնշյալ որոշման կայացման ժամանակ, այն է՝ 2009 թվականի հուլիսի 18-ին, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների

հիմքում դրվել է այդ ժամանակ գործած խմբագրությամբ հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության վերլուծությունը: Այդ հոդվածը, որը սահմանում էր բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունները, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-816 որոշումն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխվել է մեկ անգամ՝ 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-284-Ն օրենքով: Փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ է շարադրվել բնօգտագործման վճարի հասկացությունը, չի վերաբերել դրա իրավական բնույթի փոփոխությանը, այլ մասամբ կրել է խմբագրական, մասամբ դրա բովանդակությունը կոնկրետացնող բնույթ: Հետևապես, Սահմանադրական դատարանի ՄԴՈ-816 որոշմամբ արձանագրված՝ բնօգտագործման վճարների քաղաքացիաիրավական բնույթը 2017 թվականի հունվարի 27-ի դրությամբ փոփոխություն չէր կրել, ուստի՝ այդ մասով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-816 որոշման վերանայման անհրաժեշտություն առկա չէ:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր ՄԴՈ-816 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ համաձայն 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ուժը կորցրած Հայաստանի Հանրապետության օրենքի՝ բնօգտագործման վճարներ կատարելը եղել է քաղաքացիաիրավական պայմանագրային պարտավորություն:

Ինչպես նշվեց Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել ներկայումս գործող Հարկային օրենսգրքով սահմանված բնօգտագործման վճարների իրավական բնույթը, քանի որ հիշյալ օրենսգրքի վերաբերելի դրույթների սահմանադրականությունը չի վիճարկվում Սահմանադրական դատարանում:

4.3. Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք պետությունը՝ որպես ընդերքօգտագործմանը վերաբերող քաղաքացիական պայմանագրի կողմ, 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրավասու էր հանրային իրավունքի շրջանակներում իրականացնել ստուգումներ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են: Հարկ է նշել, որ Սահմանադրության այս հոդվածն ուժի մեջ է մտել դեռևս 2015 թվականին (Սահմանադրու-

թյան 209-րդ հոդվածի 1-ին մաս), հետևապես՝ սույն գործով վիճարկվող իրավադրույթների գործողության ժամանակ արդեն իսկ ուժի մեջ էր: Իսկ Սահմանադրության 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը, այսինքն՝ նաև ընդերքը: Սահմանադրության այս հոդվածն ուժի մեջ է մտել արդեն 2018 թվականի ապրիլի 9-ին, այսինքն՝ սույն գործով վիճարկվող իրավադրույթների գործողության ժամանակ դեռևս ուժի մեջ չէր մտել: Սակայն այն ժամանակ գործած՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Կառավարությունը կառավարում էր պետական սեփականությունը, ուստի գործող և նախորդ խմբագրությամբ Սահմանադրության վերաբերելի հոդվածները, այսինքն, նաև Կառավարության՝ ընդերքը կառավարելու լիազորությունը, նույնական են:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ ցանկացած միջամտություն տնտեսական գործունեությանը, այդ թվում՝ ստուգումները, սահմանափակում են տնտեսական գործունեության ազատությունը: Հաշվի առնելով Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածների վերոնշյալ փոխկապակցվածությունը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավագործություններից որևէ մեկի միջոցով տնտեսական գործունեության ազատության իրականացումը կարող է սահմանափակվել, մասնավորապես, այդ գործունեության ժամանակ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ օրենքին համապատասխան հարկեր, տուրքեր մուծելու, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու պարտականությունն ապահովելու նպատակով: Սահմանադրական դատարանի գնահատմամբ այս պարտականությունն սկզբունքորեն կարող է տարածվել նաև քաղաքացիաիրավական պայմանագրային պարտավորությունների վրա, եթե դա հատուկ կանոնակարգվի օրենքով: Սակայն այդպիսի կանոնակարգումների սահմանադրականության հարցը դուրս է սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներից:

Այս մոտեցումն է ամրագրվել 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասում, ըստ որի՝ հիշյալ օրենքը չի տարածվում պետական մարմնի և տնտեսավարող

սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի շրջանակներում պետական մարմնի կողմից որպես գործարքի կողմ իրականացվող ստուգումների վրա: Չնայած նման կարգավորմանը՝ նույն օրենքի վիճարկվող 1-ին հոդվածի 4-րդ մասով որպես թեմատիկ ստուգումների տարատեսակ, *expressis verbis* (հստակ բառերով) նշվում էին բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները:

Նույն հոդվածի տարբեր մասերի միջև այս բախումը (կոլիզիան) իրավակիրառ պրակտիկայում պետք է իր լուծումն ստանար սույն գործով վիճարկվող իրավադրույթների գործողության ժամանակ գործած և ներկայումս ուժը կորցրած՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի դրույթների կիրառմամբ, ինչը տեղի չի ունեցել: Իսկ Սահմանադրական դատարանի համար որևէ սովորական կամ սահմանադրական օրենքի նորմ չի կարող դրվել սահմանադրականության գնահատման հիմքում, քանի որ Սահմանադրական դատարանը՝ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ուժով ապահովում է Սահմանադրության գերակայությունը՝ կաշկանդված լինելով բացառապես Սահմանադրությամբ:

Ինչ վերաբերում է Սահմանադրության վերաբերելի դրույթներին, ապա Սահմանադրական դատարանի համար հիմք են վերը հիշատակված՝ գործող Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասը և 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ կետը: Ըստ այդմ՝ Սահմանադրությամբ կանխորոշվել է Կառավարության՝ ընդերքը կառավարելու լիազորության օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտությունը: 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող դրույթով, ի բացառություն ընդհանուր կանոնի, ընտրվել էր բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումների ընթացակարգը, որով պետությունը պարզում է բնօգտագործման վճարների մասով մասնավոր անձանց քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարումը:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-816 որոշման մեջ հանգել է հետևության, որ «... բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերա-

հսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, ... այլ վերջինիս կողմից սեփականտիրոջ առջև ստանձնված պայմանագրային պարտավորությունների կատարումը»:

Հիշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանն անդրադարձել է դեռևս այն ժամանակ բնօգտագործման վճարներին վերաբերող օրենքների և իրավակիրառ պրակտիկայի անհստակություններին: Ըստ այդ որոշման՝ «... օրենսդիրը ևս տարբեր օրենքներում հետևողականություն չի դրսևորել բնօգտագործման վճարի բնույթը հստակ արտահայտելու հարցում»: Սահմանադրական դատարանը փաստել է, որ «նման իրավիճակի բացառման և օրենսդրական հստակ կանոնակարգման խնդիրը պետք է լուծվի ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության շրջանակներում»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթների գործողության ժամանակ այս խնդիրը դեռևս իր ամբողջական լուծումը չէր ստացել, իսկ գործող Հարկային օրենսգրքում այդ խնդրի լուծմանը, ինչպես արդեն նշվեց, Սահմանադրական դատարանը չի կարող անդրադառնալ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բնօգտագործման վճար վճարողների կողմից պետության առջև իրենց քաղաքացիաիրավական պարտավորության կատարումը պետության կողմից կարող է ստուգվել ստուգումներին վերաբերող օրենքով նախատեսված գործիքակազմի միջոցով՝ այդ օրենքով նախատեսված սահմաններում: Իսկ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տարբեր անհստակությունները չեն հանգեցնում իրավական որոշակիության՝ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված պահանջի խախտման. բնօգտագործման վճարների վերաբերյալ կարգավորումները հստակ են, ակնհայտորեն բացառություն են հիշյալ օրենքի՝ քաղաքացիական իրավահարաբերությունների վրա չտարածվելու կանոնից, ուղղակիորեն ամրագրվում է ստուգման առարկան, այն է՝ բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման ճշտությունը պարզելը:

Այսպիսով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող դրույթով սահմանվում են տնտեսական գործունեության ազատության՝ ստուգման եղանակով սահ-

մանափակման հիմքը, ծավալը, բնօգտագործման վճար վճարող մասնավոր անձանց համար հստակ է իրենց կողմից դրսևորվելիք վարքագիծը, և վիճարկվող դրույթը թույլ է տալիս այն համապատասխանեցնել վերջինիս պահանջներին:

4.4. Սահմանադրական դատարանը փաստում է, որ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ «Ռոյալթիի հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունը» վերտառությամբ 13.9-րդ հոդվածով սահմանվում էր, որ ռոյալթիների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության հարկային մարմինները:

Իսկ հիշյալ օրենքի վիճարկվող՝ «Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ սահմանվում էր.

«Եթե հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում պարզվում է, որ ռոյալթի վճարողների կողմից հաշվետու տարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով արտադրանքի իրացումից հասույթը 10 տոկոս և ավելի չափով ցածր է նույն ամսվա արդյունքներով խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությունից, ապա հարկային մարմինները վերահաշվարկում են իրացումից հասույթի մեծությունը՝ այդ ամսվա համար կիրառելով խտանյութի միջազգային միջին գների 90 տոկոսը՝ հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա տվյալ ամսվա համար հայտարարված գինը»:

Հետևապես, բնօգտագործման վճար վճարողների համար պարզ էր, որ հարկային մարմինները հսկողություն են իրականացնում ռոյալթիների հաշվարկման և վճարման նկատմամբ: Օրենքի վիճարկվող դրույթի վերտառությունը երկիմաստություն չէր առաջացնում այն հարցում, որ խոսքը հիշյալ օրենքը խախտելու համար պատասխանատվության մասին էր, այսինքն՝ վիճարկվող դրույթը վերաբերում էր իրավաբանական պատասխանատվության բովանդակությանը և շրջանակներին:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ ո՛չ օրենքով, ո՛չ Կառավարության կողմից սահմանված կարգով կոնկրետ խտանյութի մասով նախատեսված չէր միջազգային միջին գներով առաջնորդվելու պահանջ, ուստի չէր կարող նման վարքագիծ

չդրսևորելու դեպքում սահմանվել պատասխանատվություն, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում էր նույն օրենքը խախտելու համար պատասխանատվություն, որով ամրագրվում էր ոչ միայն արտադրանքի իրացումից հասույթը 10 տոկոս և ավելի չափով ցածր լինելու համար վերահաշվարկ կատարելու պարտականություն, այլև մի շարք այլ կանոնների խախտման համար նախատեսվող պատասխանատվություն՝ սահմանելով ինչպես անհրաժեշտ վարքագիծը, այնպես էլ այն խախտելու համար կիրառվող պատասխանատվության միջոցը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խտանյութի միջազգային միջին գների հիման վրա հաշվարկված հասույթի մեծությամբ պայմանավորված՝ հարկային մարմինների կողմից իրացումից հասույթի մեծությունը վերահաշվարկելու կանոնը վերաբերում էր ռոյալթի վճարողին այնպես, ինչպես պետությանը՝ ի դեմս հարկային մարմինների: Եթե օրենքը հարկային մարմին վերապահում էր արտադրանքի իրացումից հասույթը 10 տոկոս և ավելի չափով ցածր լինելու դեպքում վերահաշվարկ կատարելու իրավասություն և վերահաշվարկման հիմքում դնում էր միջազգային միջին գների պահանջը, ապա դրանից հետևում է, որ տնտեսվարող սուբյեկտը կրում էր պարտականություն՝ արտադրանքի իրացումից հասույթը հաշվարկելիս առաջնորդվել խտանյութի միջազգային միջին գներով: Կնքվող պայմանագիրը նույնպես պետք է համահունչ լիներ օրենքի պահանջներին:

Միջազգային միջին գների պահանջն ամրագրված էր բավարար հստակությամբ, այն Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությանը համապատասխան՝ տնտեսական գործունեության ազատության իրականացման կարգի տարր էր, որի խախտումն առաջացնում էր պատասխանատվություն: Բացի դրանից, որևէ օրենքի որևէ դրույթի ձևակերպումները չեն կարող մեկնաբանվել տվյալ դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթներից, նաև այլ վերաբերելի օրենքների և ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերից անկախ: Ընդամին, իրավական ակտերում կարող են առկա լինել ձևակերպումներ, որոնք պարունակեն որոշակի անհստակություններ, սակայն մեկնաբանման ընդունված մեթոդների կիրառմամբ դրանք կարող են հաղթահարվել՝ չհանգեցնելով իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի խախտման:

Ինչ վերաբերում է դիմողի այն դիրքորոշմանը, որ օրենքում և Կառավարության կողմից սահմանված կարգում բացակայում է որևէ հստակեցում կամ պարզաբանում, թե որն է «խտանյութի միջազգային միջին գներ» եզրույթի էությունն ու նշանակությունը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ, օրենքի վիճարկվող դրույթին համապատասխան, հիշյալ կարգի 9-րդ կետով սահմանվում է, որ նույն կարգի կիրառման իմաստով խտանյութի միջազգային գին է համարվում խտանյութում պարունակվող մետաղների համար ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված գները:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենքի կիրարկումն ապահոված՝ Կառավարության կողմից սահմանված կարգի սահմանադրականությունը դուրս է սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներից, քանի որ այն չի վիճարկվում դիմողի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող դրույթը համապատասխանում էր իրավական որոշակիության սահմանադրական պահանջին, այն արդեն օրենքի մակարդակում կանխատեսելի էր դարձնում օրենքում տնտեսական գործունեության ազատության իրականացման կարգի առանձին բաղադրիչների պահպանման պահանջի խախտման դեպքում պատասխանատվության վրա հասնելու հեռանկարը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ից 5-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ուժը կորցրել է) 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1530



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս. Պապիկյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)/2020
105

կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 20-ի N 178-Ա որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի փետրվարի 28-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի փետրվարի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «2019 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 28-ին Երևանում՝ երկու երկրների միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև երկու երկրների միջև և իրենց տարածքներով տարանցիկ ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների զարգացման գործում համագործակցության նպատակով:

2. Համաձայն Համաձայնագրի՝ ավտոմոբիլային ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները հայկական և բուլղարական կողմերի միջև և նրանց տարածքներով տարանցիկ, ինչպես նաև

դեպի երրորդ երկրներ և երրորդ երկրներից, կիրականացվեն Հայաստանի Հանրապետությունում կամ Բուլղարիայի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցներով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

1) ապահովել Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև, ինչպես նաև նրանց տարածքներով տարանցմամբ կանոնավոր երթերով ավտոբուսներով ուղևորափոխադրումների իրականացումն իրավասու մարմինների կողմից տրվող թույլտվությունների առկայության դեպքում (հոդվ. 3, կետ 1),

2) ապահովել, որ թույլտվությունները տրամադրվեն հայկական և բուլղարական կողմերի իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ, իսկ մերժման որոշումն ընդունվի երկու ամսից ոչ ուշ, եթե չկան որևէ հատուկ պայմաններ (հոդվ. 3),

3) երաշխավորել, որ հայկական և բուլղարական կողմերի միջև և նրանց տարածքներով տարանցիկ ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացվեն առանց թույլտվությունների (հոդվ. 5, կետ 1),

4) ապահովել, որ ավտոբուսով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներն ապահովված լինեն հսկիչ փաստաթղթով (հոդվ. 5, կետ 2),

5) ապահովել, որ փոխադրման թույլտվությունները տրվեն փոխադրողի անունով՝ առանց դրանք այլ փոխադրողի փոխանցման իրավունքի (հոդվ. 6, կետ 1),

6) արգելել կաբոտաժային ուղևորափոխադրումների իրականացումը. տարածաշրջանային ուղևորությունները, որոնք կազմակերպված են նույն փոխադրողի կողմից որոշակի վայր տեղափոխված միայն ուղևորների խմբի համար, չհամարել կաբոտաժային, եթե դրանք ներառված են ճանապարհային տվյալների ցանկում (հոդվ. 6, կետ 2),

7) ապահովել, որ ՀՀ կողմի իրավասու մարմինը բուլղարական կողմի իրավասու մարմնի հետ ամեն տարի փոխանակի թույլտվությունների (քվոտաների) որոշակի քանակ (հոդվ. 9, կետ 1),

8) ապահովել, որ թույլտվությունները տրամադրվեն յուրաքանչյուր հետադարձով ուղևորության և յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար՝ մինչև հաջորդ օրացուցային տարվա հունվարի 31-ը վավերականության ժամկետով (հոդվ. 9, կետեր 4, 5),

9) որպես ընդունող կողմ՝ ՀՀ տարածքում մաքսային տուրքերից ազատել տրանսպորտային միջոցն արտադրողի կողմից ներկառուցված և տրանսպորտային միջոցի երթևեկության և շահագործման համար նախատեսված սովորական բաքում պահպանվող վառելանյութը, ինչպես նաև փոխադրման ժամանակ շահագործման համար անհրաժեշտ քանակով քսանյութերը, եթե պահպանվում են մաքսային օրենսդրության պահանջները (հոդվ. 10, կետ 1),

10) ՀՀ օրենսդրության համաձայն՝ Համաձայնագրով կարգավորվող փոխադրումների համար գանձել հարկեր, վճարումներ և տուրքեր, այդ թվում նաև ճանապարհային ցանցի, կամուրջների և այլ ենթակառուցվածքային օբյեկտների համար, որոնց օգտագործման համար գանձվում են տուրքեր (հոդվ. 10, կետ 2),

11) ապահովել, որ վտանգավոր կամ շուտ փչացող բեռներ փոխադրող ավտոտրանսպորտային միջոցները կահավորված և սարքավորված լինեն Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրման մասին եվրոպական համաձայնագրի և Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդ փոխադրումների համար նախատեսված հատուկ ավտոտրանսպորտային միջոցների մասին համաձայնագրի պահանջներին համապատասխան (հոդվ. 12, կետ 1),

12) ապահովել, որ ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի աշխատանքի շարունակականության և հանգստի վերահսկման նպատակով օգտագործված սարքավորումը համապատասխանի Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի ռեժիմի մասին եվրոպական համաձայնագրի դրույթներին (հոդվ. 12, կետ 2),

13) աջակցել Համաձայնագրի սահմաններում շրջակա միջավայրի անվտանգության և պահպանության չափանիշերին համապատասխանող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմանը (հոդվ. 12, կետ 3),

14) ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը անհրաժեշտ քայլեր ձեռնարկի բուլղարական կողմի իրավասու մարմնի հետ Համաձայնագրի կատարման ու կիրառման և օգտակար տեղեկության փոխադարձ փոխանակման համար (հոդվ. 15, կետ 1):

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով հղում կատարվող «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրման մասին» եվրոպական համաձայնագրի, «Արագ փչացող սննդամթեր-

քի միջազգային փոխադրումների և այդ փոխադրումների համար նախատեսված հատուկ ավտոտրանսպորտային միջոցների մասին» համաձայնագրի և «Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի ռեժիմի մասին» եվրոպական համաձայնագրի դրույթները Հայաստանի Հանրապետության համար իրավաբանական ուժ կստանան սահմանված կարգով վավերացվելուց և ուժի մեջ մտնելուց հետո:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Մահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2019 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՄԴՈ-1531



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թվականի Հոկտեմբերի 21-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ
ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ Ա. Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 20-ի N 175-Ա որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի փետրվարի 28-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի փետրվարի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 21-ին՝ Պրահայում:

2. Արձանագրության նպատակն է Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև հարաբերություններում

դյուրացնել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ուեստմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված և 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կիրարկումը: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113):

3. Արձանագրությունը նախատեսում է մանրամասն կանոններ Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև հարաբերություններում Համաձայնագրի կիրարկման համար (հոդվ. 1): Միաժամանակ, Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ Համաձայնագրի 1-ին հոդվածի «Ժա» կետով նախատեսված՝ դրա 20-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ Համաձայնագրի կիրարկման համար Հայաստանի Հանրապետության պատասխանատու իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունն է:

4. Արձանագրությունով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում, ինչպես սահմանված է Արձանագրության 11-րդ հոդվածում, մյուս կողմի հետ դիվանագիտական ուղիներով փոխանակել իրավասու մարմինների կոնտակտային տվյալները, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների ցանկացած փոփոխության մասին անմիջապես դիվանագիտական ուղիներով այդ մասին ծանուցել մյուս կողմին, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս կողմի իրավասու մարմիններին ծանուցեն նշված կոնտակտային տվյալներում որևէ փոփոխության մասին (հոդվ. 2, կետեր 2 և 3),

- ապահովել, որ հետընդունման և տարանցման դիմումները հիմնականում ուղարկվեն Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՌՀԿԷՀ) միջոցով: Անհրաժեշ-

տության դեպքում դիմումը հնարավոր է ուղարկել փոստի, ֆաքսի կամ պաշտպանված էլեկտրոնային նամակի միջոցով (հոդվ. 3, կետ 1),

- ապահովել, որ հետընդունման և տարանցման դիմումների պատասխանները և այլ հարակից հաղորդակցությունը հիմնականում ուղարկվի ՌՀԿԷՀ-ի միջոցով: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է ուղարկել փոստի, ֆաքսի կամ պաշտպանված էլեկտրոնային նամակի միջոցով (հոդվ. 3, կետ 2),

- համաձայնվել, որ Համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի կարգավորումներին համապատասխան՝ տվյալ անձի փոխադրումն իրականացրած ավիաընկերության կողմից փաստաթղթերի կամ գրավոր հաստատման ներկայացումը նույնպես համարվի *prima facie* քաղաքացիության ապացույց ի լրումն Համաձայնագրի 2-րդ Հավելվածում թվարկված ապացույցների (հոդվ. 4, կետ 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս կողմի իրավասու մարմինների հետ փոխանակեն անձնագրերի և նույնականացման քարտերի նմուշները (հոդվ. 4, կետ 3),

- որպես հայցող կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը մուտքագրի առաջարկվող փոխադրման ժամկետների, մուտքի անցակետի և հնարավոր ուղեկցորդների վերաբերյալ տվյալները հետընդունման դիմումի «Զ» մասում, եթե այդ տվյալները հայտնի լինեն դիմումի ներկայացման պահին, իսկ որպես հայցվող կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը պատասխանի վերոհիշյալ առաջարկին հետընդունման դիմումի պատասխանում (հոդվ. 6, կետ 1),

- եթե Արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությունը չի ներառվել հետընդունման դիմումի մեջ, ապա որպես հայցող կողմ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն այդ մասին ծանուցի հայցվող կողմի իրավասու մարմնին Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետներում, իսկ որպես հայցվող կողմ, ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը պատասխանի այդ առաջարկին հնարավորինս շուտ, բայց առաջարկն ստանալուց հետո առավելագույնը երկու (2) աշխատանքային օրվա ընթացքում (հոդվ. 6, կետ 2),

- ապահովել, որ տարանցման դիմումները ներկայացվեն հայցվող կողմի իրավասու մարմնին նախատեսված տարանցումից առնվազն տասը (10) օրացուցային օր առաջ, իսկ եթե անհրաժեշտ է, ապա այդ դիմումը կպարունակի Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տեղեկությունը, որը կմուտքագրվի տարանցման դիմումի «Գ» մասում (հոդվ. 7, կետ 1),

- ապահովել, որ տարանցման գործողությունը՝ որպես սկզբունք, իրականացվի օդային ճանապարհով և հնարավոր ուղեկցորդների վերաբերյալ մանրամասները, ինչպես շարադրված է Արձանագրության 6-րդ հոդվածի 3-րդ կետում, մուտքագրվեն տարանցման դիմումի «Բ» մասում, և այս տվյալներին վերաբերող ցանկացած փոփոխության մասին ծանուցվի անհապաղ (հոդվ. 7, կետ 2),

- երաշխավորել, որ ուղեկցող խմբի անդամները հայցվող կողմի տարածքում իշխանություն չեն գործադրի, զինված չեն լինի, պարտավորված կլինեն հարգել հայցվող կողմի իրավական համակարգը և իրենց մոտ կունենան հայցվող կողմի տված տարանցման համաձայնության պատճենը (հոդվ. 7, կետ 3),

- Համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ օդային ճանապարհով իրականացվող հետընդունումը և տարանցումը իրականացնել սահմանային հետևյալ անցակետում՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում, եթե այլ բան համաձայնեցված չէ (հոդվ. 8, կետ 1),

- որպես փաստաթուղթ տրամադրող կողմ՝ հոգալ հետընդունման ենթակա անձին փոխարինող ճամփորդական փաստաթղթի տրամադրման հետ կապված հնարավոր ծախսերը (հոդվ. 9, կետ 3) և այլն:

5. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին

և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. 2019 թվականի հոկտեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1532



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թվականի Հոկտեմբերի 28-ին Երեվանում
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝
ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՄԻԱ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ
ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՄԵԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ Ա. Ղազարյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 28-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիա) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 20-ի N 176-Ա որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիա) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մարտի 3-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 28-ին Երևանում:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի ապրիլի 19-ին և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113):

Արձանագրության նպատակն է ստեղծել անհրաժեշտ պայմաններ Համաձայնագրի կիրարկումը դյուրացնելու համար:

Արձանագրությամբ սահմանվում են ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի Հանրապետության կամ Եվրոպական միության անդամ որևէ պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար անհրաժեշտ պահանջները: Արձանագրությամբ կողմերը պայմանավորվում են Համաձայնագրի և Արձանագրության կիրարկման համար պատասխանատու իրավասու մարմինների, սահմանային անցակետերի, հետընդունման և տարանցման դիմումների ընդունման և դրանց ընթացք տալու, հետընդունման ենթակա անձի փոխադրման և ուղեկցման կարգի և հետընդունման կամ տարանցման հետ կապված ծախսերի մասին:

Արձանագրությունը բաղկացած է նախաբանից, 15 հոդվածներից և Հավելվածից:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- դիվանագիտական ուղիներով բուլղարական կողմին անմիջապես ծանուցել իրավասու մարմինների և կապի իր տվյալներին վերաբերող ցանկացած փոփոխության, ինչպես նաև իր սահմանային անցակետերի փոփոխության մասին (1-ին և 2-րդ հոդվածների 3-րդ կետեր),

- հետընդունման դիմումը կամ հետընդունման դիմումի վերաբերյալ պատասխանն իր իրավասու մարմնի միջոցով մյուս կողմի իրավասու մարմնին ներկայացնել Համաձայնագրի 11-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, գրավոր ձևակերպված, հաղորդակցման ցանկացած՝ այդ թվում՝ Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով (3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր),

- ապահովել, որ հետընդունման դիմումի կամ հետընդունման դիմումի վերաբերյալ իր պատասխանի մեջ առկա անձնական տվյալների մշակումը կատարվի Համաձայնագրի 17-րդ հոդվածի դրույթներին համապատասխան (3-րդ հոդվածի 3-րդ կետ),

- եթե հայցող բուլղարական կողմը չի կարող ներկայացնել Համաձայնագրի 1-ին կամ 2-րդ հավելվածներում թվարկված փաստաթղթերից որևէ մեկը, ապահովել, որ բուլղարական կողմի խնդրանքով Բուլղարիայում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների լիազորված ներկայացուցիչները հարցազրույց անցկացնեն հետընդունման դիմումի մեջ ընդգրկված հետընդունման ենթակա անձի հետ Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված ժամկետներում և հարցազրույցի արդյունքների մասին հնարավորինս կարճ ժամկետում, սակայն հարցազրույց անցկացնելու խնդրանք պարունակող հետընդունման դիմումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում տեղեկացնել հայցող կողմին (5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր),

- եթե հարցազրույցի արդյունքում հնարավոր չի լինում հաստատել հետընդունման ենթակա անձի քաղաքացիությունը, ապա որպես հայցվող կողմ՝ հարցազրույցի արդյունքները հայցող բուլղարական կողմին ներկայացնել հետընդունման դիմումի վերաբերյալ որոշման հետ միասին, իսկ եթե համապատասխան անձը չի ներկայանում հարցազրույցին, ապա տեղեկացնել տվյալ իրավիճակի պատճառների մասին և բուլղարական կողմի հետ սահմանել նոր ժամանակահատված (5-րդ հոդվածի 3-րդ կետ),

- Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր կազմված տարանցման դիմումը բուլղարական կողմի իրավասու մարմնին ներկայացնել հաղորդակցության ցանկացած, այդ թվում՝ Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով, նախատեսված տարանցումից առնվազն 7 (յոթ) օրացուցային օր առաջ, ինչպես նաև ապահովել, որ Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված տվյալներից բացի, տարանցման դիմումը պարունակի նաև երաշխիք առ այն, որ անձը ընդունվում է վերջնական նպատակակետ հանդիսացող պետության կողմից (6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր),

- որպես հայցվող կողմ՝ տարանցման դիմումի պատասխանը հայցող բուլղարական կողմի իրավասու մարմնին ներկայացնել Համաձայնագրի 15-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված ժամկետներում (6-րդ հոդվածի 3-րդ կետ),

- եթե տարանցումը հետաձգվել է որևէ իրավական կամ գործնական խոչընդոտի պատճառով, անմիջապես, սակայն ոչ ուշ, քան տարանցումից 1 (մեկ) օր առաջ բուլղարական կողմի իրավասու մարմնին տեղեկացնել խոչընդոտների մասին և նշել տարանցման համար նախատեսված ժամը և վայրը (6-րդ հոդվածի 5-րդ կետ),

- ապահովել, որ տարանցման դիմումի և պատասխանի մեջ ներառված անձնական տվյալների մշակումը կատարվի Համաձայնագրի 17-րդ հոդվածի դրույթների համաձայն (6-րդ հոդվածի 6-րդ կետ),

- որպես հայցող կողմ՝ Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով հայցվող բուլղարական կողմին տեղեկացնել անձի փոխադրման եղանակների և տրանսպորտային միջոցների մասին, ինչպես նաև որպես հայցվող կողմ՝ հնարավորինս կարճ ժամկետում, սակայն փոխադրման վերաբերյալ տեղեկությունն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 4 աշխատանքային օրվա ընթացքում փոխադրման եղանակների ընդունելի լինելու մասին տեղեկացնել մյուս կողմին (7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր),

- եթե փոխադրումը հետաձգվել է որևէ իրավական կամ գործնական խոչընդոտի պատճառով, ապա մյուս կողմին տեղեկացնել խոչընդոտների մասին և նշել փոխադրման նախատեսված ժամը և վայրը (7-րդ հոդվածի 3-րդ կետ),

- սխալմամբ կատարված հետընդունման դեպքում Համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված ժամկետում և պայմաններով վերադարձնել հետընդունված անձին, իսկ որպես հայցվող կողմ հանդես գալու դեպքում՝ մյուս կողմին վերադարձնել ներկայացված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև անմիջապես ջնջել այն տվյալներն ու փաստաթղթերը, որոնց փոխանցումը կատարվել է էլեկտրոնային եղանակով (8-րդ հոդված),

- այն դեպքում, երբ հետընդունման կամ տարանցման ընթացքի մեջ գտնվող անձը պետք է ուղեկցվի, ապա ծանուցման մեջ ներկայացնել տեղեկություններ ուղեկցող(ներ)ի վերաբերյալ. անուն և ազգանուն, ուղեկցողների պաշտոնները, անձնագրերի տեսակները, դրանց համարը և տրման ամսաթիվը, թռիչքի համարը, ժամանման և մեկնման օրը և ժամը, իսկ ուղեկցողների տվյալների որևէ փոփոխության դեպքում՝ անմիջապես տեղեկացնել հայցվող բուլղարական կողմի իրավասու մարմիններին (9-րդ հոդվածի 1-ին կետ),

- ապահովել, որ ուղեկցողները կրեն իրենց անձը հաստատող փաստաթղթերը, հետընդունումը և տարանցումը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև հետընդունման կամ տարանցման ենթակա անձի ճամփորդական փաստաթուղթը և այլ պահանջվող վկայականներ կամ տվյալներ (9-րդ հոդվածի 4-րդ կետ),

- ուղեկցողներին տրամադրել անհրաժեշտ աջակցություն (9-րդ հոդվածի 5-րդ կետ),

- որպես հայցող կողմ՝ ծախսերը հաստատող փաստաթղթերը ներկայացվելուց հետո վաթսուհին (60) աշխատանքային օրվա ընթացքում, եվրոյով փոխհատուցել հայցվող բուլղարական կողմի ծախսերը՝ հետընդունման կամ տարանցման հետ կապված, որոնք, Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, որպես հայցող կողմ հանդես գալու պարագայում պետք է հոգա հայկական կողմը (10-րդ հոդված),

- հետընդունման և տարանցման դիմումները, ինչպես նաև դրանց պատասխանները, նամակագրությունը և Արձանագրության կիրարկման հետ կապված՝ հայկական և բուլղարական կողմերի իրավասու մարմինների միջև խորհրդակցությունները կատարել անգլերենով (11-րդ հոդված),

- Համաձայնագրի և Արձանագրության կիրարկման հետ կապված հարցերով փորձագետների մակարդակով անցկացնել խորհրդակցություններ, իսկ եթե այդ մակարդակով հնարավոր չէ հասնել համաձայնության, ապա հանդիպումն անցկացնել նախարարների մակարդակով (12-րդ հոդված):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի հոկտեմբերի 28-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիա) մասին» համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՄԴՈ-1533



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ
ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 6-ի N 113-Ա որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մարտի 3-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում՝ երկու երկրների մաքսային ծառայությունների միջև փոխադարձ վարչական աջակցությունը ամրապնդելու նպատակով:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ նախնական էլեկտրոնային տվյալներն օգտագործվեն առևտրի անվտանգության պահպանման և օրինական առևտրի դյուրացման համար (հոդված 1, կետ 2),

- ապահովել, որ հետևողական մաքսային վերահսկողություն ապահովելու ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իրականացնի նախնական էլեկտրոնային տվյալների մշտական փոխանակում՝ արդյունավետորեն օգտագործելով ռիսկերի վերլուծության և ռիսկերի կառավարման մեթոդները՝ ՀՀ սահմանը հատող տրանսպորտային միջոցների և ապրանքների մաքսային ընթացակարգերի անխափան գործածման նպատակով (հոդված 2),

- ապահովել, որ Արձանագրության շրջանակներում փոխանցվող նախնական էլեկտրոնային տվյալները լինեն սահմանափակ հասանելիության: Ապահովել, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն որպես Արձանագրության շրջանակներում փոխանցվող նախնական էլեկտրոնային տվյալներն ստացող, փոխանցված տվյալները չբացահայտի կամ չփոխանցի որևէ երրորդ կողմի՝ առանց այդ տվյալները տրամադրող վրացական կողմի գրավոր համաձայնության (հոդված 3, կետ 1),

- ապահովել, որ Արձանագրության շրջանակներում ստացված տվյալները չփոխանցվեն երրորդ կողմի՝ առանց այդ տվյալները տրամադրած վրացական կողմի գրավոր հաստատման (հոդված 3, կետ 2),

- ապահովել, որ Արձանագրության շրջանակներում փոխանցվող նախնական էլեկտրոնային տվյալները համապատասխանեն անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին (հոդված 3, կետ 3),

- ապահովել, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իր աշխատակազմում նշանակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու կլինեն նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման նպատակով տեխնիկական պահանջների մշակման և իրագործման, փոխանակման մեթոդների սահմանման, նախնական էլեկտրոնային տվյալների նվազագույն բովանդակության մշակման, տրանսպորտային միջոցների և ապրանքների վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման և վրացական կողմից ստացված տվյալներն իրավասու կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցման համար (հոդված 4, կետ 1),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Արձանագրության մեջ հղում է կատարվում 2013 թվականի հունվարի 17-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև «Բազրատաշեն-Սադախլո», «Այրում-Սադախլո», «Գոգավան-Գուգուտի» և «Բավրա-Նինոծմինդա» ցամաքային մաքսային կետերի համատեղ օգտագործման մասին» համաձայնագրին, որը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից հաստատվել է 2013 թվականի ապրիլի 16-ին ՆՀ-67-Ն հրամանագրով:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1534



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԵՂՐԻԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ԱՆՑԱԿԵՏԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

կան բանկի միջև 2020 թվականի փետրվարի 7-ին ստորագրված «Մեդրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի մարտի 26-ի N 375-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2020 թվականի փետրվարի 7-ին ստորագրված «Մեդրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի ապրիլի 1-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի ապրիլի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մեդրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի փետրվարի 7-ին Երևանում՝ Հայաստանի Հանրապետության հարավային սահմանի երկայնքով՝ Մեդրի քաղաքի մոտակայքում, ներկայիս սահմանային անցակետի արդիականացմանն ու ընդլայնմանը օժանդակելու նպատակով:

Համաձայնագրի անբաժան մաս են կազմում թվով 4 հավելվածները. Հավելված 1-ով ներկայացվում է ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նկարագրությունը, Հավելված 2-ը սահմանում է կատեգորիաները, յուրաքանչյուր կատեգորիային հատկացված վարկի գումարը և յուրաքանչյուր կատեգորիայի համար նախատեսված ծախսերի ֆինանսավորման տոկոսային արտահայտությունը, Հավելված 3-ով սահմանվում են հատուկ հաշվի վերաբերյալ կարգավորումները, Հավելված 4-ով՝ բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը:

Համաձայնագրի նկատմամբ կիրառելի են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ)՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները Համաձայնագրի 1-ին հոդվածի 1.01 բաժնով ներկայացվող փոփոխություններով:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է վարկ՝ 10.626.263 եվրո գումարի չափով: Վարկի առաջին վճարման ամսաթիվն է 2023 թվականի ապրիլի 16-ը, իսկ վարկի վերջին վճարման ամսաթիվը՝ 2034 թվականի հոկտեմբերի 16-ը:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- ընդունել, որ մասհանման նվազագույն գումարի չափը 50.000 եվրո է, կանխավճարի նվազագույն գումարի չափը՝ 500.000 եվրո, իսկ չեղարկման նվազագույն գումարի չափը՝ 500.000 եվրո (բաժին 2.02, կետեր «ա», «բ», «գ»),

- վճարել տոկոս՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին (բաժին 2.02, կետ «դ»),

- վարկը վճարել 24 հավասարաչափ (կամ որքան հնարավոր է հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին (բաժին 2.02, կետ «ե», ենթակետ 1),

- վճարել պարտավճար՝ տարեկան 0.5 տոկոսի չափով (բաժին 2.02, կետ «է», ենթակետ 1),

- Ծրագրի նպատակներով, և եթե Բանկը դիմել է, ապահովել, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացի և վարի հատուկ դեպոզիտային հաշիվ՝ Բանկի համար ընդունելի պայմաններով և կարգով ներառյալ համապատասխան պաշտպանությունը հաշվանցումից, առգրավումից և արգելանք դնելուց (բաժին 2.03, կետ «բ»),

- ի լրումն Ստանդարտ պայմանների IV հոդվածում սահմանված ընդհանուր պարտավորությունների և եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել Ծրագիրն ավարտելու համար համապատասխան միջոցների տրամադրումը, ձեռք բերել, պահպանել, թարմացնել և համապատասխանեցնել բոլոր անհրաժեշտ արտոնագրերը, հաստատումներն ու գրանցումները, ապահովել, որ Ծրագրի իրականացման մարմնի համապատասխան ստորաբաժանումները

պատշաճ բարեխղճությամբ և արդյունավետորեն վերահսկեն Ծրագրի ընդհանուր իրականացումն ու կառավարումը (բաժին 3.01),

- եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, հիմնադրել Բանկի համար ընդունելի պայմաններով ծրագրի իրականացման գրասենյակ (կամ այլ թիմի կառուցվածք)՝ համապատասխան ռեսուրսներով և որակավորված անձնակազմով (բաժին 3.02),

- ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների (բացի խորհրդատվական ծառայություններից) գնումն իրականացնել բաց մրցույթների միջոցով, կիրառել Բանկի Գնումների կանոնակարգի III բաժնի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներում սահմանված՝ բաց մրցույթի ընթացակարգերը, խորհրդատուներին ընտրել Բանկի Գնումների կանոնակարգի III բաժնի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերին համապատասխան, բոլոր պայմանագրերն իրականացնել Բանկի Գնումների կանոնակարգով սահմանված ընթացակարգերով և Բանկի նախնական ուսումնասիրումից հետո (բաժին 3.03, «ա», «բ», «գ», «դ» կետեր),

- եթե Բանկի հետ այլ համաձայնություն առկա չէ, ապահովել, որ Ծրագիրն իրականացվի բնապահպանական և սոցիալական օրենքներին և այլ համապատասխան բնապահպանական թույլտվություններին, արտոնագրերին, հավաստագրերին և հաստատումներին համապատասխան, որ Ծրագրի իրականացման մարմինը՝ մոնիտորինգի ենթարկի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացումը, որ հնարավորինս ողջամիտ ժամկետում և Բանկի հետ համաձայնեցմամբ մշակի ու Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում ներառի լրացուցիչ կամ վերանայված մեղմման միջոցները (բաժին 3.04, «ա», «բ», «գ» կետեր),

- ապահովել, որ Ծրագրի իրականացման մարմինը խորհրդատուին անվճար տրամադրի նրա գործառույթները կատարելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները և աջակցությունը, ներառյալ՝ գրասենյակային տարածքը և ֆոտոպատճենահանող սարքավորումները, ինչպես նաև բոլոր փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկություններ, որոնք կարող են առնչվել նրա աշխատանքին (բաժին 3.05 կետ «բ»),

- եթե Բանկի հետ այլ համաձայնություն առկա չէ, մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը հաստատել Պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թթ. ռազմավարությունը և մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ապահովել դրա ընթացիկ իրականացումը, մինչև

2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընդունել կառավարության կանոնակարգեր (երկրորդային օրենսդրություն) տրանսֆերային գնագոյացման մասով կարգավորումների կիրառման վերաբերյալ, Ծրագրի ավարտից հետո՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը, ապահովել հետևյալ օրական հոսքային ցուցանիշները. 900 տրանսպորտային միջոց, 3 000 ուղևոր և 750 բեռնատար տրանսպորտային միջոց, ապահովել հետևյալ միջին սպասելաժամանակը՝ 15 րոպե՝ բեռնատար տրանսպորտային միջոցների համար, 20 րոպե՝ ավտոբուսների համար և 7 րոպե՝ մարդատար տրանսպորտային միջոցների համար, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ապահովել սահմանային համալիր կառավարման 2017-2021 թթ. միջոցառումների ծրագրի շարունակական իրականացումը, մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ապահովել ԵՄ Արևելյան գործընկերության և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման գործընթացների հաջող իրականացումը (բաժին 3.06),

- ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև վարկի ամբողջական մարումը կամ չեղարկումը ապահովել, որ Ծրագրի իրականացման մարմինը հաշվետու տարվա ավարտից հետո՝ 90 օրվա ընթացքում, Բանկին ներկայացնի Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Վարկառուին (այդ թվում՝ Ծրագրի իրականացման մարմին) կամ Ծրագրին առնչվող բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ տարեկան հաշվետվություններ, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության՝ որպես Վարկառուի կողմից իր շահառուներին և լայն հանրությանը պարբերաբար ներկայացվող բնապահպանական և սոցիալական հարցերին առնչվող ցանկացած տեղեկության պատճենը (բաժին 3.07, կետ «ա»),

- ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև Ծրագրի ավարտն ապահովել, որ Ծրագրի իրականացման մարմինը հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո՝ 90 օրվա ընթացքում, ներկայացնի եռամսյակային պարբերական հաշվետվություններ (բաժին 3.07, կետ «բ»),

- անմիջապես Բանկին տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Վարկառուին, կամ Ծրագրին առնչվող ցանկացած այնպիսի միջադեպի կամ դժբախտ պատահարի առաջացման մասին, որն ունի կամ կարող է նշանակալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի կամ հանրության կամ աշխատողների առողջության կամ անվտանգության վրա, անհապաղ

Բանկին ծանուցել այդ միջադեպի կամ դժբախտ պատահարի բնույթի ու դրա վերացման համար ձեռնարկվող քայլերի մասին (բաժին 3.07, «գ» կետ),

- Բանկին անհապաղ ծանուցել աշխատողների կամ հանրության անդամների կողմից որևէ նշանակալից բողոքի կամ պահանջի մասին, որն ուղղված է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Վարկառուին, կամ առնչվում է վերջինիս կամ Ծրագրին, և որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության՝ որպես Վարկառուի, կամ Ծրագրի վրա, կամ որը դարձել է կամ կարող է դառնալ հանրությանը հասանելի տեղեկություն՝ մեղիա ծածկույթի միջոցով կամ այլ կերպ: Այդ ծանուցումից հետո տասն օրվա ընթացքում, ներկայացնել Բանկի համար ընդունելի հաշվետվություն՝ մանրամասնելով ուսումնասիրության արդյունքները վերոնշյալ բողոքի դեպքի առնչությամբ, ինչպես նաև բողոքում կամ պահանջում բարձրացված խնդիրների լուծմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված կամ ձեռնարկելու համար առաջարկվող քայլերի նկարագրությունը (բաժին 3.07, «դ» կետ),

- Ծրագրի կամ դրա ցանկացած մասի կատարման համար պատասխանատու ստորաբաժանումների կամ մարմինների առնչությամբ շարունակաբար իրականացնել գործընթացներ, վարել փաստաթղթեր և հաշիվներ, որոնք, հետևողականորեն կիրառվող միջազգայնորեն ընդունված հաշվապահական ստանդարտներին համապատասխան, ստույգ արտացոլում են Ծրագրին առնչվող գործառնությունները, ռեսուրսներն ու ծախսերը և հնարավորություն են տալիս մոնիտորինգի ենթարկելու և արձանագրելու Ծրագրի առաջընթացը (ներառյալ՝ դրա հետ կապված ծախսերն ու դրանից ստացվելիք օգուտները) (բաժին 4.01, «ա» կետ):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2020 թվականի փետրվարի 7-ին ստորագրված «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկա-

յին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1535



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ս. Սախյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրում ամրագրված պար-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՊՈՒՐ ♦ 2(98)2020

տավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի մարտի 26-ի N 407-Ա որոշմամբ 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի ապրիլի 6-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի ապրիլի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում հիմնվելով 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի վրա և ղեկավարվելով կենսաթոշակային ապահովության բնագավառում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների քաղաքացիների իրավունքներին առնչվող հարաբերությունները կարգավորելու ձգտումով:

2. Համաձայնագիրը կիրառվում է աշխատողների և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ և տարածվում է Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված կենսաթոշակների վրա, ընդ որում պարտադիր կուտակային կենսաթոշակը Հայաստանի Հանրապետությունում նշանակվում և վճարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդվ. 2, կետեր 1,2):

Համաձայնագիրը կիրառվում է նաև կենսաթոշակային ապահովության մասին օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների նկատմամբ, որը փոփոխում և (կամ) լրացնում է Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված դրույթները և չի հակասում Համաձայնագրի նորմերին (հոդվ. 2, կետ 4):

3. Համաձայնագրով նախատեսված է, որ աշխատողների կենսաթոշակային իրավունքների ձևավորումն իրականացվում է կենսաթոշակային վճարների հաշվին՝ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների ձևավորման նույն պայմաններով և նույն կարգով (հոդվ. 3, կետ 1):

4. Ըստ Համաձայնագրի՝ կենսաթոշակի չափերը չեն կարող նվազեցվել, դրանց վճարումը չի կարող կասեցվել կամ դադարեցվել աշխատողի (ընտանիքի անդամի) բնակության վայրը Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետության տարածքում գտնվելու հիմքով, եթե Համաձայնագրով այլ բան սահմանված չէ (հոդվ. 4, կետ 2):

5. Համաձայնագրով նախատեսվում է, որ աշխատողի մահվան դեպքում ընտանիքի անդամն ունի կենսաթոշակի իրավունք՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության համապատասխան (հոդվ. 5, կետ 1): Միաժամանակ, Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ կենսաթոշակի իրավունքը որոշելիս, որի չափը, ըստ կենսաթոշակը նշանակող պետության օրենսդրության, կախված է ընտանիքի անդամների թվից, հաշվի են առնվում ընտանիքի բոլոր անդամները:

6. Ըստ Համաձայնագրի՝ յուրաքանչյուր անդամ պետություն կենսաթոշակի իրավունքը որոշում է իր օրենսդրության համապատասխան՝ ելնելով իր տարածքում կուտակված աշխատանքային ստաժից: Ընդ որում՝ եթե Եվրասիական տնտեսական միության մի անդամ պետության տարածքում կուտակված աշխատանքային ստաժը բավարար չէ կենսաթոշակի իրավունքի ծագման համար, ապա հաշվի է առնվում մյուս անդամ պետությունների տարածքներում այդ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան կուտակված աշխատանքային ստաժը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման ստաժը ժամանակի առումով համընկնում է (հոդվ. 7, կետեր 1,2):

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- որպես աշխատանքի տեղավորման պետություն՝ երաշխավորել, որ աշխատողներին (ընտանիքի անդամներին) կենսաթոշակի

նշանակման և վճարման իրավունքի իրացումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար կիրառվող նույն պայմաններով (հոդվ. 3, կետ 2),

- որպես բնակության պետություն կամ աշխատանքի տեղավորման պետություն՝ երաշխավորել կենսաթոշակի նշանակման և վճարման համար Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին դիմելու աշխատողի (ընտանիքի անդամի) իրավունքը (հոդվ. 3, կետ 3, մաս 1),

- երաշխավորել, որ կենսաթոշակային ապահովության նպատակով դիմումը և մյուս փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին ներկայացնելու ամսաթիվը համարվի դրանք Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության իրավասու մարմին ներկայացնելու ամսաթիվ (հոդվ. 3, կետ 3, մաս 2),

- եթե Համաձայնագրով այլ բան սահմանված չէ, ապա աշխատողին (ընտանիքի անդամին) կենսաթոշակ նշանակելը և վճարելը չմերժել բնակության վայրը մյուս անդամ պետության տարածքում գտնվելու հիմքով (հոդվ. 3, կետ 4),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կենսաթոշակները վճարի նաև աշխատողի (ընտանիքի անդամի) Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության տարածքում բնակվելու դեպքում (հոդվ. 4, կետ 1, մաս 1),

- երաշխավորել աշխատողի (ընտանիքի անդամի) բնակության պետության կամ կենսաթոշակը նշանակած պետության տարածքում կենսաթոշակ ստանալու իրավունքը (հոդվ. 4, կետ 1, մաս 2),

- ապահովել հիմնական կենսաթոշակի որպես աշխատանքային կենսաթոշակի մաս, և կենսաթոշակներին տրվող հավելումների վճարումը միայն աշխատողի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվելու դեպքում (հոդվ. 4, կետ 4, ենթակետ 1),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հավելավճարները և մյուս վճարումները սահմանելիս հաշվի առնել Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետություններում աշխատողին (ընտանիքի անդամին) նշանակված կենսաթոշակները (հոդվ. 4, կետ 5),

- երաշխավորել աշխատողի մահվան դեպքում ընտանիքի անդամի կենսաթոշակի իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդվ. 5, կետ 1),

- ապահովել, որ աշխատողի (ընտանիքի անդամի) կենսաթոշակի իրավունքի ծագման դեպքում, հաշվի առնելով Համաձայնագրի

դրույթները, կենսաթոշակը նշանակի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, անկախ Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետության օրենսդրության համաձայն այդ աշխատողի (ընտանիքի անդամի) կենսաթոշակի իրավունքն առաջանալու օրվանից (հոդվ. 6, կետ 2),

- եթե Հայաստանի Հանրապետության տարածքում կուտակված աշխատանքային ստաժը բավարար չէ կենսաթոշակի իրավունքի ծագման համար, ապա ապահովել, որ հաշվի առնվի Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների տարածքներում և այդ պետությունների օրենսդրության համապատասխան կուտակված աշխատանքային ստաժը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման ստաժը ժամանակի առումով համընկնում է (հոդվ. 7, կետ 2),

- հաշվարկել կենսաթոշակի չափը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ձևով կենսաթոշակային իրավունքներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով Համաձայնագրի դրույթները (հոդվ. 8),

- հաշմանդամություն սահմանելու նպատակով աշխատողի (ընտանիքի անդամի) բժշկական զննումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, եթե նրա բնակության վայրը Հայաստանի Հանրապետությունն է (հոդվ. 9, կետ 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին տեղեկացնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ կատարված՝ Համաձայնագրի կիրառության ոլորտին առնչվող բոլոր փոփոխությունների մասին (հոդվ. 10, կետ 2),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը և իրավասու մարմինը անհատույց հիմունքներով փոխգործակցեն Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների և իրավասու մարմինների հետ (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ) Համաձայնագրի իրագործմանն առնչվող հարցերով (հոդվ. 10, կետ 3, մաս 1),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը փոխգործակցի և Եվրասիական տնտեսական միության

վյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին տեղեկացնի այն հանգամանքների մասին, որոնք հանգեցնում են կենսաթոշակի չափի փոփոխման կամ դրա վճարման դադարեցման (հոդվ. 10, կետ 4),

- երաշխավորել, որ Համաձայնագրի իրագործման շրջանակներում փոխանցված անձնական տվյալները հանդիսանան սահմանափակ տարածման (կոնֆիդենցիալ) տեղեկություններ (հոդվ. 11, մաս 1) և այլ պարտավորություններ:

8. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1536



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ՝
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝
«ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳԱՂՏՆԻ,
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. Աբրահամյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունիսի 18-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 13-ի N 141-Ա որոշմամբ 2018 թվականի հունիսի 18-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի ապրիլի 7-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի ապրիլի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը, ինչպես նաև «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիրն ու գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության՝ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 18-ին Մոսկվայում՝ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) միանալու և, հետևաբար, ֆինանսական շուկաներում կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Արձանագրության վավերացման արդյունքում Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- ապահովել, որ ՀՀ լիազոր մարմինը Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների հասանելիությունն ապահովի եռամսյակի համար՝ հաշվետու եռամսյակին հաջորդող 60 օրացուցային օրվանից ոչ ուշ, իսկ տարվա արդյունքներով՝ հաշվետու տարվան հաջորդող 120 օրացուցային օրվանից ոչ ուշ, «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցում իր պաշտոնական կայքի (այսուհետ՝ պաշտոնական կայք) հատուկ նախատեսված բաժնում (հոդված 3, կետ 1),

- ապահովել, որ ՀՀ լիազոր մարմնի պաշտոնական կայքում տեղադրվեն ֆինանսական շուկայի վիճակի և ֆինանսական կազմակերպությունների գործունեության մասին Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետում շարադրված տեղեկությունները (հոդված 3, կետ 2),

- ապահովել, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ լիազոր մարմինը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնի տվյալներ իր պաշտոնական կայքում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների տեղադրման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների մասին: Այլ պատասխանատու ստորաբաժանումների նշանակման կամ այլ փոփոխու-

թյունների դեպքում ապահովել, որ ՀՀ լիազոր մարմինը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին այդ մասին տեղեկացնի համապատասխան փոփոխությունների կատարման ամսաթվից 30 օրացուցային օրվա ընթացքում: Լիազոր մարմնի փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել մյուս կողմերին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (հոդված 3, կետ 4),

- ապահովել, որ իր իրավասության (լիազորությունների) շրջանակներում ՀՀ լիազոր մարմինը ցանկացած լիազոր մարմնի հարցման հիման վրա իրականացնի տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվության փոխանակում հնարավորինս ամբողջական ծավալով, ներառյալ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված տեղեկատվությունը (հոդված 5, կետ 1),

- ապահովել, որ ՀՀ լիազոր մարմինը գաղտնի տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հարցում ուղարկի միայն իր գործառույթների իրականացման նպատակներով (հոդված 5, կետ 3),

- ապահովել, որ հարցումը կատարվի այն ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հարցումը ժամանակին կատարելը խոչընդոտող կամ հետաձգող հանգամանքների ի հայտ գալու դեպքում ապահովել, որ հարցումն ստանալու օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում ուղարկվի հարցում ներկայացրած մարմնին՝ նշելով հարցումը ժամանակին կատարելը խոչընդոտող կամ հետաձգող պատճառները: (հոդված 9, կետ 1),

- ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում ստացված գաղտնի տեղեկատվությունն օգտագործվի միայն հարցման մեջ նշված նպատակներով (հոդված 12),

- ապահովել, որ գաղտնի տեղեկատվությունը չփոխանցվի որևէ երրորդ կողմի առանց այդ տեղեկատվությունը տրամադրած լիազոր մարմնի գրավոր համաձայնության (հոդված 13, կետ 1),

- ընդունել, որ ՀՀ լիազոր մարմինն ինքն է կրում ՀՀ տարածքում Համաձայնագրի կատարման հետ կապված ծախսերը, եթե լիազոր մարմինների կողմից այլ կարգ չի համաձայնեցվում (հոդված 14, կետ 1),

- որպես Համաձայնագրին միացող պետություն՝ ապահովել գաղտնի տեղեկատվության պաշտպանության այն մակարդակը, որը համարժեք է գաղտնի տեղեկատվության պաշտպանության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված մակարդակին (Հոդված 16):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի հունիսի 18-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 մայիսի 2020 թվականի
ՄԴՈ-1537



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի՝ «ԿՈՒՅՐԵՐԻ,
ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ
ԸՆԹԵՐՑՈՂՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԱՅԼ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՄԱՐԱՔԵՇԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Մարգարյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունիսի 27-ի՝ «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

ցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հունվարի 16-ի N 32-Ա որոշմամբ 2013 թվականի հունիսի 27-ի՝ «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մարտի 6-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» պայմանագիրը (Պայմանագիր) ստորագրվել է 2013 թվականի հունիսի 27-ին Մարաքեշում:

2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

ա) հեղինակային իրավունքը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվել վերարտադրման իրավունքի, տարածման իրավունքի և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի սահմանափակում կամ բացառություն, ինչպես նախատեսված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Հեղինակային իրավունքի պայմանագրով

(WCT), դյուրացնելու ստեղծագործությունների՝ մատչելի ձևաչափով օրինակների մատչելիությունը շահառուների համար: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումը կամ բացառությունը պետք է թույլ տա կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ ստեղծագործությունն այլընտրանքային ձևաչափով մատչելի դարձնելու համար,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել Պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կամ բացառությունների՝ վարձատրության վճարման ենթակա լինելու կամ չլինելու հարցը,

գ) այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը թույլ է տալիս շահառուին, նրա անունից գործող անձին կամ լիազոր մարմնին պատրաստել ստեղծագործության մատչելի ձևաչափով օրինակներ, երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրանց թույլատրվի նաև, առանց իրավատիրոջ համաձայնության, ներմուծել մատչելի ձևաչափով օրինակներ՝ ի շահ շահառուների,

դ) համարժեք իրավական պաշտպանություն և արդյունավետ տեխնիկական միջոցների շրջանցման դեմ արդյունավետ իրավական միջոցներ նախատեսելիս անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցներ ձեռնարկել ապահովելու, որ այդ իրավական պաշտպանությունը չխոչընդոտի շահառուներին օգտվելու Պայմանագրով նախատեսված սահմանափակումներից և բացառություններից,

ե) Պայմանագրով նախատեսված սահմանափակումների և բացառությունների կիրառման ընթացքում ջանքեր գործադրել պաշտպանելու շահառուների անձնական տվյալների անձեռնմխելիությունը, ինչպես մյուսներին՝ հավասար հիմունքներով,

զ) փորձել նպաստել մատչելի ձևաչափով օրինակների միջսահմանային փոխանակմանը՝ խրախուսելով տեղեկատվության կամավոր փոխանակումը լիազոր մարմինների միջև՝ մեկը մյուսին նույնականացնելու նպատակով,

է) ընդունել միջազգային համագործակցության և դրա խթանման կարևորությունը՝ որպես աջակցություն Պայմանագրի նպատակների և խնդիրների իրականացման համար տարվող ազգային ջանքերին,

ը) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Պայմանագրի կատարման համար:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են դյուրացնելու տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ այլ տպագիր ստեղծագործություններին հասանելիության դժվարություններ ունեցող անձանց համար ստեղծագործությունների հասանելիությունն ու օգտագործումը:

4. Պայմանագրին միանալու ժամանակ Ադրբեջանի Հանրապետությունը կատարել է հայտարարություն: Ըստ սույն գործում առկա նյութերի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն առաջարկում է Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացնել կամ հաստատել Ադրբեջանի Հանրապետության կողմից կատարված հայտարարության դեմ Հայաստանի Հանրապետության հետևյալ հայտարարությամբ. «Ադրբեջանի Հանրապետության հայտարարությունը պարունակում է առարկայագուրկ և անհիմն մեղադրանքներ ուղղված Հայաստանի Հանրապետությանը, և խեղաթյուրում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունը, որը հրահրվել ու շարունակվել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի (Արցախի Հանրապետության) ժողովրդի՝ մարդու իրավունքների և ինքնորոշման համար խաղաղ պահանջներին ի պատասխան ուժի կիրառման պատճառով»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի հունիսի 27-ի՝ «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ

դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1538



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԲԵՈՒԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏՈՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՄԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

26 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ Ա. Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի սեպտեմբերի 10-ին Բեռլինում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2013 թվականի ապրիլի 19-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ոեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 13-ի N 143-Ս որոշմամբ 2019 թվականի սեպտեմբերի 10-ին Բեռլինում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2013 թվականի ապրիլի 19-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ոեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մարտի 13-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2013 թվականի ապրիլի 19-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ոեադմիսիայի) մասին» համաձայնագիրը

կիրարկող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի սեպտեմբերի 10-ին Բեռլինում:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի ապրիլի 19-ին և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել Ազգային Ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113):

Արձանագրության նպատակն է ստեղծել անհրաժեշտ պայմաններ Համաձայնագրի կիրարկումը դյուրացնելու համար:

Արձանագրությամբ սահմանվում են ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի Հանրապետության կամ Եվրոպական միության անդամ որևէ պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար անհրաժեշտ պահանջները: Արձանագրությամբ կողմերը պայմանավորվում են Համաձայնագրի և Արձանագրության կիրարկման համար պատասխանատու իրավասու մարմինների, հետընդունման և տարանցման դիմումների ընդունման և դրանց ընթացք տալու, հետընդունման ենթակա անձի փոխադրման և ուղեկցման կարգի և հետընդունման կամ տարանցման հետ կապված ծախսերի մասին:

Արձանագրությունը բաղկացած է նախաբանից, 12 հոդվածներից և Հավելվածից:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- դիվանագիտական ուղիներով գերմանական կողմին անմիջապես տեղեկացնել իր իրավասու մարմինների ցանկում ցանկացած փոփոխության մասին (1-ին հոդվածի 2-րդ կետ),

- ապահովել, որ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան լրացված հետընդունման դիմումն իրավասու մարմնի կողմից ֆաքսով, Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով կամ էլեկտրոնային նամակով ուղարկվի գերմանական կողմի իրավասու մարմնին՝ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետում (2-րդ հոդվածի 1-ին կետ),

- որպես Հայցվող կողմ՝ ապահովել, որ իր իրավասու մարմինը հետընդունման դիմումին պատասխանի Հայցող գերմանական կողմի իրավասու մարմնին ուղղված ֆաքսով կամ էլեկտրոնային նամակով՝ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում (2-րդ հոդվածի 2-րդ կետ),

- եթե իրավասու մարմինը կարծում է, որ Համաձայնագրի 1-4 Հավելվածներում թվարկված փաստաթղթերից կամ լրացուցիչ ապացույցներից բացի կան այլ փաստաթղթեր ևս, որոնք կարևոր են հետընդունման ենթակա անձի քաղաքացիությունը որոշելու կամ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման հիմքերը հաստատելու համար, ապա այդ փաստաթղթերը կամ լրացուցիչ ապացույցները հետընդունման դիմումի հետ ուղարկել գերմանական կողմի իրավասու մարմնին, իսկ որպես Հայցվող կողմ հանդես գալու պարագայում, եթե իրավասու մարմինը հաշվի չի առնում այդպիսի փաստաթղթերը, ապա Հայցող գերմանական կողմի իրավասու մարմնին տեղեկացնել այդ որոշման պատճառների մասին (3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր),

- ապահովել, որ քաղաքացիության հաստատման համար հարցազրույցի մասին գերմանական կողմի իրավասու մարմնի հայցը ֆաքսով կամ էլեկտրոնային նամակով ստանալուց հետո ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն իր նստավայրում կամ իրավասու մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ այլ վայրում հինգ աշխատանքային օրվա ընթացքում առանց հետաձգման, հետընդունման ենթակա անձի հետ անցկացնի հարցազրույց, որին կարող է մասնակցել հայցող կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչը (4-րդ հոդվածի 1-3-րդ կետեր),

- եթե հարցազրույցի արդյունքում հաստատվում է, որ հետընդունման ենթակա անձն իր պետության քաղաքացի է, այդ արդյունքը ճանաչել որպես առերևույթ ապացույց և հայցը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում այդ անձին տրամադրել վերադարձի վկայական (4-րդ հոդվածի 6-րդ կետ),

- տարանցման գործողություններ իրականացնելիս առաջնորդվել Համաձայնագրի 14-րդ հոդվածում թվարկված սկզբունքներով (5-րդ հոդվածի 1-ին կետ),

- հետընդունման և տարանցման գործողությունները, որպես կանոն, իրականացնել օդային ճանապարհով՝ օգտագործելով իր միջազգային օդանավակայանների սահմանային անցակետերը, և միայն առանձին դեպքերում փոխադարձ համաձայնությամբ օգտագործել այլ սահմանային անցակետեր (6-րդ հոդվածի 1-3-րդ կետեր),

- ապահովել փոխանցվող անձնական տվյալների գաղտնիությունը (7-րդ հոդված),
- ուղեկցումների դեպքում երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության ուղեկցողները Հայցվող գերմանական կողմի տարածքում գտնվելու ընթացքում պահպանեն Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքները, առաջադրանքը կատարեն քաղաքացիական հագուստով՝ առանց զենքի և իրենց հետ կրեն վավեր անձնագրեր, ինչպես նաև փաստաթղթեր, որոնք կհաստատեն, որ հետընդունումը կամ տարանցումը և ուղեկցման թույլտվությունը համաձայնեցված են (8-րդ հոդված),
- համագործակցել հայկական կամ գերմանական կողմի տարածքում ուղեկցողների կացության հետ կապված բոլոր հարցերի շուրջ և որպես Հայցվող կողմ, ըստ անհրաժեշտության, աջակցել ուղեկցողներին (8-րդ հոդվածի 6-րդ կետ),
- որպես Հայցող կողմ՝ հոգալ Հայցվող գերմանական կողմի կրած՝ սահմանը հասցնելու հետ կապված հետընդունման կամ տարանցման ծախսերը և փոխհատուցել կատարած ծախսերը՝ եվրոյով, հաստատող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 60 աշխատանքային օրվա ընթացքում (9-րդ հոդված, 1-ին կետ),
- փորձագիտական պատվիրակության կողմից անցկացվող հարցազրույցի դեպքում, որպես Հայցող կողմ, հոգալ պատվիրակության ավիատոմսերի, հյուրանոցի, ինչպես նաև օդանավակայանից հարցազրույցի անցկացման վայր տեղափոխման հետ կապված ծախսերը (9-րդ հոդված, 2-րդ կետ),
- Համաձայնագրի և Արձանագրության մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ծագած խնդիրները լուծել՝ կողմերի իրավասու մարմինների միջև խորհրդակցությունների միջոցով, իսկ եթե այդ միջոցով հնարավոր չէ լուծել, ապա դիմել Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեին (10-րդ հոդված, 2-րդ կետ),
- գերմանական կողմի հետ հաղորդակցությունը իրականացնել անգլերենով (11-րդ հոդված):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությունով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2019 թվականի սեպտեմբերի 10-ին Բեռլինում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2013 թվականի ապրիլի 19-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1539



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվականի Հոկտեմբերի 20-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՆԻԼՅՈՒՔՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԼՅՈՒՔՄԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ
ԴՔՍՈՒԹՅՈՒՆ, ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)
ՄԻՋԵՎ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ)
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ Ա. Ղազարյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունիսի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Բենիյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի փետրվարի 13-ի N 155-Ա որոշմամբ 2018 թվականի հունիսի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Բենիյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև՝ «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրությունում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մարտի 13-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Բենիյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև՝ «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնա-

գիրը կիրարկող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 20-ին Բրյուսելում՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված Համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր), որը ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113), կիրարկումը դյուրացնելու նպատակով:

2. Արձանագրությունը կիրարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքում և Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության տարածքում, որտեղ կիրառելի է Եվրոպական միության գործողության մասին Պայմանագիրը:

3. Սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարում նշել, որ Արձանագրության 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է, որ եթե Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը չի տրամադրել պահանջվող ճամփորդական փաստաթուղթը Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ժամկետում, ապա համարվում է, որ Հայաստանի Հանրապետությունը համաձայնություն է տվել ԵՄ՝ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործմանը: Այդ նպատակով օգտագործվող փաստաթուղթը կցված է որպես Արձանագրության 3-րդ Հավելված:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- Կողմերի հետ փոխանակել Համաձայնագրի իրականացման իրավասություն ունեցող մարմինների և միմյանց պետությունների տարածքներում հավատարմագրված իրենց դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ցուցակները՝ Արձանագրության կնքումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում և Կողմերին անմիջապես ծանուցել նշված ցուցակներում ցանկացած փոփոխության մասին (հոդված 1),

- անմիջապես տեղեկացնել Կողմերին Արձանագրության 1-ին Հավելվածում թվարկված սահմանային անցակետերի ցանկացած փոփոխության մասին (հոդված 2, կետեր 1 և 2),

- ապահովել, որ հետընդունման դիմումը Համաձայնագրի 5-րդ Հավելվածով սահմանված ձևով ներկայացվի անմիջապես հարցում ստացած պետության իրավասու մարմնին գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով, ինչպես նաև ապահովել, որ հետընդունման դիմումով հարցազրույց հայցվելու պարագայում դիմումի պատճենն ուղարկվի նաև հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն (հոդված 3, կետեր 1 և 2),

- հետընդունման առանձին դիմումի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ տրամադրելու կամ ստանալու համար՝ որպես հարցում ներկայացրած պետություն, դիմել հարցում ստացած պետության իրավասու մարմնին (հոդված 3, կետ 3),

- ապահովել, որ հետընդունման դիմումի պատասխանն ուղարկվի հարցում ներկայացրած պետության իրավասու մարմնին գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով՝ այդ պատասխանի պատճենը միաժամանակ ներկայացնելով հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը (հոդված 4, կետ 1),

- հետընդունման դիմումին պատասխանել տասներկու (12) օրացուցային օրվա ընթացքում՝ օգտագործելով Արձանագրության 2-րդ Հավելվածով սահմանված ձևը (հոդված 4, կետ 2),

- որպես հարցում ստացած պետություն՝ ապահովել, որ հետընդունման դիմումի դրական պատասխանի դեպքում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն առանց հետաձգման, բայց ոչ ուշ, քան երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում, հարցում ներկայացրած պետության իրավասու մարմնին ներին տրամադրի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերության և 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն, վավերականության հարյուր քսան (120) օր ժամկետով (հոդված 5, կետեր 1 և 2),

- որպես հարցում ստացած պետություն՝ ապահովել, որ եթե հարցում ներկայացրած պետությունն անկարող է ներկայացնել Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված որևէ փաստաթուղթ, և հարցում ստացած Հայաստանի Հանրապետությունն անկարող է հաստատել հետընդունման ենթակա անձի քաղաքացիությունը

որևէ այլ կերպ, ապա ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն առանց հետաձգման, սակայն ցանկացած պարագայում հետընդունման դիմումն ստանալու օրվանից ամենաուշը հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում, անցկացնի հարցազրույց անձի քաղաքացիությունը պարզելու համար (հոդված 6, կետեր 1 և 2),

- որպես հարցում ստացած պետություն՝ անմիջապես և ցանկացած պարագայում հարցազրույցից հետո ամենաուշը երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել հարցում ներկայացրած պետությանը հարցազրույցի արդյունքների մասին (հոդված 6, կետ 3),

- որպես հարցում ներկայացրած պետություն՝ ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինն առնվազն երկու օր առաջ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով ծանուցի հարցում ստացած պետությանը նախատեսված փոխադրման մասին այդ նպատակով օգտագործելով Արձանագրությանը որպես 4-րդ Հավելված կցված ձևը և այդ ձևի պատճենը տրամադրելով հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը (հոդված 7, կետ 1),

- որպես հարցում ներկայացրած պետություն՝ հետընդունման ենթակա անձին երեք ամսվա ընթացքում փոխադրելու անկարողության դեպքում անհապաղ տեղեկացնել հարցում ստացած պետության իրավասու մարմնին, և երբ անձի փոխադրումը կարող է փաստացի տեղի ունենալ, ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը տեղեկացնի հարցում ստացած պետությանը՝ օգտագործելով Արձանագրության 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված ձևը և փոխադրման համար կիրառելի համապատասխան ժամկետները (հոդված 7, կետ 2),

- որպես կանոն՝ փոխադրումը իրականացնել օդային ճանապարհով, անհրաժեշտության դեպքում կիրառելով չարտերային չվերթներ, իսկ եթե առկա են ցամաքային փոխադրումը հիմնավորող պատճառներ, ապա որպես հարցում ներկայացրած պետություն՝ ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինները հատուկ նշում կատարեն այդ մասին Արձանագրության 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված ձևում (հոդված 7, կետեր 3 և 4),

- ապահովել, որ ծրագրված տարանցման օրվանից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ հարցում ստացած պետության իրավասու մարմիններին ներկայացվի Համաձայնագրի 6-րդ Հավելվածով սահմանված ձևով տարանցման դիմում՝ գրավոր, էլեկտրոնային

փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով (հոդված 8, կետեր 1 և 2),

- ապահովել, որ տարանցման դիմումի պատասխանն Արձանագրության 5-րդ Հավելվածով սահմանված ձևով ուղարկվի հարցում ներկայացրած պետության իրավասու մարմիններին՝ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով համաձայնությունը տարանցմանը (տարանցումը սկզբունքորեն կատարվում է օդային ճանապարհով), տարանցման ծրագրված ժամկետը, նշանակված սահմանային անցակետը, փոխադրման եղանակները և ուղեկցորդների օգտագործումը (հոդված 8, կետեր 3 և 4),

- որպես հարցում ներկայացրած պետություն՝ նշանակել ուղեկցորդներ, որոնք պատասխանատու են տարանցման կամ հետընդունման ենթակա անձին ուղեկցելու համար, որոնք հարցում ստացած պետության տարածքում բոլոր հանգամանքներում գործելու են հարցում ստացած պետության օրենսդրությանը համապատասխան, և որոնց իրավասությունը սահմանափակվում է ինքնապաշտպանությամբ (հոդված 10, կետեր 1, 2 և 3),

- երաշխավորել, որ ուղեկցորդներն իրենց առաջադրանքը կատարեն առանց զենքի և քաղաքացիական հագուստով, ունենան ուղեկցման թույլտվություն, հետընդունման կամ տարանցման համաձայնությունը և նույնականացման քարտ (հոդված 10, կետ 4),

- որպես հարցում ստացած պետություն՝ ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում ուղեկցորդների պարտականությունների կատարման ժամանակ նրանց տրամադրվեն այն նույն պաշտպանությունն ու աջակցությունը, որը տրամադրվում է նույն գործողություններն իրականացնելու լիազորություն ունեցող ՀՀ պաշտոնատար անձանց (հոդված 10, կետ 5),

- որպես հարցում ներկայացրած պետություն՝ Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, հոգալ հետընդունման և տարանցման գործողությունների կապակցությամբ հարցում ստացած պետության կրած ծախսերը, և փոխհատուցել հարցում ներկայացրած պետության կողմից հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, որտեղ կնշվեն նաև հարցում ստացած պետության բանկային տվյալները (հոդված 11),

- համագործակցել Կողմերի հետ Համաձայնագրի և Արձանագրության իրականացման համատեքստում ծագող խնդիրները լուծելու համար (հոդված 12, կետ 1):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Արձանագրության 18-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է, որ Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո դադարում է «Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև 2009 թվականի հունիսի 3-ին ստորագրված՝ «Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի գործողությունը, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդերլանդների Թագավորության) միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին համաձայնագիր» վերստառությամբ՝ Ազգային Ժողովի 2010 թվականի հունիսի 7-ի ԱԺՈ-209-Ն որոշմամբ (ՄԴՈ-857):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի հունիսի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև՝ «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 մայիսի 2020 թվականի
ՄԴՈ- 1540

2(98)2020

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ՎԵՐԱՆԱՅՎԱԾ)
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

26 մայիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դո՛ւրբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունվարի 30-ին ստորագրված «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (վերանայված) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)/2020
163

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի ապրիլի 9-ի՝ «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (վերանայված) վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին» N 512-Ա որոշմամբ՝ միջազգային նշված պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի ապրիլի 27-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի ապրիլի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**:

1. «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (վերանայված) (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2017 թվականի հունվարի 30-ին և ուժի մեջ է մտել 2017 թ. հոկտեմբերի 1-ին: Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիան ստորագրվել է 2018 թ. հունվարի 24-ին:

Կոնվենցիայի անբաժանելի մաս են կազմում 2 հավելվածները, որոնցում ներառված են «Հայտերի ներկայացման ընթացակարգը» և «Կինեմատոգրաֆիական ստեղծագործությունը որակավորող սահմանումը»:

2. Կոնվենցիայի նպատակն է, հաշվի առնելով կինոարդյունաբերության մեջ տեղ գտած տեխնոլոգիական, տնտեսական և ֆինանսական զարգացումները՝ վերանայել 1992 թվականի հոկտեմբերի 2-ին ստորագրված «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» եվրոպական կոնվենցիան՝ նպաստելով կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության համար այդ շրջանակի համապատասխանության և արդյունավետության շարունակաբար ապահովմանը և Կոնվենցիային մասնակից պետությունների կողմից միջազգային կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության զարգացման խրախուսմանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 2(98)2020

3. Կոնվենցիան կարգավորում է Կողմերի տարածքներում ստեղծվող բազմակողմ համատեղ արտադրության բնագավառում Կողմերի հարաբերությունները (հոդվ. 2, կետ 1) և այն կիրառվում է. ա) այն համատեղ արտադրությունների նկատմամբ, որոնք ընդգրկում են Կոնվենցիայի երեք տարբեր Կողմերում հիմնադրված առնվազն երեք համատեղ արտադրողի, և բ) այն համատեղ արտադրությունների նկատմամբ, որոնք ընդգրկում են Կոնվենցիայի անդամ երեք Կողմերում հիմնադրված առնվազն երեք համատեղ արտադրողի և այդ Կողմերի տարածքներում չհիմնադրված մեկ կամ մի քանի արտադրողի: Վերջիններիս ներդրումի հանրագումարը, սակայն, չի կարող գերազանցել արտադրանքի ընդհանուր արժեքի 30%-ը (հոդվ. 2, կետ 2):

4. Ըստ Կոնվենցիայի՝ համատեղ արտադրության պայմանագիրը յուրաքանչյուր համատեղ արտադրողի համար պետք է երաշխավորի կինոնկարի նյութական և ոչ նյութական սեփականության իրավունքները, ընդ որում, այդ պայմանագիրը պետք է ներառի դրույթ, ըստ որի՝ կինոնկարի մաստեր-պատճենը (առաջին ավարտուն տարբերակ) պետք է պահվի համաարտադրողների փոխադարձ համաձայնությամբ ընտրված վայրում, և դրա հասանելիությունը նրանց համար պետք է երաշխավորված լինի (հոդվ. 7, կետ 1):

5. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կողմերի միջև կինեմատոգրաֆիական հարաբերություններում պետք է պահպանվի ընդհանուր հավասարակշռություն՝ հաշվի առնելով ինչպես համատեղ արտադրությամբ նկարահանված կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների ներդրումների ընդհանուր չափի, այնպես էլ ստեղծագործական և տեխնիկական մասնակցությունը: Միաժամանակ, այն Կողմը, որը խելամիտ ժամանակահատվածում դեֆիցիտ է հայտնաբերում մեկ կամ ավել Կողմերի հետ համատեղ արտադրության իր հարաբերություններում, կարող է մերժել հաջորդ համատեղ արտադրությունը հաստատելուց, մինչև այդ Կողմի կամ Կողմերի հետ իր կինեմատոգրաֆիական հարաբերությունների հավասարակշռության վերականգնումը (հոդվ. 10, կետեր 1, 2):

6. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ բազմակողմ համատեղ արտադրությամբ իրականացված կինեմատոգրաֆիական ստեղծագործություններն օգտվեն նշված համատեղ արտադրությանը մասնակցած Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական և կանոնակարգային դրույթների համաձայն ազգային ֆիլմերին վերապահվող բոլոր առավելություններից (հոդվ. 4, կետ 1),

- Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված յուրաքանչյուր համատեղ արտադրողի տրամադրել առավելություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրական և կանոնակարգային դրույթներով նախատեսված պայմաններով ու սահմաններում և սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան (հոդվ. 4, կետ 2),

- ապահովել, որ կինեմատոգրաֆիական ստեղծագործության յուրաքանչյուր համատեղ արտադրություն ստանա Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի իրավասու մարմինների հաստատումը, որտեղ հիմնադրված են համատեղ արտադրողները, այդ իրավասու մարմինների միջև խորհրդակցությունից հետո և I հավելվածում նախատեսված ընթացակարգի համաձայն (հոդվ. 5, կետ 1),

- չտրամադրել համատեղ արտադրության կարգավիճակ ակնհայտորեն պոռնոգրաֆիական բնույթ ունեցող կամ խտրականությունը, ատելությունը կամ բռնությունը արդարացնող կամ բացահայտորեն մարդու արժանապատվությունը ոտնահարող ծրագրերին (հոդվ. 5, կետ 3),

- ապահովել, որ համատեղ արտադրության կարգավիճակով նախատեսված առավելությունները տրվեն այն համատեղ արտադրողներին, որոնք տիրապետում են համարժեք ֆինանսական և տեխնիկական միջոցների և ունեն բավարար մասնագիտական որակավորում (հոդվ. 5, կետ 4),

- տրամադրել համատեղ արտադրության կարգավիճակ ֆինանսական մասնակցությամբ համատեղ արտադրություններին միայն յուրաքանչյուր առանձին գործով իրավասու մարմինների հաստատում ստանալուց հետո՝ մասնավորապես հաշվի առնելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթները (հոդվ. 9, կետ 2),

- Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև գործող միջազգային պարտավորությունների համաձայն դյուրացնել համատեղ արտադրության մասնակից մյուս Կողմերի տեխնիկական և դերասանական անձնակազմերի Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը և կեցու-

թյունը, իր տարածքում աշխատանքի թույլտվության տրամադրումը, ինչպես նաև թույլատրել Կոնվենցիայի շրջանակներում կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների արտադրության և տարածման համար անհրաժեշտ սարքավորումների ժամանակավոր ներմուծումը և վերաարտահանումը (հոդվ. 11),

- ապահովել, որ համատեղ արտադրված կինեմատոգրաֆիական ստեղծագործություններում նշվեն համաարտադրող երկրները, այդ երկրների անունները հստակ հիշատակվեն ֆիլմի տիտրերում, բոլոր հանրային և գովազդային նյութերում, ինչպես նաև այդ կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների ներկայացման ժամանակ (հոդվ. 12) և այլ պարտավորություններ:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայում հղում է կատարվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի հոկտեմբերի 20-ի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիային, (Հայաստանի Հանրապետությունը միացել է 2007 թվականի մայիսի 27-ին (ՄԴՈ-644)) և 1992 թվականի հոկտեմբերի 2-ին ստորագրված «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» եվրոպական կոնվենցիային (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2004 թվականի նոյեմբերի 9-ի ԱԺ Ն-150-3 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 1-ին):

8. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2017 թվականի հունվարի 30-ին ստորագրված՝ «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (վերանայված) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 մայիսի 2020 թվականի
ՍԴՈ-1541



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՌԱՍԶԵՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 47-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 մայիսի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի «ՌԱՍԶԵՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Թևանյանի և Մ. Մանուկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 74-րդ հոդվածի, 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՌԱՍԶԵՍ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)/2020
169

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետև՝ **Օրենք**) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ից:

Օրենքի «Պարտապանի գույքն ու դրա տնօրինումը» վերտառությամբ 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է

«Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորությունն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի թույլտվության»:

Օրենքի ընդունումից հետո 47-րդ հոդվածը փոփոխվել է 23.06.11 թ. ՀՕ-235-Ն և 17.06.16 թ. ՀՕ-105-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը «ՌԱՄՁԵՍ» ՍՊԸ-ի 2019 թվականի նոյեմբերի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և սույն գործով կողմերի բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենքը և մի շարք այլ վերաբերելի իրավական ակտեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ, անհամաչափորեն սահմանափակում է սնանկ ճանաչված պարտապանի իրավունքների պաշտպանության համար պարտապանի ղեկավարի դատարան դիմելու և արդար դատաքննության իրավունքները և, հետևաբար, հակասում է Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78 և 79-րդ հոդվածներին: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, մեկնաբանելով վիճարկվող դրույթը, գտել է, որ թե՛ ընդհանուր իրավասության դատարանում և թե՛ սնանկության դատարանում պարտապանը չի կարող վիճարկել իր անունից հանդես եկող սնանկության գործով կառավարչի կազմակերպած աճուրդի արդյունքները, և այդպիսի պահանջի դեպքում սնանկության գործով կառավարիչը չի կարող հանդես գալ որպես պատասխանող:

Համադրելով Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասն Օրենքի մի շարք այլ հոդվածների հետ՝ դիմողը գտնում է, որ առկա են իրարամերժ իրավիճակներ: Մասնավորապես, մի դեպքում՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո վերջինիս պատկանող գույքի վրա դատարանն արգելանք է դնում, իսկ կառավարիչն իրականացնում է գույքի տնօրինումը պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի և դատարանի թույլտվության համաձայն: Մեկ այլ դեպքում՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո վերջինիս գույքի վրա արգելանքի առկայության պայմաններում սնանկության կառավարիչը կարող է թույլատրել պարտապանին կնքել գույքի տնօրինման գործարքներ՝ առանց հաշվի առնելու գույքի վաճառքի ծրագիրը և դատարանի թույլտվությունը:

Դիմողը գտնում է, որ Օրենքի գործող իրավակարգավորումներով ստեղծվում է մի իրավիճակ, որ պարտապանի ղեկավարը միայն կառավարչի թույլտվությամբ և/կամ համաձայնությամբ կարող է տնօրինել պարտապանի գույքը, ավելին՝ Օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասից հետևում է, որ առանց սնանկության կառավարչի համաձայնության պարտապանի ղեկավարի կնքած գույքի տնօրինման ցանկացած գործարք առոչինչ է:

Դիմողը նշում է, որ սնանկության կառավարչի կողմից պարտապանի ղեկավարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնելը և կառավարչի համաձայնությամբ պարտապանի ղեկավարի կողմից գույքի տնօրինման գործարքներ կնքելը հակակշռում են միմյանց: Այլ կերպ ասած, սնանկության կառավարիչը կարող է թույլ տալ պարտապանի ղեկավարին կնքել գույքի տնօրինման գործարքներ՝ առանց հաշվի առնելու, ի թիվս այլնի, Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն դատարանի կողմից գույքի վրա դրված արգելանքը, և միևնույն ժամանակ հսկողություն իրականացնել պարտապանի ղեկավարի ենթադրյալ անբարեխիղճ գործողությունների նկատմամբ այն դեպքում, երբ անբարեխիղճություն կարող է ցուցաբերել նաև կառավարիչը:

Ըստ դիմողի՝ սնանկության կառավարչի ոչ բոլոր գործողություններն են ենթակա բողոքարկման սնանկության վարույթի ընթացքում, ինչպես նաև, սնանկության կառավարչի գործողությունների բողոքարկման և վերջինիս գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու դեպքում լիարժեք չի ապահովվում անձի խախտված իրավունքների վերականգնումը:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող իրավանորմը չի ծառայում իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին, խոչընդոտում է անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը, ինչպես նաև չի հետապնդում իրավաչափ նպատակ, և չկա հետապնդվող նպատակների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն այնքանով, որքանով կառավարչի համաձայնությամբ պայմանավորված (*mutatis mutandis*) սահմանափակվում է վերջինիս՝ որպես պատասխանող ներգրավելու, ինչպես նաև խախտված իրավունքի վերականգնման դատական պաշտպանության իրավունքները:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ սնանկության վարույթի առանցքային տարրերից է պարտապանի ֆինանսական առողջացումը, որի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել իր բնականոն գործունեությունը մինևույն ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը:

Ըստ պատասխանողի սնանկության վարույթի առանձնահատկություններով պայմանավորված՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից պարտապանի նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ: Նշված սահմանափակումներն ինքնանպատակ չեն, ուղղված են սնանկության գործընթացում պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն՝ նպատակ ունենալով ապահովելու պարտատերերի պահանջների օրենքով սահմանված հերթականությամբ համաչափ բավարարումը, որն իրականացվում է դատարանի հսկողությամբ:

Պատասխանողը նշում է, որ Օրենքի գործող դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ կառավարիչը, բացի վերահսկողություն իրականացնելուց, իրավունք ունի դատարանի թույլտվությամբ և վերջինիս հսկողության ներքո ուղղակի գործարքով օտարել պարտապանի գույքը:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պատասխանողը պարզել է, որ շատ երկրներում պետական լիազոր մարմինն է վերահսկում սնանկության կառավարիչներին և նրանց ենթարկում կարգապահական պատասխանատվության: Բացի դրանից, որոշ երկրների օրենքներում ուղղակիորեն նախատեսված է սնանկության կառավարիչների նկատմամբ դատարանի կողմից վերահսկողություն իրականացնելը:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը մեկնաբանելիս հաշվի է առնվում այն, որ կառավարչի գործողությունների իրականացումը ենթադրում է դատական վերահսկողություն, որը նպատակ ունի զերծ պահել պարտապանի գույքն Օրենքով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված ձևերով ցանկացած օտարումից և, միաժամանակ, ապահովել պարտատերերի պահանջների արդար և հավասար բավարարումը:

Գործող իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում պատասխանողը եզրակացնում է, որ սնանկության գործով գույքի վրա արգելանք դնելն ուղղված է պարտատերերի պահանջների հետագա բավարարումն ապահովելուն և չի հետապնդում գույքի օտարումը բացառելու նպատակ:

Պատասխանողը գտնում է, որ Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը և որևէ կերպ չի հակասում օրենքի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներին և համաչափության, որոշակիության սկզբունքներին, քանի որ կարգավորվող իրավահարաբերության շրջանակում այն ավելի արդյունավետ է դարձնում պարտապանի վճարային պարտավորության պատշաճ կատարման ընթացակարգը:

3. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմողը սնանկության գործով պարտապանի ղեկավարը, հայց է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան պարտապանին պատկանող անշարժ գույքի աճուրդը և դրա արդյունքում կնքված առուվաճառքի պայմանագրերը և դրանց հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջով՝ որպես պատասխանող ներգրավելով, ի թիվս այլոց, սնանկության գործով կառավարչին: Այդ դատարանը 2019 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ հայցադիմումը սնանկության դատարանին ենթակա լինելու պատճառաբանությամբ այն վերադարձրել է՝ հղում կատարելով Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, որը դիմողի գործով որոշումները կայացնելու ժամանակ գործող խմբագրությամբ սահմանում էր. «Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»: ՀՀ վերաքննիչ

քաղաքացիական դատարանը 2019 թվականի մարտի 20-ի որոշմամբ առաջին ատյանի դատարանի նշված որոշումն ուժի մեջ է թողել: Սյնուհետև, նույն պահանջով դիմողը դիմել է սնանկության դատարան, որը նույնպես՝ հղում կատարելով Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, 2019 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ վերադարձրել է հայցադիմումն այն պատճառաբանությամբ, որ դիմողն իր հայցադիմումում որպես պատասխանող է նշել սնանկության գործով կառավարչին: Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2019 թվականի մայիսի 27-ի որոշմամբ, ի թիվս այլնի, հղում կատարելով Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասին՝ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ներկայացված հայցապահանջը ենթակա չէ քննության թե՛ սնանկության գործի շրջանակներում, թե՛ քաղաքացիական դատավարության կարգով, քանի որ սնանկության գործով կառավարիչը հանդես է գալիս պարտապանի անունից, և ստացվում է մի իրավիճակ, որտեղ թե՛ հայցվորը, թե՛ պատասխանողը նույն պարտապանն են: Երկու դեպքում էլ վերաքննիչ դատարանը նշել է, որ որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթը սնանկության գործ քննող դատարաններում նրա գործով ըստ էության դատական ակտով դեռևս չի կիրառվել, և դիմողը հիշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկում է իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, որով հնարավոր է դարձել քննության չառնել դատարան ներկայացրած նրա պահանջը: Նկատի ունենալով, որ դիմողն, ըստ էության, բարձրացնում է սնանկության գործերով պարտապանի գույքի տնօրինման վերաբերյալ օրենսդրական կարգավորումների անորոշությամբ պայմանավորված՝ պարտապանի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հարց, Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթը քննության է առնում Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 79-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից և այդ առումով անհրաժեշտ է համարում պարզել.

1) արդյո՞ք վիճարկվող դրույթը, հաշվի առնելով իրավակիրատ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, խախտում է

սնանկության գործով պարտապանի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները,

2) արդյոք ք վիճարկվող դրույթը պարտապանի դատական արդյունավետ պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման տեսանկյունից համապատասխանում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման որոշակիության սահմանադրական սկզբունքին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրական դատարանը նշում է, որ սնանկության գործընթացի նպատակն է երաշխիքներ ստեղծել, մի կողմից՝ պարտատերերի պահանջները համամասնորեն բավարարելու, մյուս կողմից՝ հնարավոր դեպքերում պարտապանի գույքային դրույթունը կայունացնելու (պարտապանի վճարունակության վերականգնումը) և նրա տնտեսական գործունեության շարունակականությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ 2008 թվականի փետրվարի 25-ի ՄԴՈ-735 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ «Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և **միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը**», ընդգծում է, որ յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պարտապանների շահերը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը նշանակում է սնանկության ժամանակավոր կառավարիչ, իսկ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանն անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ և դադարեցնում ժամանակավոր կառավարչի լիազորությունները:

Մնանկության կառավարչի լիազորությունները սահմանվում են Օրենքի 29-րդ հոդվածով, որի 3-րդ մասի համաձայն՝ այդ լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ: Կառավարիչը, ի թիվս այլնի, պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից և հսկողություն իրականացնում պարտապանի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ:

5.2. Իր բազմաթիվ որոշումներում Սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ մասնավորապես նշելով

1) «Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»: (ՄԴՈ-753),

2) « իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»: (ՄԴՈ-1213):

Հաշվի առնելով վերոնշյալ դիրքորոշումները՝ Օրենքի վիճարկվող դրույթի որոշակիությունը գնահատելու համար հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքներին, թե որքանո՞վ են դրանով նախատեսված վարքագծի կանոնները *հստակ և որոշակի*, արդյոք չեն՞ հանգեցնում տարրնկալումների, և որքանո՞վ են *կանխատեսելի* դրանց իրականացման արդյունքում վրա հասնող հետևանքները:

Օրենքի՝ սույն գործով վիճարկվող 47-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո և կառավարչի թույլտվությամբ կարող է նաև պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող այլ գործողություններ կատարել, իսկ լու-

ծարման մասին որոշում կայացնելուց հետո զրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքներից: Այսինքն, օրենսդիրը տարբերակել է սնանկության վարույթի երկու առանձին փուլեր, որոնց համար, կախված տվյալ փուլի խնդիրներից և նպատակից, ամրագրել է տարբեր կարգավորումներ, ինչը, ինքնին, որևէ իրավական անորոշություն չի առաջացնում:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ պարտապանի կողմից կառավարչի թույլտվությամբ գույքը տնօրինելու արդյունքում թույլատրվում է վաճառել արգելադրված գույքն առանց դատարանի թույլտվության՝ իմաստագրկելով դատարանի դերը, հարկ է նշել, որ պարտապանի գույքի արգելադրումն իրականացվում է պարտապանի լուծարման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո՝ 7 օրվա ընթացքում (Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ պարտապանի ղեկավարի կողմից կառավարչի թույլտվությամբ գույքը տնօրինելու իրավասությունը վերաբերում է *մինչև լուծարման մասին որոշում կայացնելն ընկած ժամանակահատվածին*, ուստի այդ առումով ևս առկա չեն հակասական կամ, այլ կերպ՝ անորոշ կարգավորումներ:

5.3. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներն իրավունքի գերակայության սկզբունքի լույսի ներքո պահանջում են, որ անձն ունենա դատական պաշտպանության *արդյունավետ* միջոցներ, որոնք նրան թույլ կտան համապատասխան պահանջ ներկայացնել դատարան և պաշտպանել իր իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ 6-րդ հոդվածի պահանջները տարածվում են նաև սնանկության գործընթացի վրա (Ismeta Bacic v. Croatia, no.43595/06, 19.06.2008, § 19; Capital Bank AD v. Bulgaria, no.49429/99, 24.11.2005, § 86 և այլն):

Դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների տեսանկյունից Օրենքի վիճարկվող դրույթը հարկ է դիտարկել սնանկության վարույթին վերաբերող դատավարական երաշխիքների շրջանակներում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

Այսպես, Օրենքի՝ «Սնանկության գործերի առարկայական ընդ-
դատությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածով սահմանվում է, որ
սնանկության գործերի վարումն իրականացվում է ընդհանուր իրա-
վասության դատարաններում (այսուհետ՝ դատարան): Դատարա-
նում սնանկության գործերը վարվում են սնանկության գործեր
քննող մասնագիտացված դատավորի կողմից՝ միանձնյա: Նույն
դատավորը սնանկության գործի շրջանակներում՝ որպես առանձին
քաղաքացիական գործեր, քննում է նաև սնանկ ճանաչված պար-
տապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների,
երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի,
պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառ-
յալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների
պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջ-
ների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղա-
քացիական գործերը: Օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համա-
ձայն՝ այդ որոշումները ենթակա են բողոքարկման:

**Պարտապանը և պարտատերը կարող են սնանկության գործը
քննող դատավորին բողոքարկել կառավարչի գործողությունները
կամ անգործությունը:** Բողոքը կարող է դատարան ներկայացվել
այն օրվանից սկսած 10 օրվա ընթացքում, երբ բողոքարկողը իմացել
է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:
Բողոքարկելու կարգը և կառավարչի պատասխանատվությունը
կարգավորվում են Օրենքի 31-32-րդ հոդվածներով:

Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ օրենսդիրն ընդհա-
նուր կանոնի համաձայն սահմանել է սնանկության կառավարչին
գույքային պատասխանատվության ենթարկելու մասին իրավա-
կարգավորումներ, այդուհանդերձ հատուկ կանոնով չի ներառել
սնանկության կառավարչի նյութական պատասխանատվության
մասին որևէ դրույթ, Սահմանադրական դատարանը փաստում է,
որ օրենսդիրն Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է **կա-
ռավարչի իր քաղաքացիական պատասխանատվությունը սնան-
կության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի համար
ապահովագրելու պարտավորությունը:** Նույն հոդվածի 2-րդ մասի
համաձայն՝ կառավարչի մեղքով վնաս կրած պարտապանը կամ
պարտատերը համարվում է ապահովագրական գումարի շահառու:
Եթե դատարանը գտնի, որ **կառավարչի մեղքով շահառուներին
պատճառվել է վնաս, ապա դրա փոխհատուցումն իրականացվում
է կառավարչի ապահովագրական գումարից, իսկ դրա անբավարա-
րության դեպքում՝ կառավարչի գույքից:**

5.4. Համաձայն Օրենքի 75-րդ հոդվածի՝ **պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝** իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում՝ պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ **հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով:**

Թեև պարտապանի գույքի վաճառքը **կառավարիչն իրականացնում է ինքնուրույն, այն պարտադիր կարգով նախապես համաձայնեցվում է պարտատերերի ժողովի հետ,** որը, իր հերթին, հաստատում է գույքի վաճառքի ծրագիրը: Բացի դրանից, **գույքի վաճառքն իրականացնելու համար պարտադիր է նաև դատարանի թույլտվությունը:**

Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար կառավարիչը պետք է միջնորդություն ներկայացնի դատարան սահմանված կարգով այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին: Միջնորդության մեջ պետք է նշվեն գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, **աճուրդի առաջարկվող մեկնարկային գինը,** աճուրդի անցկացման օրը, իսկ **միջնորդությանը կից պետք է ներկայացվի գույքի գնահատման ակտը** (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում՝ եզրակացությունը):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **պարտատերերն իրավունք ունեն հրապարակային սակարկություններով պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին կառավարչի միջնորդության դեմ յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնել դատարան և առաջարկել աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին՝** գույքի վաճառքի իր կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելով սնանկության հատուկ հաշվին, իսկ եթե առարկություն են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով: Կառավարչի միջնորդությունն ստանալու ութերորդ օրը դատարանը կայացնում է որոշում կա՛մ գույքի վաճառքը թույլատրելու մասին, եթե պարտատերն առարկություն չի ներկայացրել, կա՛մ գույքի վաճառքը պարտատիրոջ առաջարկած գնով թույլատրելու մասին չբավարարելով կառավարչի միջնորդությունը, կա՛մ կառավարչի միջնորդությունը մերժելու մասին, եթե կառավարչի կողմից չեն պահպանվել Օրենքով սահմանված պահանջները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սնանկության գործով կառավարիչը, ունենալով լիազորությունների բավականին լայն շրջանակ և բավարար ինքնուրույնություն, այնուամենայնիվ, պարտապանի գույքի գնահատմանն ու վաճառքին վերաբերող գործողություններում կաշկանդված է (սահմանափակված է) դատարանի թույլտվությամբ և պարտատերերի ժողովի հավանությամբ: Ասվածից հետևում է, որ օրենսդիրը բավարար երաշխիքներ է ստեղծել կառավարչի գործողությունները վերահսկելու և հնարավոր կամայականություններից խուսափելու համար:

5.5. Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է իրավակարգավորումներ, որոնցով ի սկզբանե, օբյեկտիվ պատճառներով սակարկությունների միջոցով պարտապանի գույքի իրացման ընթացքում կառավարչի կողմից կամայականություններ թույլ տալու հնարավորությունը հասցրել է նվազագույնի:

Օրենքի 23.1-ին հոդվածը սահմանում է կառավարչի վարքագծի կանոնները: Ըստ այդմ՝ կառավարիչը, ի թիվս այլնի, պետք է ապահովի հարգալից և անկողմնակալ վերաբերմունք պարտապանի և պարտատերերի նկատմամբ ու նպաստի կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:

Օրենքի վերլուծությունից բխում է, որ այն չի նախատեսում պարտապանի գույքն իր հայեցողությամբ տնօրինելու կառավարչի բացարձակ ազատություն, իսկ պարտապանի գույքի հաշվին կատարվող բոլոր ծախսերը պետք է լինեն ողջամիտ, անհրաժեշտ և հիմնավորված:

Այդուհանդերձ, սնանկության կառավարչի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տարբեր գործողությունների չկատարումը (անգործությունը) կամ ոչ պատշաճ, անբարեխիղճ կատարումը, մասնավորապես, պարտապանի գույքի ոչ բարեխիղճ գույքագրումը, պահպանումը կարող են առաջացնել լուրջ խախտումներ, որոնք կապված կլինեն սնանկության գործով գույքի կազմում ներառված գույքի զանգվածի ձևավորման և դրա հետագա իրացման հետ, ինչը, իր հերթին, կարող է հանգեցնել սնանկության գործընթացի մասնակիցների իրավունքների ոտնահարման վնաս պատճառելով պարտապանին և պարտատերերին:

Պարտապանի և պարտատերերի գույքային շահերին կարող են հակասել սնանկության գործով կառավարչի կողմից հնարավոր այնպիսի գործարքներ կնքելը, որոնք չեն նպաստում պարտապանի վճարունակության վերականգնմանը և պարտատերերի պարտքերի բավարար չափով վճարմանը, քանի որ հանգեցրել են պարտա-

պանի ակտիվների ընդհանուր արժեքի կրճատման, օրինակ՝ պարտապանի գույքի վաճառքը շուկայական արժեքից էապես ցածր գնով հատկապես այն դեպքերում, երբ գործարքի գնի և շուկայական արժեքի տարբերությունն էական է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դեպքերում սնանկության գործընթացի մասնակիցները, այդ թվում՝ պարտապանը, Օրենքի ուժով իրավասու են իրենց շահերի պաշտպանության համար դիմել դատարան, և Օրենքի վիճարկվող դրույթը նրա դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրացման համար արգելք չի հանդիսանում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանք արգելք չեն հանդիսանում պարտապանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 մայիսի 2020 թվականի
ՄԴՈ-1542



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հունիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի ապրիլի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2018 թվականի ֆինանսական համագործակ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՊՈՒՐ ♦ 2(98)2020

ցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի մայիսի 7-ի N 704-Ա որոշմամբ 2020 թվականի ապրիլի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2018 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մայիսի 13-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մայիսի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2018 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի ապրիլի 7-ին Երևանում՝ գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով առկա բարեկամական հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայն Համաձայնագրի՝ ԳԴՀ Կառավարությունը հնարավորություն է ընձեռում ՀՀ Կառավարությանը Վերականգնման վարկերի բանկից («ՎՎԲ» բանկ) ներգրավելու վարկային միջոցներ և ֆինանսական օժանդակություն հետևյալ ծրագրերի համար.

- «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում - Հայաստան» ծրագրին՝ մինչև 23 208 483,13 եվրոյի ֆինանսական աջակցություն,

- «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի համար՝ մինչև 20 000 000 եվրո գումարի չափով տրվող արտոնյալ վարկ, ինչպես նաև մինչև 2 146 727,25 եվրո ֆինանսական օժանդակություն՝ ծրագրի հարակից միջոցառումների իրականացման համար,
- «Բնակարանային տարածքների ֆինանսավորում V» ծրագրի համար՝ մինչև 20 000 000 եվրո գումարի չափով տրվող արտոնյալ վարկ, ինչպես նաև մինչև 375 000 եվրո ֆինանսական օժանդակություն՝ ծրագրի հարակից միջոցառումների իրականացման համար,
- «Առևտրի խթանում Գերմանահայկական ֆոնդի միջոցով» ծրագրի համար՝ մինչև 25 000 000 եվրո գումարի չափով տրվող արտոնյալ վարկ, ինչպես նաև մինչև 400 000 եվրո ֆինանսական օժանդակություն՝ ծրագրի հարակից միջոցառումների իրականացման համար:

3. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը երաշխավորի Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով ստանձնած պարտավորությունների (Հոդված 2, կետ 3),
- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե ֆինանսական օժանդակություններ ստացողն ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն, Վերականգնման վարկերի բանկին տա երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից (Հոդված 2, կետ 4),
- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ստանձնի Վերականգնման վարկերի բանկի կողմից վճարման ենթակա այն հարկերը, որոնք ծագում են Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում: Բացի դրանից, ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վճարի բոլոր այն պետական տուրքերը, որոնք ենթակա են վճարման Վերականգնման վարկերի բանկի կողմից (Հոդված 3),
- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վարկերի և ֆինանսական օժանդակությունների օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային և օդային

ճանապարհներով անձերի և գույքի տեղափոխման համար ուղևորներին և առաքողներին տա տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չձեռնարկի միջոցներ, որոնք կբացառեն կամ կդժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար (Հոդված 4):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2020 թվականի ապրիլի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2018 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

9 հունիսի 2020 թվականի
ՍԴՈ-1543



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՄԻ 23-ԻՆ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 հունիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2020 թվականի մայիսի 23-ին և 2020 թվականի հունիսի 1-ին ստո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

րագրված՝ «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման և լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 4-ի N 873-Ս որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2020 թվականի մայիսի 23-ին և 2020 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման և լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 4-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունիսի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոհիշյալ նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման և լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման մասին» նամակ-համաձայնագիրը (Նամակ-համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև ստորագրվել է 2020 թվականի մայիսի 23-ին և 2020 թվականի հունիսի 1-ին:

Սահմանադրական դատարանը Նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը քննության է առնում՝ հիմք ընդունելով Նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության լրամշակված տեքստը, որը 2020 թվականի հունիսի 11-ին Սահմանադրական դատարան է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի գրության, համաձայն որի՝ հայկական կողմի ստորագրած Նամակ-

համաձայնագրի անզլերեն բնօրինակի և դրա հայերեն պաշտոնական թարգմանության տեքստի մեջ նույնականության առումով առկա են անհամապատասխանություններ:

Արժույթի միջազգային հիմնադրամը Հայաստանի Հանրապետությանը Պահուստային ծրագրի ներքո տրամադրում է 231.656 միլիոն հատուկ փոխառության իրավունքին (ՀՓԻ) համարժեք վարկ՝ որպես ուղղակի բյուջետային աջակցություն՝ ֆինանսավորելու Հայաստանի Հանրապետության կառավարության բյուջեի դեֆիցիտը:

Փոխառու միջոցները, ներառյալ՝ Պահուստային ծրագրի շրջանակում հասանելի գնման իրավունքները (ընդհանուր՝ 231.656 մլն ՀՓԻ-ին համարժեք գումար), մասհանվելու են 2020 թվականի ընթացքում երկու մասնաբաժնով. առաջին մասհանումը համարժեք է լինելու 205.942 մլն ՀՓԻ-ին, իսկ երկրորդ մասնաբաժինը համարժեք է լինելու 25.714 մլն ՀՓԻ-ին և մասհանվելու է Պահուստային ծրագրի երրորդ վերանայման եզրափակումից հետո:

Ըստ սույն գործում առկա նյութերի՝ ներկա պահին Հայաստանի Հանրապետության համար հասանելի են ընդհանուր առմամբ շուրջ 206 մլն ՀՓԻ (280 մլն ԱՄՆ դոլար) ծավալով բյուջետային միջոցներ, և ևս 25.714 մլն ՀՓԻ (35 մլն ԱՄՆ դոլար) հասանելի կդառնա ծրագրի երրորդ վերանայման արդյունքում:

Պահուստային ծրագրի ներքո փոխառու միջոցների մարումը ենթակա է մասհանման 3.25-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր մասհանում մարվելու է 8 հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր մասհանման 3.25 տարուց հետո:

2. Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) վճարել վարկավորման տոկոսադրույք, որը բաղկացած է՝ (1) շուկայական ՀՓԻ տոկոսադրույքից, որն ունի նվազագույն 0.05 տոկոսի շեմ, և մարժայից (ներկայում 1 տոկոս), միասին հայտնի որպես բազիսային տոկոսադրույք, և (2) հավելավճարից, որը կախված է վարկի մնացորդի գումարից և ժամանակից: 2 տոկոս հավելավճար է վճարվում վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5 տոկոսը գերազանցող գումարի համար: Եթե վարկը մնում է քվոտայի 187.5 տոկոսից բարձր երեք տարի անց, հավելավճարը բարձրանում է մինչև 3 տոկոս,

բ) վճարել պարտավորության վճար, որը գանձվում է յուրաքանչ-յուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում տրամադրվելիք մասհանումների նկատմամբ (0.15 տոկոս՝ մինչև քվոտայի 115 տոկոսը ստանձնած միջոցների համար, 0.3 տոկոս՝ քվոտայի 115 տոկոսից բարձր և մինչև 575 տոկոսը ստանձնած միջոցների համար և 0.6 տոկոս՝ քվոտայի 575 տոկոսը գերազանցող գումարների համար): Վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները համապատասխան ժամանակահատվածի ընթացքում մասհանվում են,

գ) վճարել 0.5 տոկոս ծառայության վճար, որը կիրառվում է մասհանված յուրաքանչյուր գումարի համար:

Նամակ-համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Արժույթի միջազգային հիմնադրամը ծանուցում ստանա Հայաստանի Հանրապետության կողմից՝ Նամակ-համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող ներքին ընթացակարգերի կատարման մասին:

3. Սահմանադրական դատարանին Հայաստանի Հանրապետության վարչապետը և Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը հայտնել են, որ Նամակ-համաձայնագրով նախատեսված միջոցներն ուղղվելու են կորոնավիրուսային համավարակի տարածմամբ առաջ եկող խնդիրների լուծման ու դրանց հետևանքների մեղմմանն ուղղված սոցիալ-տնտեսական միջոցառումների ֆինանսավորմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները պետք է իրականացվեն վերաբերելի սահմանադրական արժեքների պահպանության պայմաններում, և մասնավորապես՝ հաշվի առնելով Սահմանադրության 3-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի (ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանն ուղղված պետական քաղաքականության մասով), ինչպես նաև 86-րդ հոդվածի, հատկապես՝ 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ կետերով նախատեսված պետության քաղաքականության հիմնական նպատակների սահմանադրական բովանդակությունը:

Սահմանադրական դատարանը, կարևորելով վերոնշյալ միջոցառումները, դրանց ֆինանսավորումը ու վերջիններիս հրապարակայնությունը և թափանցիկությունը, ընդգծում է նաև Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը որպես բյուջետա-

յին աջակցության վարկ տրամադրվող միջոցների նպատակային, արդյունավետ օգտագործման և Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ, բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում, պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2020 թվականի մայիսի 23-ին և 2020 թվականի հունիսի 1-ին ստորագրված՝ «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման և լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

16 հունիսի 2020 թվականի
ՍԴՈ-1544



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՒԴԻԿ ԽՈՋՈՅԱՆԻ ԵՎ ԱՐՏՅՈՍ ԽՈՋՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 հունիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում) դիմողներ Ռուդիկ Խոջոյանի և Արտյոմ Խոջոյանի ներկայացուցիչ Ա. Կիվիրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռուդիկ Խոջոյանի և Արտյոմ Խոջոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի «Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է.

«Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում»:

Օրենսգրքի հիշյալ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-21-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-184-Ն և 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-241-Ն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Գործի քննության առիթը Ռուդիկ Խոջոյանի և Արտյոմ Խոջոյանի՝ 2020 թվականի հունվարի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերելի դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողների դիրքորոշումները

Ըստ դիմողների, «ոչ նյութական վնասը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի իմաստով ոչ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է»:

Նրանց կարծիքով նշված նորմը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում ներառելով՝ օրենսդիրը նպատակ է ունեցել պաշտպանության առարկա դարձնել ոչ միայն անձի գույ-

քային իրավունքները, այլ նաև անձի հետ կապված ոչ գույքային իրավունքները: Մա իր հերթին նշանակում է, որ պետությունը պետք է նախատեսի տվյալ իրավունքների պատշաճ պաշտպանության մեխանիզմներ:

Անդրադառնալով օրենքի նշանակությանը՝ դիմողները գտնում են, որ այն կոչված է արտահայտելու և պաշտպանելու անձի իրավունքները: Այլ կերպ՝ օրենքը պետք է բխի մարդու իրավունքներից և ոչ թե սահմանափակի դրանք:

Անդրադառնալով վիճարկվող դրույթին՝ դիմողները նշում են, որ, ի տարբերություն ոչ նյութական վնասի հատուցման համար նախատեսված մեկամյա ժամկետի, նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար գործում է հայցային վաղեմության եռամյա ընդհանուր ժամկետը: Դիմողներից մեկը նշում է, որ օրենսդիրը նախատեսել է ոչ միայն ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու ժամկետ, այլ նաև այն «ստորադասել է» նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար նախատեսված դատավարական ժամկետին:

Այս կապակցությամբ դիմողները ցանկանում են քննարկման առարկա դարձնել ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար սահմանված հայցային վաղեմության ժամկետի իրավաչափությունը, քանի որ այն հանգեցնում է իրավական անորոշության՝ միաժամանակ խախտելով անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը:

Դիմողները գտնում են, որ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամյա ժամկետը ողջամիտ և արդարացված չէ:

Դիմողները նշում են, որ մինչև մեկ տարվա ժամկետ սահմանելը օրենսդրի կողմից 1087.2-րդ հոդվածով սահմանված է եղել վեցամսյա ժամկետ, և, դրական գնահատելով այդ հանգամանքը, այնուամենայնիվ, ըստ դիմողների՝ այն բավարար չափով չի ապահովում անձի՝ դատարան դիմելու, պատշաճ դատական պաշտպանություն ստանալու իրավունքները, ուստի հակասում է Սահմանադրությանը:

Ըստ դիմողների՝ միջազգային պրակտիկան զարգանում է ճիշտ հակառակ ուղղությամբ: Մի շարք պետություններում ոչ նյութական վնասի հատուցման պահանջի ներկայացման համար որևէ դատավարական ժամկետ նախատեսված չէ, իսկ այն պետությունները,

որտեղ այն առկա է, կանգնած են իրավակիրատ պրակտիկայի միջոցով այն բացառելու ճանապարհին: Նպատակը մեկն է՝ պաշտպանել անձի հոգևոր անձեռնմխելիությունը՝ առանց նրան անհարկի դատավարական ժամկետներով ծանրաբեռնելու:

Այդ առումով դիմողները կարծում են, որ ոչ նյութական վնասը հոգեկան տառապանք է, իսկ «հոգեկան տառապանքը չի կարող կարգավորվել իմպերատիվ նորմերով և խիստ դատավարական ժամկետներով, քանի որ հոգեկան տառապանքը դրա կրման ժամանակահատվածը, դա հաղթահարելու ժամկետները խիստ անհատական են»:

Բացի դրանից, դիմողներն անդրադառնում են Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային, ըստ որի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է պետության՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված պարտավորության անմիջական նկարագիրը, այն է՝ առաջին հերթին պաշտպանել մարդու իրավունքները և հետո միայն իրենց սեփական իրավական համակարգը:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողները խնդրում են Սահմանադրական դատարանին Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասն այնքանով, որքանով սահմանում է անձին պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար մեկամյա ժամկետ՝ ճանաչել Սահմանադրության 1-ին, 3, 60, 61, 62, 63, 75, 78, 80 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշում է, որ դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով սահմանված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, այսինքն՝ անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե՛ չդիմել դատարան, իրացնել, թե՛ չիրացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով, մասնավորապես, իր պահանջների առարկան, ծավալը, հիմքը: Միաժամանակ, անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարան-

ներն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն դատական պաշտպանության տվյալ ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին՝ պատասխանողը նշում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Սահմանափակումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանող կհամարվի, եթե այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա է համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

Ըստ պատասխանողի՝ ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով:

Անդրադառնալով հայցային վաղեմության իրավական նշանակությանը՝ պատասխանողը նշում է, որ անձին, որի իրավունքները խախտվել են, տրամադրվում է խիստ որոշակի, բայց, միաժամանակ, բավարար ժամանակահատված իր իրավունքների դատական պաշտպանության համար:

Պատասխանողը նշում է նաև, որ դատարանի մատչելիության իրավունքը նույնպես կարող է որոշակի պայմաններում ենթարկվել այնպիսի իրավաչափ սահմանափակումների, ինչպիսիք են վաղեմության ժամկետները, դատական ծախսերի ապահովման վերաբերյալ որոշումները կամ իրավաբանական ներկայացուցչության պահանջը:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային՝ պատասխանողը կարծիք է հայտնում, որ ժամկետային սահմանափակումների առումով պե-

տությունները հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի: Ընդ որում, նման մոտեցումն ինքնանպատակ չէ և բխում է համաչափության սկզբունքից, քանի որ կոչված է հավասարակշռելու դատավարության կողմերի հավասարազոր իրավունքները, ուստի սահմանադրական իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման մասին խոսք լինել չի կարող: Հայցային վաղեմության որոշակի ժամկետների սահմանման և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքննության իրավունքի միջև հակասություն առկա չէ: Պետություններն իրենք են ներպետական օրենսդրությամբ սահմանում հայցային վաղեմության կոնկրետ ժամկետները, ինչը միանգամայն համահունչ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի էությանը:

Բացի դրանից, պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը բավարարում է նաև իրավական օրենքին ներկայացվող պահանջները՝ հաշվի առնելով, որ այն բավարար չափով կանխատեսելի է, համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված է բավարար աստիճանի հստակությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողները վիճարկում են Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը մեկ տարվա ընթացքում դատարան ներկայացնելու հնարավորությունը, Սահմանադրական դատարանը կանդրադառնա միայն հիշյալ ժամկետի սահմանադրականությանը:

Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- 1) արդյոք ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար ժամկետ սահմանելը խախտում է Սահմանադրության 62-րդ հոդվածով ամրագրված՝ վնասի հատուցման հիմնական իրավունքը,

2) արդյոք վիճարկվող դրույթով նախատեսված մեկամյա ժամկետը ոչ նյութական վնասի հատուցման հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգ է Սահմանադրության 75-րդ հոդվածի տեսանկյունից՝ փոխկապակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դատական պաշտպանության հիմնական իրավունքի հետ:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 62-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: **Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:**

2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից»:

Սահմանադրության հիշյալ հոդվածի ուսումնասիրությունը վկայում է, որ Սահմանադրության ուժով վնասի հատուցում պահանջելու իրավունքը՝ որպես հիմնական իրավունք, ներառում է նաև **ոչ իրավաչափ քրեական հետապնդման, ինչպես նաև ոչ իրավաչափ դատապարտման հետևանքով** պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավագործությունները:

Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ վնասի, այդ թվում՝ ոչ նյութական, հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Վնասի հատուցման կարգի բաղադրիչ է նաև այն հատուցելու համար պահանջ ներկայացնելու ժամկետը: Ըստ այդմ՝ օրենսդիրը սահմանել է ոչ նյութական վնասի հատուցման համար պահանջ ներկայացնելու ժամկետ՝ մեկ տարի: Միննույն ժամանակ, հաշվի առնելով ոչ նյութական վնասի առանձնահատկությունները, ինչպես նաև այդ վնասի արդյունավետ հատուցումն ապահովելու անհրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020
197

Ժեշտությունը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առավել մանրամասն անդրադառնալ ոչ նյութական վնասի բնույթին և հատուցման իրավակարգավորումներին:

Սահմանադրական դատարանն իր 05.11.2013 թ. ՍԴՈ-1121 որոշման մեջ նշել է, որ «...բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից գերծ մնալը»:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարևորում է այն հարցադրումը, թե արդյոք ոչ նյութական վնասը որոշելիս հաշվի են առնվում միայն քրեական հետապնդման ժամանակահատվածում անձին պատճառված ֆիզիկական և բարոյական տառապանքները:

Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով նախատեսվում են անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները: Ըստ այդմ՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ: Այսինքն, բոլոր այն հանգամանքները, որոնք ի վերջո հիմք են հանդիսացել անձի բարոյական տառապանքների համար և ազդել են այդ տառապանքների խորության վրա:

Ինչ վերաբերում է միջազգային փորձին, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Պողոսյանը և Բադդասարյանն ընդդեմ Հայաստանի» գործով կայացրած վճռում (զանգատ թիվ 22999/06, 12. 06. 2012 թ.) նշել է. «...Դատարանը գտնում է, որ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը ոչ միայն սխալ մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում նյութական վնասի վերականգնումն է, այլ նաև արդարադատության ոչ պատշաճ իրականացման հե-

տևանքով դատապարտված անձին ցանկացած ոչ նյութական վնասի մասով, օրինակ՝ **տազնապի, անհանգստության, անհարմարության և կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի** համար փոխհատուցման տրամադրումն է»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) կից Թիվ 7 Արձանագրության բացատրական զեկույցում նույն Արձանագրության 3-րդ հոդվածի մեկնաբանությունը հետևյալն է. «... փոխհատուցումը վճարվում է ներպետական օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն»:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հատուցման ենթակա ոչ նյութական վնասն անձին պատճառվում է քրեական հետապնդման շրջանակներում: Միաժամանակ, պատճառված հոգեկան տառապանքները կարող են ունենալ շարունակական բնույթ և հաշվի առնվեն արդարացի հատուցում սահմանելու համար, ինչը չի ենթադրում, որ ոչ նյութական վնասը պատճառվում է նաև քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո:

Ինչ վերաբերում է վնասի հատուցման կարգին, ապա վնասի հատուցման ընթացակարգը, **վնասի հատուցման պահանջ ներկայացնելու կառուցակարգը և ժամկետները** Սահմանադրական դատարանի գնահատմամբ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության իմաստով ակնհայտորեն **վնասի հատուցման կարգի տարրեր են**, որոնք, ըստ Սահմանադրության այդ դրույթի, պետք է սահմանվեն օրենք(ներ)ով:

4.2. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք», իսկ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

Վիճարկվող դրույթի համաձայն՝ անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ դատական կարգով հատուցում պահանջելու հնարավորությունը սահմանափակված է հայցային վաղեմության ժամկետով:

Իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակման կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 06.12.2019 թ. ՄԴՈ-1495 որոշման մեջ նշել է. «...քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ժամկետներն նպատակ ունեն ոչ միայն ժամանակի առումով կանոնակարգելու քաղաքացիական շրջանառությունը, այլ նաև ապահովելու քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց իրավունքների իրացման հնարավորությունը, դրդելու անձանց կատարելու իրենց պարտականությունները, ինչպես նաև խթանելու խախտված իրավունքների ժամանակին պաշտպանությունը»:

Իր 08.10.2013 թ. ՄԴՈ-1119 որոշման մեջ վերլուծելով դեռևս 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 18-րդ հոդվածը՝ Սահմանադրական դատարանը հանգել է հետևության, որ «...օրենսդրական մակարդակում չպետք է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստագրկում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը»: Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտել է, որ «...օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը...»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դատարանի մատչելիությունը ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր, ձևավորել կայուն նախադեպային պրակտիկա դատարանի մատչելիության իրավունքի առնչությամբ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդարության, հրապարակայնության և արագության բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացները չխթանվեն:

Ինչ վերաբերում է ժամկետային սահմանափակումներին, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (**Stubbings and Others v. The United Kingdom** թիվ 22083/93, 22095/93, 22/10/1996 վճիռ):

Մեկ այլ որոշմամբ հիշյալ դատարանը նշել է, որ «միայն այն փաստը, որ դիմումատուի պահանջները պետք է ենթարկվեն վաղեմության ժամկետին, խնդիր չի առաջանցում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի տեսանկյունից» (**Zolotas v. Greece** թիվ 66610/09, 29/01/2013 վճիռ):

4.3. Սահմանադրական դատարանը փաստում է, որ համաձայն Օրենսգրքի՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Մյուս կողմից՝ հենց Օրենսգրքի 333-րդ հոդվածը, որը վերաբերում է հայցային վաղեմության հատուկ ժամկետներին, սահմանում է, որ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Օրենսդիրը հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար սահմանել է ընդհանուր ժամկետի համեմատ ավելի կարճ՝ մեկամյա հատուկ ժամկետ: Այս առումով մեկամյա ժամկետն անհրաժեշտ է դիտարկել դատարանի մատչելիության և դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման օրենսդրական-կազմակերպական նախադրյալների համարժեքության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթի համաձայն՝ հիմնարար իրավունքների խախտման կամ անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել Օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը (այն է՝ կյանքի իրավունքը, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, հավաքների և միավորման ազատության իրավունքը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը և սեփականության իրավունքը) հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, ինչպես նաև այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատուցում ստանալու պահանջ ներկայացնելու համար սահմանված մեկամյա ժամկետի հաշվարկը սկսվում է որոշակի հանգամանքների մասին հատուցում պահանջող անձին հայտնի դառնալուց հետո, նման պահանջ ձևակերպելու և դատարան ներկայացնելու համար նախատեսված ժամկետը ողջամիտ է:

Բացի դրանից, ըստ Օրենսգրքի՝ «Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը» վերատառությամբ 342-րդ հոդվածի «Բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում...»:

Այսպիսով, նաև մեկամյա ժամկետը բաց թողնելու՝ օրենքով սահմանված առանձին դեպքերում, որոնց ցանկը սպառիչ չէ, թույլատրվում է դրա վերականգնումը:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով դատարանին ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար մեկամյա հատուկ ժամկետ սահմանելը չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ վնասի հատուցման, դատական պաշտպանության հիմնական իրավունքների, ինչպես նաև դրանցից ածանցվող դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացման համար Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

16 հունիսի 2020 թվականի
ՄԴՈ-1545



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
22-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունիսի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Հանրապետության նախագահի ներկայացուցիչներ Գ. Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Հովակիմյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 73-րդ հոդվածների՝ դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված՝ **«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ 1998 թվականի հուլիսի 1-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը լրացվել է հետևյալ նոր պարբերությամբ.**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 125.1-ին հոդվածով, 131-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 154.2-րդ հոդվածով, 154.9-րդ հոդվածով, 168-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 181-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 182-րդ հոդվածով, 188-րդ հոդվածով, 188.1-ին հոդվածով, 189-րդ հոդվածով, 189.1-ին հոդվածով, 190-րդ հոդվածով, 190.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 190.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 191-րդ հոդվածով, 192-րդ հոդվածով, 193-րդ հոդվածով, 194-րդ հոդվածով, 200-203-րդ հոդվածներով, 205-րդ հոդվածով, 207-րդ հոդվածով, 213-րդ հոդվածով,

214-րդ հոդվածով, 215.1-ին հոդվածով, 216-րդ հոդվածի 3-րդ մասով, 217-րդ հոդվածով, 217.1-ին հոդվածով, 218-րդ հոդվածով, 219-224-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածով, 235.1-ին հոդվածով, 261-րդ հոդվածով, 262-րդ հոդվածով, 266-րդ հոդվածով, 267.1-ին հոդվածով, 274-րդ հոդվածով, 275-րդ հոդվածով, 308- 314.3-րդ հոդվածներով, 332-րդ հոդվածով, 336-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով, 375-րդ հոդվածով քննվող քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող»:

Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված՝ **«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը** սահմանում է.

«Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ-80 օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը «քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերում» բառերով»:

Ազգային ժողովի կողմից ընդունված հիշյալ օրենքները Հանրապետության նախագահի կողմից չեն ստորագրվել:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի 2020 թվականի փետրվարի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և սույն գործով կողմերի բացատրությունները, ինչպես նաև վերաբերելի օրենքները և գործում առկա մյուս նյութերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ առաջարկվող կարգավորումը փաստացի անկանխատեսելի է դարձնում այն սուբյեկտների շրջանակը, որոնց իրավունքները հնարավոր է սահմանափակել՝ առանց համապատասխան դատավարական կարգավիճակ տրամադրելու, ուստի այն առերևույթ չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Դիմողի կարծիքով՝ բավարար երաշխիքներ չեն սահմանվում նախատեսվող կարգավորման կիրառման դեպքում դատավարական կարգավիճակ չունեցող անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության օրենսդրական կառուցակարգերի տեսանկյունից: Նրանք ընթացակարգային առումով փաստացի չեն տեղեկացվում իրենց առնչվող տեղեկատվության ազդրավման կամ խուզարկության մասին և զրկված են նույնիսկ իրենց դիրքորոշումը հայտնելու և այն հիմնավորելու, քննիչի միջնորդությամբ ներկայացված փաստարկներին համաձայնություն կամ անհամաձայնություն արտահայտելու հնարավորությունից:

Ըստ դիմողի՝ առաջարկվող կարգավորումն առերևույթ կարող է վտանգել նաև երկրի տնտեսական բարեկեցությունը՝ խարխիլելով բանկային համակարգի հանդեպ վստահությունը:

Վերոգրյալ և այլ փաստարկների հիման վրա դիմողը հանգում է հետևության, որ վիճարկվող իրավակարգավորումները հակասում են Սահմանադրության 31, 32, 34, 75, 78 և 79-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթին առնչվող անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքի սահմանափակումը համապատասխանում է օրենքով սահմանված լինելու չափանիշին, քանզի գաղտնիությունը բխում է նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունից, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարու-

թյան օրենսգրքի 201-րդ հոդվածով: Ընդ որում՝ սահմանափակումը վերանում է նախնական քննության ավարտով:

Պատասխանողը գտնում է նաև, որ վիճարկվող դրույթը միաժամանակ հետապնդում է վկայակոչված հոդվածով նախատեսված հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակ:

Պատասխանողը հարկ է համարում նշել, որ, չնայած մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման առնչությամբ պետությունը կրում է նաև պոզիտիվ պարտականություններ (օրինակ՝ ապահովելու, որ մասնավոր անձինք չտոնձգեն այլ անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության նկատմամբ), վիճարկվող դրույթներն առնչվում են պետության նեգատիվ պարտականությանը՝ ապահովելու, որ, մասնավորապես, պետության կողմից իրականացվող միջամտությունը լինի բացառապես այն ծավալով, որն անհրաժեշտ է օրինական նպատակին հասնելու համար:

Պատասխանողը հարկ է համարում նաև նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ գործով կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալն ինքնին չի հակասում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային, եթե պահպանվել են միջամտության թույլատրելիության բոլոր չափանիշները:

Ըստ պատասխանողի՝ չնայած միջամտության բնույթից ելնելով սահմանափակված է անձի իրավունքը՝ մասնակցելու իրեն առնչվող տվյալների տրամադրման վերաբերյալ հարցի քննությանը, այդուհանդերձ, օրենսդրությունը նախատեսում է բազմաթիվ մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս բողոքարկել տվյալների մշակումը պետական մարմնի կողմից:

Հիշյալ և այլ փաստարկների հիմքով պատասխանողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

1) անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը ներառում է արդյոք անձին վերաբերող բանկային գաղտնիքը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները (այսուհետ՝ այլ գաղտնի տեղեկություններ), եթե ներառում է, ապա վիճարկվող իրավակարգավորումներով հիշյալ հիմնական իրավունքի սահմանափակումը հետապնդում է արդյոք Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանափակման հիմք նշված՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակ:

2) առանց որևէ հանցագործությանն ուղղակի կամ անուղղակի առնչության քրեական վարույթում որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակումը որպես վիճարկվող իրավակարգավորումներով ընտրված միջոց, հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակներին հասնելու տեսանկյունից համապատասխանում է արդյոք որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին՝ դրանց փոխկապակցվածության մեջ:

3) վիճարկվող իրավակարգավորումներում և (կամ) դրանք նախատեսող օրենքներում սահմանված են արդյոք անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ քրեական վարույթում որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձի կողմից դատական պաշտպանության հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար:

«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը բացի վիճարկվող 1-ին հոդվածից նախատեսում է միայն այդ օրենքի ուժի մեջ մտնելուն վերաբերող ևս մեկ հոդված (2-րդ հոդվածը), որը չի կարող գործել վիճարկվող հոդվածից առանձին, ուստի Սահմանադրական դատարանը պետք է գնահատի հիշյալ ամբողջ օրենքի սահմանադրականությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատել Սահմանադրության 31-րդ հոդվածի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 75, 78 և 79-րդ հոդվածների տեսանկյունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասում սահմանվում են այս հիմնական իրավունքն օրենքով սահմանափակվելու հիմքերը, որոնք են պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները վերաբերում են Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ *մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքին*, քանի որ անձին վերաբերող բանկային գաղտնիքը և այլ գաղտնի տեղեկություններն առնչվում են անձի մասնավոր, այլ ոչ թե ընտանեկան կյանքին:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրագրումը միտված է անձի համար և անձի շուրջ այնպիսի շրջանակի (տարածության) երաշխավորմանը, որում նա, զերծ մնալով պետության կամ հանրության կողմից որևէ ուղղորդումից կամ առավել ևս հարկադրանքից, կկարողանա ազատորեն դրսևորել և զարգացնել իր անհատականությունը՝ իր արժանապատվության և ընդհանուր և հատուկ ազատությունների և իրավունքների՝ պետության, հանրության և այլ մասնավոր անձանց կողմից հարգանքի պայմաններում: Հետևապես՝ անձի մասնավոր տարածության անձեռնմխելիությունը՝ այլ հիմնական իրավունքների և ազատությունների համակցության մեջ, հնարավորություն է տալիս ապահովելու թե՛ *մարդու անհատական ներքին ինքնորոշումը*՝ իր կենսական շահերին համապատասխան, թե՛ *այլ մասնավոր անձանց հետ* նրա մասնավոր-կենսական *կապերի գաղտնիությունը* պետությունից, հասարակությունից և երրորդ անձանցից, և այդ իմաստով է Սահմանադրությունը երաշխավորում անձի մասնավոր կյանքի *անձեռնմխելիությունը*:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) մասնավոր կյանքը մեկնաբանում է նաև որպես անձի՝ անցանկալի ուշադրությունից զերծ ապրելու իրավունք (տես *Smirnova v. Russia*, 24.07.2003, app no. [46133/99](#) and [48183/99](#), § 95):

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի մասնավոր դրսևորումներ են բնակարանի անձեռնմխելիությունը, հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը, որոնք Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության մակարդակով կառուցակարգվել են որպես առանձին հիմնական իրավունք կամ ազատություն (համապատասխանաբար՝ Սահմանադրության 32-34-րդ հոդվածներ):

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանությունը ներառում է **ոչ միայն պետության կողմից մասնավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը**, այլև **պետության պոզիտիվ պարտականությունը՝ անհրաժեշտ և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես՝ պետությունը, նախ՝ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացառությամբ Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ինչպես նաև պարտավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնական իրավունքի խախտումների դեպքում դրանցից արդյունավետ պաշտպանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր, և, վերջապես, պարտավոր է նաև գործնականում ապահովել այս հիմնական իրավունքի պաշտպանությունը երրորդ անձանցից:**

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ներառում է նաև բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են այդ իրավունքը կրողի անձին, նրա անձնական տարածքին և դրանում պաշտպանվող՝ կենսական կամ անձի կողմից կարևորվող այլ շահերին, քանի որ այդպիսի տեղեկությունները թույլ են տալիս ներագոյել անձի վարքագծի վրա կամ որևէ այլ կերպ ներգործել նրա անձնական կյանքի գաղտնիության վրա: **Որևէ գաղտնիք, որը վերաբերում է մասնավոր անձին, Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով արդեն իսկ պաշտպանված է**, ուստի այն պետք լինի նաև օրենսդրորեն պաշտպանված՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գաղտնիքը վերաբերում է անձի նեղ անձնային հատկանիշներին, ներքին ինքնորոշման այլ բաղադրիչներին, թե՛ նրա՝ գաղտնիությամբ ապահովված հաղորդակցությանը պետության, հանրության կամ այլ մասնավոր անձանց հետ: Դա վերաբերում է ոչ միայն բանկային գաղտնիքին, այլև այլ գաղտնի տեղեկություններին:

Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի «1. Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

2. Բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի և դրանց հաճախորդների վերաբերյալ Կենտրոնական բանկին հայտնի դարձած սույն հոդվածի առաջին մասում սահմանված տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Բանկերը համարվում են Կենտրոնական բանկի հաճախորդներ»:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ հիշյալ օրենքում մասնավոր անձի, տվյալ դեպքում՝ հաճախորդի վերաբերյալ *ցանկացած տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ*, գնահատվում է որպես բանկային գաղտնիք:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիշյալ դրույթներում օրենսդիրն իրավացիորեն ընտրել է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների թվարկման գույքակցումը մասնավոր անձի կողմից ցանկացած այլ տեղեկությունը գաղտնի պահելու մտադրության հետ, որի մասին բանկը տեղյակ էր կամ կարող էր տեղյակ լինել: Հետևապես, ակնհայտ է, որ այդ օրենքում բանկի և իր հաճախորդի միջև հաղորդակցության շրջանակներում գաղտնիության ռեժիմով պաշտպանվում է *հաճախորդին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը գաղտնի պահելու մտադրություն ունի հաճախորդը, և որի այդ մտադրությունն ուղղակիորեն կամ անուղղակի հասու է բանկին*:

Հիշյալ օրենքի այս ձևակերպումները վկայում են այն մասին, որ բանկային գաղտնիքը ներառում է որևէ բանկի հետ հաղորդակցվող մասնավոր անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որն այդ անձը վստահում է բանկին, և որն ինքն է անհրաժեշտ համարում գաղտնի պահել՝ անկախ բանկի գնահատականից, իսկ այդ մտա-

դրության մասին բանկի ողջամիտ տեղեկացվածությունը բավարար է պետության կողմից դրա անձեռնմխելիության ապահովման և պաշտպանության համար:

ՄԻԵԴ-ն իր պրակտիկայում նույնպես հաստատել է, որ բանկային գաղտնիքն անձի մասնավոր կյանքի բաղադրատարր է: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ բանկային փաստաթղթերը, անկասկած, վերաբերում են անհատի անձնական տվյալներին՝ անկախ նրանից, թե դրանք պարունակում են զգայուն տեղեկատվություն, թե՛ ոչ: ՄԻԵԴ-ը նաև եզրակացրել է, որ մասնավոր կյանքի իրավունքին միջամտելու ձևերը կարող են ներառել պետական մարմիններին վերագրվող այնպիսի գործողություններ, ինչպիսիք են իշխանությունների կողմից բանկային տվյալներ պարունակող փաստաթղթերի պատճենումը և հետագա պահպանումը (M. N. And Others v. San Marino, 07.07.2015, app. no. 28005/12, § 51, 55):

Այսպիսով՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում բանկային գաղտնիքի հասկացության ուսումնասիրության արդյունքում՝ հաշվի առնելով նաև ՄԻԵԴ-ի վերաբերելի որոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անձի **մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը ներառում է նաև բանկային գաղտնիքը**: Ընդամին՝ բանկային գաղտնիքը պաշտպանվում է պետության կողմից, ի մասնավորի, ի դեմս Կենտրոնական բանկի՝ իր հաճախորդ բանկերի կողմից տրամադրված տեղեկությունների մասով, և հենց այդ բանկերի կողմից:

4.2. Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով: Սահմանափակման հիմքերի թվին են դասվում նաև *հանցագործությունների կանխումը և բացահայտումը*: Հետևապես՝ այդ նպատակներով օրենսդիրն իրավասու է սահմանափակել նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքից ածանցվող՝ բանկային գաղտնիք կազմող և այլ գաղտնի տեղեկությունների անձեռնմխելիությունը:

Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է, որ բանկային գաղտնիքը և այլ գաղտնի տեղեկությունները կարող են հայցվել

միայն հարուցված քրեական գործի պայմաններում և քննիչի ու դատախազի նախաձեռնությամբ իրականացվող ընթացակարգերի շրջանակներում: Այսինքն՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանափակման քննարկվող ձևը քրեական հետապնդման մարմինների կողմից ենթադրյալ հանցագործության կապակցությամբ հարուցված քրեական վարույթի ընթացքում ձեռնարկվող միջոցառում է՝ քննչական գործողություն, որի նպատակը կոնկրետ քրեական գործով որոշակի փաստական տվյալների՝ ապացույցների ձեռքբերումն է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից ընտրված կարգավորումները, որոնցով սահմանափակվում է բանկային գաղտնիքի և այլ գաղտնի տեղեկությունների անձեռնմխելիությունը, *ինքնին համապատասխանում են Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին*, քանի որ միտված են օրենքով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման՝ Սահմանադրությամբ սահմանված (լեզիտիմ) նպատակներին հասնելուն:

4.3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակումները պետք է համապատասխանեն նաև Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին՝ փոխկապակցված Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջների հետ: Բացի դրանից, այդպիսի սահմանափակումներ ամրագրող օրենքները պետք է սահմանեն արդյունավետ դատական պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր, այսինքն՝ համապատասխանեն նաև Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներին՝ փոխկապակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, **լինեն բավարար չափով որոշակի**, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Վերլուծելով վիճարկվող իրավակարգավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(98)2020

1) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ *տեսակային կամ համակարգային որևէ այլ հատկանիշներով չփոխկապակցված մի շարք հանցագործությունների դեպքում* նախատեսվում է անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման հնարավորություն.

2) այն անձանց շրջանակը, որոնց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել, անորոշ է. խոսքը *քրեական դատավարությունում որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված* անձանց մասին է, այսինքն՝ բոլոր այն անձանց, որոնք, անկախ որևէ հանցագործության հետ իրենց ենթադրյալ կամ իրական, ուղղակի կամ անուղղակի առնչակցությունից, անկախ միմյանցից և ենթադրյալ հանցագործության փաստի հետ որևէ կապից, չեն ներգրավվել որպես կասկածյալ կամ մեղադրյալ քրեական դատավարությունում.

3) *դատարանի համար սահմանվել է պարտականություն՝* գնահատել օրենքում նախատեսված մի շարք իրավական հասկացությունների բովանդակությունը, ինչպես նաև մասնավոր կյանքի հիմնական իրավունքի սահմանափակման հնարավոր այլընտրանքների բացակայությունը, այսինքն՝ դատարանը պատճառաբանված որոշմամբ պարտավոր է բավարարել որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են *արժանահավատ* և *բավարար* տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն *անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները* պարզելու համար, և դրանք *ողջամտորեն հնարավոր* այլ եղանակով *հնարավոր չէ* պարզել.

4) մինչդատական վարույթի հատուկ այս ընթացակարգի սահմաններում *դատարանը քրեական վարույթն իրականացնող մարմին չէ* (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 30-րդ կետ), հետևաբար, քննում է ոչ թե քրեական գործն ըստ էության, այլ բացառապես տվյալ պահին

օրենքով կանխորոշված նախապայմանների շրջանակներում իրականացվող քննչական միայն մեկ գործողության իրավաչափությունը, այն էլ՝ ոչ մրցակցային պայմաններում, քանի որ շահագրգիռ անձը չի մասնակցում համապատասխան միջնորդության քննարկմանը (Օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մաս):

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ, նախևառաջ, պարզ չէ օրենսդրի կողմից ընտրված մոտեցումը, որով Քրեական օրենսգրքի Հատուկ մասում սահմանված հանցագործությունների թվից առանձնացվել են միմյանց հետ որևէ ներքին տրամաբանական կապ չունեցող, իսկ առանձին դեպքերում նաև՝ ֆինանսական, կոռուպցիոն, ապահովագրական և արժեթղթերի ոլորտներին չառնչվող քրեորեն պատժելի արարքներ: Այս հանգամանքն ընդունել է նաև սույն գործով պատասխանողի ներկայացուցիչը Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի դատական նիստի ընթացքում տված իր բացատրությունում՝ նշելով, որ վիճարկվող իրավակարգավորման մեջ թվարկված հանցակազմերի ընտրության հիմքում առավելապես ընկած է եղել Հայաստանի Հանրապետության դատախազության հաշվետվությունը:

Բացի դրանից, ակնհայտ է, որ քրեական վարույթում որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձ կարող են լինել ոչ միայն Օրենսգրքի 6-րդ հոդվածի 32-րդ կետի իմաստով քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք, այլև ընդհանրապես *Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո գտնվող բոլոր այն անձինք, որոնք որևէ գործով չունեն կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ*: Քանի որ քրեական դատավարությունում կարգավիճակ չունենալը կանոն է, իսկ կարգավիճակ ունենալը՝ խիստ սակավ հանդիպող բացառություն, պարզ չէ, թե օրենսդիրը կասկածյալի կամ մեղադրյալի *կարգավիճակ չունենալը ինչպես է դիտարկել որպես կարգավիճակ կամ տարբերակող հատկանիշ*, որը, ի թիվս այլնի, հիմք է մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը սահմանափակելու համար: Այս կապակցությամբ ևս սույն գործով պատասխանողի ներկայացուցիչը Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի դատական նիստի ընթացքում տված իր բացատրությամբ ընդունում է, որ կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանց կապը քննվող հանցագործության հետ, ըստ էության, որևէ օբյեկտիվ չափանիշով որոշակիացված չէ:

Վերջապես, օրենսդիրը, օգտագործելով *մի շարք չորոշակիացված իրավական հասկացություններ*, ըստ էության, դատարանին պարտավորեցնում է դրանց միասնական գնահատման արդյունքում քննիչի միջնորդության վերաբերյալ կայացնել պատճառաբանված որոշում: Ընդ որում, եթե միջնորդությամբ ներկայացված տվյալների *արժանահավատ* և *բավարար* լինելը հնարավոր է ստուգել Օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ մասով և 283-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործիքակազմի միջոցով՝ միջնորդությունը հիմնավորող փաստաթղթերի և ապացույցների կամ բացատրությունների բովանդակության վերլուծությամբ (այսինքն՝ որոշակի առումով նյութականացված տեղեկատվության հիման վրա), ապա վիճարկվող իրավակարգավորումներից առնվազն պարզ չէ, թե դատարանն ինչ չափանիշներով պետք է գնահատի, որ հայցվող բանկային գաղտնիքով կամ այլ գաղտնի տեղեկություններով պարզման ենթակա հանգամանքները *գործով էական նշանակություն ունեն*, կամ ինչ օբյեկտիվացված հանգամանքից ելնելով պետք է եզրակացնի, որ դրանք հնարավոր չէ պարզել *ողջամտորեն հնարավոր* այլ եղանակով: Այլ կերպ վերոնշյալ հարցերի կապակցությամբ դատարանի իրավական դիրքորոշումները պետք է բացառապես կամ առավելապես հիմնված լինեն դատավորի սուբյեկտիվ ընկալումների և պատկերացումների վրա:

Հետևապես, թե հանցագործությունների, թե՛ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կրողների շրջանակի ընտրության և թե՛ քննիչի միջնորդության հիմնավորվածությունը ստուգելու համար նախատեսված օրենսդրական չափորոշիչների սահմանադրականությունն անհրաժեշտ է գնահատել որոշակիության սահմանադրական պահանջների վերլուծության հիման վրա, որից հետո անհրաժեշտ է անդրադառնալ վիճարկվող իրավակարգավորումների համապատասխանությանը համաչափության սահմանադրական սկզբունքին:

Սահմանադրական դատարանն իր բազում որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը: 2019 թվականի նոյեմբերի 15-ի իր ՄԴՈ-1488 որոշման մեջ հղում անելով մի շարք այլ որոշումների (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-851, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1148, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270, ՄԴՈ-1357, ՄԴՈ-1439, ՄԴՈ-1449, ՄԴՈ-1452, ՄԴՈ-1475), ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով իր նախորդող իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, գտել է, որ.

«...1) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,

3) որոշակիության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ոչ միայն Սահմանադրության 79-րդ հոդվածում՝ որպես հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող օրենքներին ներկայացվող բովանդակային պահանջ, այլև՝ որպես օրինականության սկզբունքի հիմնարար բաղադրիչ, ըստ որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուն լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին (Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն),

4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացվածության աստիճանը,

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկխոսություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարիությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն

այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը...»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ.

1) հանցագործությունների շրջանակը, որն օրենսդրի կողմից նախատեսվել է որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման պայման, այնպիսի ընտրության արդյունք է, որը չի հիմնավորվում սույն գործի նյութերից բխող որևէ օբյեկտիվ կամ ողջամիտ չափանիշով, իսկ քրեական գործ հարուցելու համար Օրենսգրքով բավականին ցածր ապացուցողական շեմ սահմանված լինելու (27-րդ և 175-րդ հոդվածներ) կամ ենթադրյալ հանցագործության նախնական ոչ ճիշտ որակման պայմաններում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանը չի կարող արդյունավետորեն երաշխավորել անձի հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, քանի որ իրավասու չէ ստուգել քրեական գործի հարուցման օրինականությունը և հիմնավորվածությունը.

2) քրեական վարույթի շրջանակներում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքով պաշտպանվող բանկային գաղտնիք կազմող և այլ գաղտնի տեղեկություններ քննիչի միջնորդության հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ ստանալը չի վերաբերում միայն քրեական դատավարությունում ներգրավված անձանց, ինչպես նաև օրենքով որևէ կերպ չի որոշակիացվում նրանց առնչակցությունը քննվող հանցագործությանը, ներառյալ՝ նրանց օբյեկտիվ կապը մեղադրանքի հիմքում դրված փաստերի կամ կոնկրետ քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների հետ (Օրենսգրքի 107-րդ հոդված).

3) մինչդատական վարույթում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման իրավաչափությունն ստուգելու ընթացակարգային առանձնահատկությունների ուժով չտիրապետելով քրեական գործի բոլոր նյութերին, չկարողանալով ճշտել որոշակի փաստեր կամ հանգամանքներ և ղեկավարվելով օրենքով նախանշված՝ խիստ ընդհանրական ու գնահատողական չափանիշներով՝ դատարանը չի կարող նաև օբյեկտիվորեն հիմնավորված հետևություն անել, թե արդյոք քննիչի միջնորդության մեջ

նշված այս կամ այն հանգամանքը «գործով էական նշանակություն ունեցող է», թե ոչ կամ եզրակացնել, թե արդյոք այն կարող էր պարզվել «ողջամտորեն հնարավոր այլ եղանակով», թե ոչ:

Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև պատասխանողի վկայակոչած տարբեր միջազգային հաստատությունների կողմից ներկայացվող պահանջներին, որոնցով փորձ է արվել հիմնավորել վիճարկվող իրավակարգավորումների անհրաժեշտությունը: Այս առումով ամփոփելով պատասխանողի բացատրության մեջ շարադրված փաստարկները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հասանելիության կապակցությամբ հենց միջազգային հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ներկայացվող պահանջներում առկա են հստակ չափորոշիչներ, որոնք վերաբերում են թե քննվող հանցագործությունների բնույթին, թե դրանց առնչվող սուբյեկտների շրջանակին և թե այլ էական պայմաններին: Այսպես.

1) Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության առաջարկության մեջ հստակ նշված է, որ անհրաժեշտության դեպքում իրավապահ մարմինների համար ֆինանսական տվյալները պետք է մատչելի լինեն *կոռուպցիոն հանցագործությունները բացահայտելու և քննելու նպատակով*, ինչպես նաև հստակեցված է, որ կասկածյալից ու մեղադրյալից բացի այլ անձանց, օրինակ՝ ընտանիքի անդամների կամ փոխկապակցված այլ անձանց ֆինանսական տվյալները կարող են մատչելի դարձվել, երբ *առկա են բավարար կասկածներ, որ նրանք մասնակցել, օժանդակել են հանցանքի կատարմանը կամ տեղյակ են եղել կատարված հանցանքի մասին, կամ երբ հիմքեր կան կասկածելու, որ գումարը տրամադրվել է կասկածյալի կողմից առանց որևէ իրավական հիմնավորման*.

2) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների կոմիտեի (MONEYVAL) զեկույցում ասված է, որ «կասկածյալ» կամ «մեղադրյալ» չհանդիսացող անձի վերաբերյալ բանկային գաղտնիք, արժեթղթերով կատարվող գործարքներին վերաբերող կամ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկատվությունը քննություն իրականացնող իրավասու մարմիններին պետք է հասանելի լինի *փողերի լվացման, դրան նախորդող փոխկապակցված հանցանքների և ահաբեկչության ֆինանսավորման գործերով*.

3) թեև Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական միության անդամ պետություն չէ, սակայն միջազգային այս կազմակերպության մարմինների կողմից ընդունված՝ պատասխանողի կողմից վկայակոչված հրահանգի նախաբանում, որպես հենքային գաղափար, շեշտվում է, որ «Եվրոպական քննչական հրամանը կարող է արձակվել բանկում կամ ցանկացած այլ բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատությունում *քրեական վարույթի սուբյեկտ հանդիսացող անձի կողմից բացված ցանկացած բնույթի հաշիվների վերաբերյալ ապացույց ստանալու նպատակով*» (ընդգծումները՝ Սահմանադրական դատարանի):

Հարկ է նշել, որ սույն գործով պատասխանողի ներկայացուցիչը Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի նիստի ընթացքում տված իր բացատրության մեջ ևս հաստատում է, որ հանցագործությունների շրջանակն ավելի լայն է սահմանված, քան դա պահանջում են Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունները՝ այդ իրողությունը պարզաբանելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Կենտրոնական բանկի մոտեցումներով առ այն, որ հանցագործությունների ընդլայնված շրջանակ նախատեսելու դեպքում խնդիրներ չեն առաջանա:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից որևէ դատավարական կարգավիճակ չունեցող և ենթադրյալ հանցագործության հետ որևէ առնչակցություն չունեցող անորոշ թվով անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակումը թե՛ հանցագործությունների ընտրության, թե՛ այդ անձանց շրջանակի, թե՛ հանցագործության հետ նրանց որևէ կապի իսպառ բացակայության և թե՛ դատարանին վերապահված ստուգման գործիքների խիստ ընդհանրական լինելու տեսանկյունից **չի համապատասխանում** Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված՝ օրենքով նախատեսված սահմանափակումների **բավարար որոշակիության** պահանջին:

4.4. Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը* (ընդգծումները՝ Սահմանադրական դատարանի):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման **նպատակի լեգիտիմությունը**, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) **պիտանիությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) **անհրաժեշտությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) **համարժեքությունը** սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է համաչափության սկզբունքին: Ամփոփելով իր մի շարք իրավական դիրքորոշումների էությունը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

1) համաչափության սկզբունքը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք), (ՄԴՈ-917),

2) «...ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանման... իր լիազորությունն իրականացնելիս *օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, ... օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է ... պատասխանատվության, ... պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է ... պատասխանատվության միջոցներն ու չափերը*: Նշված հարցերում *օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները*, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: ... Հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ *համաչափության ընդհանուր սկզբունքով...*» (ՄԴՈ-920),

3) «...Համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»:

«...Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից...» (ՄԴՈ-924),

4) «...այդչափ լայն սահմանափակումը ... բավարար չափով հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ...սահմանադրական իրավունքի ոչ համաչափ սահմանափակում է՝ Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի ...տեսանկյունից...» (ՄԴՈ-917),

5) «...օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար...» (ՄԴՈ-1293):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ *համաչափության սկզբունքը* Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված *իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչներից մեկն է*: 2015 թվականի փոփոխություններով (գործող) Սահմանադրության մեջ այն ամրագրվել է ամբողջ ծավալով՝ հստակորեն (*expressis verbis*):

Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների **սահմանափակումների սահմանափակումն է** մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի *առանձնահատուկ կարևորություն*:

Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի *սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է*, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ

նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, *ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:*

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է *պիտանի* լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով *օրենսդիրն ի գորու է հասնել հետապնդվող նպատակին*, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի *անհրաժեշտությունն է*, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված *պիտանի և անհրաժեշտ միջոցը* համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության *սահմանադրական նշանակության* հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնա-

կան իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ *չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի* նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնադրյունքում դա նշանակում է, որ **որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն**, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, **որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը:**

Ինչպես արդեն վերը նշվել է, Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման նպատակները, ըստ վիճարկվող իրավակարգավորումների բովանդակության, նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակներն են, այսինքն՝ մասնավոր անձին վերաբերող բանկային գաղտնիքի վերաբերյալ և այլ գաղտնի տեղեկություններ ստանալը հետապնդում է լեգիտիմ, այսինքն՝ *Սահմանադրությամբ սահմանված նպատակներ:*

Ինչ վերաբերում է միջոցների ընտրությանը, ապա, նախ օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է լինի *պիտանի*՝ այդ նպատակին հասնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը հիմնական իրավունք սահմանափակող *օրենքով ընտրված միջոցի պիտանիության* մասին է, ապա այն առաջին հերթին կախված է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների վերաբերող Սահմանադրության այլ պահանջներից, հատկապես՝ որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության հանգամանքից:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1488 որոշման մեջ իրավական դիրքորոշումներ է հայտնել նաև իրավական *որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքների համակարգային կապի* վերաբերյալ: Իր այդ որոշման մեջ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, օրենսդրական ձևակերպման անհստակությունը գնահատել է որպես կոնկրետ հիմնական իրավունքի սահմանափակման համաչափությունը երաշխավորելու համար պատշաճ նախադրյալների բացակայություն:

Բացի դրանից, վերը վկայակոչված մեկ այլ որոշման մեջ (ՄԴՈ-917) Սահմանադրական դատարանը լայն օրենսդրական սահմանափակումը՝ *առարկայական չափանիշներով բավարար չափով հիմնավորված չլինելու* պատճառաբանությամբ, գնահատել է որպես ոչ համաչափ:

Հարկ է նաև նշել, որ օրենսդրի կողմից ընտրված լուծումները *բացառում են* իրավաբանական, տվյալ դեպքում՝ *քրեական պատասխանատվության փոխկապակցումն իրավախախտում կատարած անձի, իրավախախտման բնույթի կամ ծանրության, ինչպես նաև որևէ այլ առարկայական հատկանիշի հետ*: Ընդհակառակը՝ այլ անձանց վերագրվող ենթադրյալ հանցագործությունների բացահայտումն օրենսդիրը նպատակային չի պայմանավորել ոչ այդ հանցագործությունների փաստի, ոչ էլ մեղադրյալների հետ որևէ առնչակցություն ունեցող մասնավոր անձանց հիմնական իրավունքի սահմանափակմամբ: Օրենսդիրն իր այդ մոտեցումը՝ համաչափության հիմնարար սկզբունքի պիտանիության բաղադրիչի առումով, պատճառաբանում է հանցագործությունների կանխմանը, խափանմանը կամ բացահայտմանն ուղղված «գործունեության ընթացքում անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներով», որոնք առկա են Քրեական դատավարության գործող օրենսգրքում, որով բանկային կամ այլ զաղտնիքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու սուբյեկտային կազմը էապես սահմանափակվում է: Օրենսդիրը *սուբյեկտային կազմի կտրուկ և էական ընդլայնումը* պատճառաբանում է, մի կողմից՝ հանցանք կատարած անձին ի հայտ բերելու անհրաժեշտությամբ այն դեպքերում, երբ հանցագործություն կատարած անձն անհայտ է, մյուս կողմից՝ հանցագործությունների բացահայտման անհրաժեշտությամբ այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործությունը կատարած անձը հայտնի է և ունի դատավարական կարգավիճակ, սակայն ենթադրյալ «հանցանքը կատարել է ոչ թե իր, այլ ուրիշ անձանց անվամբ բանկային ծառայություններից օգտվելու միջոցով»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ, նախ՝ այլ անձանց հետ որևէ առնչակցությամբ հանցանքի կատարումը կամ գոնե այդպիսի հանցանքի կատարման կապակցությամբ բավարար կասկածների առկայությունն արդեն իսկ օբյեկտիվացված, այսինքն՝ *առարկայական չափանիշ է*, որը թույլ է տալիս որոշակիացնել այն անձանց սուբյեկտային շրջանակը, որոնց մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել: Մակայն, չնայած պատասխանող կողմի՝

պատճառաբանման առերևույթ հնարավորություն ընձեռող նման մոտեցմանը, բուն վիճարկվող իրավակարգավորումներում առկա չէ որևէ առարկայական չափանիշ, որը հնարավորություն կտար որոշակիացնել հիմնական իրավունքի սահմանափակման ենթակա մասնավոր անձանց սուբյեկտային շրջանակը: Նման առարկայական չափանիշների ամրագրումը հենց օրենքում հնարավորություն կտար Սահմանադրական դատարանին արդեն բովանդակային առումով անդրադառնալ դրանց սահմանադրականությանը:

Ինչ վերաբերում է հանցագործությունների բացահայտման դժվարություններին, ապա, ինչպես արդեն նշվեց, որևէ կերպ պարզ չէ վիճարկվող իրավակարգավորումներով օրենսդրի կողմից այնպիսի հանցագործությունների շրջանակի ընտրությունը, որը դուրս է որևէ համակարգային տրամաբանությունից: Այսպես, առանց սուբյեկտային կազմի որևէ սահմանափակման օրենսդիրը բանկային և այլ գաղտնիքի բացահայտումը հավասարապես կարևորել է այնպիսի տարաբնույթ հանցագործություններով, ինչպիսիք են, օրինակ՝ *դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը* (Քրեական օրենսգրքի 112-րդ հոդված), *վաշխառությունը* (Քրեական օրենսգրքի 213-րդ հոդված), *ծովահենությունը* (Քրեական օրենսգրքի 220-րդ հոդված), *պոռնկությանը զբաղվելուն նպաստելը* (Քրեական օրենսգրքի 262-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն մոտեցումը, որ հանցագործությունների բացահայտման դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են առաջանալ սոսկ օրենսդրի կողմից առանձնացված հանցագործություններով: Ակնհայտ է, որ կախված տարբեր հանգամանքներից՝ նման խնդիրներ կարող են առաջանալ նաև այլ, եթե ոչ բոլոր հանցագործությունների բացահայտման կապակցությամբ: Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանցագործությունների կանխման կամ բացահայտման ենթադրյալ արդյունավետությունը՝ ի հաշիվ *կոնկրետ հանցագործության հետ աղերս չունեցող անորոշ թվով անձանց* (սուբյեկտային կազմի փաստացի բացակայությամբ) հիմնական իրավունքների սահմանափակման, ապահովելը կամ բարձրացնելը **պիտանի չէ հանցագործությունների կանխման կամ բացահայտման սահմանադրական նպատակներին հասնելու համար**: Հակառակ դեպքում հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը որպես սահմանափակման հիմք նախատեսող բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների կրողների համար՝ անկախ սուբյեկտային կազմից, հնարավոր կլինե՞ր օրենս-

դրոքեն ամրագրել նրանց իրավունքներին միջամտելու իրավական հնարավորություն՝ առանց առարկայական չափանիշների ամրագրման, այսինքն՝ առանց սահմանափակման անհրաժեշտության պատշաճ հիմնավորման:

Վերլուծելով վիճարկվող իրավակարգավորման հետ համադրելի՝ Օրենսգրքում սահմանված, ինչպես նաև այլ իրավադրոյթներ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակներով այս կամ այն հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման համար, որպես կանոն, անհրաժեշտ էական պայման է դիտարկում որոշակիացված սուբյեկտային կազմի հատկանիշը: Այսպես՝ դատարանի որոշմամբ կարող են վերահսկվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի ուղարկված կամ նրանց կողմից ստացվող նամակագրությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները (Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ հեռախոսային խոսակցությունները թույլատրվում է լսել, եթե կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել (Օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մաս): «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասն էլ նախատեսում է, որ ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ինչպես նաև ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման համար:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումներով օրենսդրի կողմից ընտրված հանցագործությունների ցանկը, ինչպես նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի կրողների սուբյեկտային կազմի անորոշությունը հանգեցնում են *սահմանափակման առարկայական հիմքերի բացակայության*, և **հակասում են Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված որոշակիության սկզբունքին**, իսկ դրանով նաև՝ **Սահմանադրության 78-րդ հոդվածում**

ամրագրված համաչափության սկզբունքին՝ օրենսդրորեն ընտրված միջոցի պիտանիության մասով:

4.5. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Իսկ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար *անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր*:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) *արդյունավետ իրականացման համար* (2) *անհրաժեշտ* (3) *կազմակերպական* (4) *կառուցակարգեր* և (5) *ընթացակարգեր*: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանն այս առումով հարկ է համարում առանձնացնել դատական պաշտպանության հիմնական իրավունքը՝ որպես օրենսդրի կողմից ուղղակիորեն (առանց կոլիզիոն սահմանադրական իրավունքով լեգիտիմացման) *սահմանափակման ոչ ենթակա հիմնական իրավունք*, որի ապահովումը պետք է աներկբայորեն երաշխավորված լինի մասնավոր կյանքի հիմնական իրավունքի սահմանափակումների կիրառման իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու համար:

Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ վիճարկվող իրավակարգավորմամբ բանկային գաղտնիք և այլ գաղտնի տեղեկություններ կարող են ստացվել բացառապես դատարանի նախնական համաձայնությամբ: Այս կառուցակարգն ինքնին երաշխիք է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՄԻԵԴ-ը, իր հերթին, ընդգծել է, որ գաղտնի դիտարկման միջոցառումների քննարկումն ու վերահսկողությունը կարող են գործարկվել երեք փու-

լերում. երբ այն թույլատրվում է սկզբում, դրա իրականացման ընթացքում կամ ավարտվելուց հետո: Ինչ վերաբերում է առաջին երկու փուլերին, ապա գաղտնի դիտարկման էությունը և տրամաբանությունը հուշում են, որ ոչ միայն դիտարկումը, այլև դրան վերաբերող քննարկումը պետք է իրականացվեն առանց անձի իմացության: Հետևաբար, քանի որ անձին անհրաժեշտաբար զրկում են իր կամքով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ օգտագործելու կամ որևէ վերահսկողական վարույթի անմիջականորեն մասնակցելու հնարավորությունից, կարևոր է, որ սահմանված ընթացակարգերն իրենք տրամադրեն անհատի իրավունքների պաշտպանության պատշաճ և համարժեք երաշխիքներ: Այն ոլորտում, որտեղ առանձին անձանց գործերով հեշտությամբ կարելի է ենթադրել հնարավոր չարաշահումներ, գաղտնի դիտարկումների իրականացման նկատմամբ վերահսկողությունն սկզբունքորեն ցանկալի է հանձնել դատավորին, քանի որ դատական վերահսկողությունն առաջարկում է անկախության, անկողմնակալության և պատշաճ ընթացակարգի լավագույն երաշխիքներ: Ինչ վերաբերում է երրորդ փուլին, ապա գաղտնի դիտարկման մասին հետագա ծանուցման հարցը սերտորեն կապված է դատարաններում իրականացվող իրավական պաշտպանության միջոցների արդյունավետության, հետևաբար, և վերահսկողական լիազորությունների չարաշահման դեմ գործունե երաշխիքների առկայության հետ: Սկզբունքորեն շահագրգիռ անձի համար դատարան դիմելու քիչ հնարավորություններ կան, եթե վերջինս չի ծանուցվել առանց իր գիտության իրականացված միջոցառումների մասին և այդպիսով ունի իրականացումից հետո դրանց օրինականությունը վիճարկելու հնարավորություն (տես Roman Zakharov v. Russia [GC], 04.12.2015, app. no. 47143/06, § 233-234):

Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով վիճարկվող իրավակարգավորումները և Քրեական դատավարության գործող օրենսգրքի վերաբերելի դրույթները՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ անձինք, որոնց վերաբերող բանկային գաղտնիքը և այլ գաղտնի տեղեկություններն ստացվել են դատարանի որոշմամբ, հնարավորություն չունեն վիճարկել այն, քանի որ ոչ վիճարկվող իրավակարգավորումներում, ոչ էլ հիշյալ օրենսգրքի այլ դրույթներում *առկա չէ նրանց ոչ նախնական, ոչ էլ հետագա ծանուցման կառուցակարգ կամ ընթացակարգ:*

Ինչ վերաբերում է պատասխանողի պնդումներին առ այն, որ անձինք, որոնց իրավունքները խախտվել են, կարող են օգտվել վի-

ճարկման ընդհանուր հնարավորություններից, ապա Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ.

1) Բանկային գաղտնիք կազմող կամ այլ գաղտնի տեղեկություններ ստանալու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից քննվում է առանց շահագրգիռ անձի մասնակցության (Օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մաս),

2) եթե շահագրգիռ անձն Օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կարգավիճակներից որևէ մեկը չունի, ապա նա իրավունք չունի նաև ծանոթանալ գործի նյութերի, հետևաբար, և իր մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը սահմանափակող դատական ակտի հետ,

3) Օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգը վերաբերում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների բողոքարկմանը, և դատական ակտերի բողոքարկման նկատմամբ կիրառելի չէ,

4) եթե շահագրգիռ անձը Օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ սուբյեկտ չէ, ապա նա գրկված է Բանկային գաղտնիք կամ այլ գաղտնի տեղեկություններ ստանալու վերաբերյալ դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից անգամ այն ստանալու դեպքում,

5) ոչ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքում, որում վիճարկվող իրավակարգավորմամբ լրացում է կատարվում, ոչ էլ Օրենսգրքի որևէ այլ դրույթով սահմանված չէ *ստանձին (հատուկ) ընթացակարգ*, որով անձը, որի մասնավոր կյանքի հիմնական իրավունքը սահմանափակվում է, կծանուցվեր այդ մասին կամ նրան կտրամադրվեր դատարանի համապատասխան որոշումը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պատասխանողի ներկայացուցչի բացատրությունում արձարժված այն պնդմանը, որ քննիչի միջնորդությունը կարող է վերաբերել ինչպես այն ներկայացնելու պահին առկա, այնպես էլ դատարանի համապատասխան որոշման կայացումից հետո ձևավորվող Բանկային գաղտնիքին կամ այլ գաղտնի տեղեկություններին: Եթե հիմնավոր կերպով ակնկալվում է, որ հայցվող տեղեկությունները գոյանալու են ապագայում, ապա շահագրգիռ անձին այդ ընթացակարգին չներգրավելը լիովին արդարացված է, քանզի հակառակ դեպքում հանցագործությունների

կանխման կամ բացահայտման նպատակներին հասնելու գաղտնի այս միջոցը կիրառվելու է հայցվող տեղեկությունների անցյալում ձևավորված լինելու դեպքերին, ապա ոչ մրցակցային պայմաններում, այսինքն առանց շահագրգիռ անձի մասնակցության, միջնորդության քննարկումն արդարացված չէ, քանի որ այդ դեպքում քրեական հետապնդման մարմնին հետաքրքրող տվյալներն արդեն առկա են բանկում կամ այլ ֆինանսական հաստատությունում, դրանք դուրս են շահագրգիռ անձի վերահսկողությունից, և նա չի կարող թաքցնել, փոխել կամ ոչնչացնել դրանք: Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման չտարբերակված իրավակարգավորմամբ որևէ իրավաչափ հանրային շահ չի պաշտպանվում, հետևաբար, այն հանգեցնում է անձի արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի և մրցակցության սկզբունքի չհիմնավորված սահմանափակման:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ վերոգրյալի առնչությամբ իր որոշումներից մեկում ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ, մասնավորապես, բանկային գաղտնիքի կապակցությամբ խուզարկությունը և ազդրավումը բողոքարկելու կամ դրա արդյունքները չեղարկելու հնարավորության բացակայության պատճառով դիմումատուի համար հասանելի չեն եղել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածի նպատակներից բխող «արդյունավետ վերանայումը» և «արդյունավետ վերահսկողությունը», որի իրավունքը քաղաքացիներն ունեն իրավունքի գերակայությանը համապատասխան, և որը կկարողանար սահմանափակել քննարկվող միջամտությունը նրանով, ինչն «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում» (տես՝ *M. N. And Others v. San Marino*, 07.07.2015, app. no. 28005/12, § 81-83):

Այսպիսով, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վիճարկվող իրավակարգավորումներով **խախտվում են Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջները**. վիճարկվող իրավակարգավորումներում և դրանք ամրագրող օրենքներում *ընդհանրապես առկա չեն կառուցակարգեր կամ ընթացակարգեր*, որոնք հնարավորություն կտան անձին իրազեկվել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իր հիմնական իրավունքին միջամտող որոշումների կամ գործողությունների մասին և պաշտպանվելու դրանցից պատշաճ դատավարական ընթացակարգերի շրջանակներում: Հետևապես՝ չնախատեսելով համապատասխան միջնորդությունը դատարան ներկայացնելու ժամանակ, դատարանի որոշման կայացումից,

ինչպես նաև համապատասխան քննչական գործողության կատարումից հետո մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի կրողներին իրենց իրավունքի սահմանափակման մասին ծանուցելու վերաբերյալ դրույթներ՝ **խախտվում է նաև** Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով քրեական դատավարությունում որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց **արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 73-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց:**

1. Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78 և 79-րդ հոդվածներին հակասող:

2. Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78 և 79-րդ հոդվածներին հակասող:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

18 հունիսի 2020 թվականի
ՍԴՈ-1546

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 16.09.2020թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

ՀՀ ՍԴ տեղեկագիրը
ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի
որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(98)2020
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(98)2020
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(98)2020